Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

839.815
И-58

114

ԱՆԴԷՐՍԸՆԻ

ՀԵՔԻՔԹԵՐԸ

904 ԹԻՖԼԻՍ

12 [illegible] 2013

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հրատարակութեամբ եւ խմբագրութեամբ

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

Այս վերնագրով հետզհետէ լոյս կը տեսնեն մեր խմբագրութեամբ և հրատարակութեամբ մի շարք երկասիրութիւններ — ինքնուրոյն և թարգմանական — ընդհանուր գրական, պատմական, փիլիսոփայական, բելլետրիստական-գեղարուեստական բովանդակութեամբ, հանրամատչելի ժողովրդական ձևով ու էժանագին։ Կը հրատարակուեն նաև գրքեր մանուկների ընթերցանութեան համար։

Հ. Ա.

Գրոց ցուցակի սերոյովքեանց
-6 NOV 2011
174

Հանրամատչելի Գրադարան

№ 1 Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ № 1

839.81 Ս.
Ա-57

ԱՆԴԷՐՍԸՆԻ ՀԷՔԻԱԹՆԵՐԸ

(ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒԷՐ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ)

35393

Հեղինակի պատկերով եւ կենսագրութեամբ

Թարգմանեց գրանս. Տ. Զաւէն

ԹԻՖԼԻՍ
Տպարան Գրաց Հր. Ընկ. ||| Типог. Груз. Изд. Т-во.
1904

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го декабря 1903 года.

ԱՆԴԷՐՍԸՆԻ

ՀԷՔԻԱԹՆԵՐԸ

Կաղանդի նուէր հայ երեխաներին



ԱՆԴԷՐՍԸՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԻԻԳ. ԱԼԲԵՐ
ՍԵԲՈՒԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻՆ

ԱՆԴԷՐՍԸՆ

Դանիական երկիրը մի փոքրիկ երկիր է. դանիական ազգը՝ մի փոքրիկ ազգ. բայց ազգերի մեծութիւնը չէ կարելի չափել միայն իրանց լեռների, դաշտերի, բլուրների և հովիտների ընդարձակութեամբ, ոչ էլ բնակիչների բազմամարդութեամբ, այլ նաև մտաւոր և բարոյական բարձրութիւնով, որին նրանք կարողացել են հասնել, այն հանճարներով, որոնց ըղխեցրել են իրանց ծոցից։ Անդերսընն՝ Դանիայի այն զաւակներից է, որոնք իրանց փոքրիկ ազգի, հայրենիքի մեծութիւնն են կերտել։ Բայց տեսնենք ինչ չարչարանքների, դառնութեան գնով.

«Ես ծնուել եմ 1805 թ. հոլանդական Ֆիոնեա կղզու Օդանսէ քաղաքում։ Իմ նախահայրերը հարուստ են եղել, բայց դժբաղդութիւնների և անաջող ձեռնարկութիւնների մի երկար շարքից յետոյ, նրանք կորցրել են իրանց ամբողջ կարողութիւնը և իրանց նախկին վիճակից մի տխուր յիշատակ է միայն մնացել։ Իմ տատը յաճախ պատմել է ինձ Գերմանիայի իր ազգականների մեծ հարստու-

թեան մասին, Ո՞րչափ սրտաճմլիկ էր, երբ նա խօսում էր իր երիտասարդութեան ուրախութիւնների մասին մեր աղքատ բնակարանում։ Հայրս՝ որ երեխայութեան օրերում տեսել էր բարեկեցութիւնը, յետոյ հարկադրուեց մի կօշկակարի մօտ աշակերտութիւն անելու և կօշկակար դառնալու։ Ամուսնանալու պահուն այնքան չքաւոր էր, որ անկարող եղաւ մի մահճակալ գնելու։ Մի հարուստ ազնուական նոր էր մեռել. նրա մարմինը ցուցադրեցին մի մահաբեմի վրայ, և քիչ յետոյ ժառանգորդները աճուրդով ծախեցին այն բոլորը՝ ինչ գործ էր ածուել նրա թաղման ժամանակ։ Հայրս իր խնայողութիւնների արդիւնքով մահաբեմի մի մասը գնեց հարսանեկան մահճակալի համար։ Ես դեռ ես յիշում եմ արդէն հնացած, մաշուած և մեղրամոմի արատներով խաղխղած մեծ, սեւ ծածկոյթները։

«Այդտեղ ծնայ ես։ Հայրս շարունակում էր արհեստը, որ երբեմն աջող, երբեմն անաջող էր գնում, նայելով՝ ժամանակին ու պահանջներին։ Մենք ապրում էինք համարեա թէ մշտական անձկութեան մէջ. բայց վերջապէս ապրում էինք։ Երեկոյեան՝ երբ ընթրելու ժամը գալիս էր, երբ մայրս սեղանի վրայ էր դնում մեր պարզ ճաշը, երբեմն վայելում էինք զուարթ ժամեր, որոնց չեմ կարող յիշել առանց յուզման։ Երբ աշխատելու հասակ առի, ինձ դրին մի գործարանում, ուր անցկացնում էի օրուայ մեծագոյն մասը։ Մնացած ժամերին գնում էի աղքատների դպրոցը

և կարդալ, գրել, հաշուել սովորում էի։ Մեր հարեւաններից մինը՝ որի հետ բարեկամացել էինք, ինձ մի քանի գրքեր փոխ տուեց։ Ես եռանդով կարդում էի ձեռք գցածս բոլոր կատակերգութիւնները, և նշանաւոր մարդկանց կենսագրութիւնները։ Այդ ընթերցումները իմ մէջ զարթնեցրին տարբերնակ զգայութիւններ։ Ձեռագործ բանուորի դրութիւնից վեր բարձրացրի աչքերս և ինձ թուաց, թէ ես էլ կարող էի մի նշանաւոր մարդ դառնալ։ Տասներկու տարեկան էի, երբ հայրս մեռաւ։ Մօրս հետ մենակ մնացի, և շարունակեցի աշխատել ու երազել։ Զայնս յայտնի էր իր մաքրութեամբ. յաճախ, երբ ես երգել էի դպրոցում, ուսուցիչը ինձ գովել էր և անցորդները կանգ էին առել ինձ լսելու համար։ Կատակերգութիւններից գլխաւոր կտորներ արտասանելու փորձեր կատարել էի նոյնպէս։ Եւ այն հարեւանները, որոնք այդ փորձերին ներկայ էին գտնուել, և տեսել էին շարժումներս և ձայնիս ելևէջները, հաստատում էին, որ դերասանութեան մեծ յարմարութիւններ ունեմ։ Խեղճ մայրս, որ իր ծնած քաղաքից երբէք դուրս չէր եկել, և որի միակ երազն էր ինձ մի պարկեշտ արհեստաւոր տեսնել, երբ լսեց թէ մտադիր եմ դերասան լինել՝ դառնապէս լացաւ։ Բայց ես յամառեցի որոշմանս մէջ։ Համբերութեամբ, չիլինկ առ չիլինկ, մի քիչ դրամ հաւաքեցի, և երբ մի օր իմ դրամարկղի փողն հաշուեցի, այնտեղ տասներեք ռիքստալեր (13 ռուբլու չափ) գտայ։ Դա մի ամբողջ, անսպառելի հարստութիւն թուաց

ինձ։ Այնուհետև մեկնելու մասին մի այն մտածեցի։ Մայրս զուր փորձեց ինձ արգելել։ Նա ասում էր, թէ մի գերձակի մօտ ինձ համար լաւ տեղ է ճարել։ Նրա կարծիքով՝ քիչ ժամանակուայ մէջ ես կարող կը լինէի այնքան վարձատրութիւն ստանալ, որ ապրուստս լիովին կը բաւէր։ Իսկ մի քանի տարուց յետոյ ես կը դառնայի առաջին գործաւոր, մի խալֆա. և աւելի յետոյ, ով գիտէ, գուցէ մի կատարեալ վարպետ։ Այս փայլուն ծրագիրները, որ շատ անգամ բարի մօրս սիրտը ուրախութիւնից տրոփեցնել էին տուել, ինձ չէին հրապուրում։ Տասնըչորս տարեկան էի, մենակ, ու ոչ ոքին էի ճանաչում, որ պաշտպան կանգնէր ինձ։ Մի ներքին ձայն ինձ ասում էր, թէ պէտք է մեկնել։ Մայրս ինձ թոյլատրութիւն տալուց առաջ, որը ես թախանձագին խնդրում էի, ուզեց մի վերջին փորձ անել։ Մեր բնակած քաղաքում մի պառաւ կին կար, որ իր մոգական գիտութեամբ շրջակայքում հռչակ էր հանել։ Նա մեր Կուսացի Սիպիլն էր, մեր գուշակուհին։ Թէպէտև Օգանոէի բարի քրիստոնեաները նրա վրայ նայում էին այնպէս, իբրև մի կախարդուհու վրայ, բայց ամէն մարդ դիմում էր նրան, ամէն մարդ խօսում էր նրա մասին մի տեսակ պատկառանքով, որովհետև նա կարող էր ապագան գուշակել խաղաթղթի և խորհրդաւոր ոգումների միջոցով, որոնցից ոչ ոք ոչինչ չէր հասկանում։ Նա կանխագուշակում էր, թէ այս կամ այն երիտասարդ աղջիկը Երբ պէտք է ամուսնանայ։ Ծերունիներին ասում էր, թէ Երբ

պէտք է ձմեռը վերջանայ և հունձքը որ աստիճան աճող պիտի լինի։ Մայրս նրանից խնդրեց, որ հաճի իր այցելութեամբ մեզ պատուել։ Երբ նրա գալը տեսաւ, բռնեց նրա ձեռքից, իր անկողնու եզերքին նստացրեց և իր ամենագեղեցիկ թասով սուրճ հրամցրեց։ Յետոյ նրան բացատրեց իմ դրութիւնը և խորհուրդ խնդրեց։ Մոգուհին իր ակնոցները դրաւ իր քթի ծայրին, բռնեց իմ ձախ ձեռքը, ուշադրութեամբ դիտեց, յետոյ նորից բռնեց ձեռքս, նորից դիտեց և մի հանդիսաւոր ձայնով յայտնեց, թէ մի օր Օգանսէում լուսավորութիւն պիտի կատարուէր ի պատիւ ինձ։

«Գուշակի այս խօսքերը իմ մօր բոլոր երկիւղները ցրեցին։ Նա տուաւ ինձ իր օրհնութիւնը, ու ես մեկնեցայ։ Ոգևորութեամբ ողջունեցի իմ առաջ տարածուող արգաւանդ դաշտերը և ծովը՝ որ երևում էր հեռուից։ Բայց, երբ Բէլտեան երկրորդ նեղուցից անցայ, ափի վրայ ծնրադրեցի, լացի և աղաչեցի Աստուծուց, որ ինձ անպաշտպան չթողնէ։ Տասներեք ռիքստալերը գրպանումս, և ամբողջ բեռներս մի թաչկինակում՝ մտայ կոպէնհակ։ Պատահած առաջին պանդոկն իջևանեցի, և որովհետև գործնական կեանքի բոլորովին անծանօթ էի, պանդոկում պահանջեցի ինչ որ ցանկանում էի։ Մի քանի օրից յետոյ կերծանուել էի. գրպանումս մի ռիքստալէր միայն կար։ Թատրոնի տնօրէնին ներկայացայ, բայց տեսնելով թէ չատ երիտասարդ եմ ու չատ անփորձ, նոյն իսկ հարցաքննելու չդիմեց և պատասխանեց, թէ չէի

կարող թատրոն մտնել, որովհետև շատ նիհար էի։ Ժամանակ էր վերջապէս ապրուստի միջոց ճարելու. բայց ինչպէս անել, ինչ անել. ժամերով ընկայ մտածողութեան մէջ։ Մի առաւօտ, պատահմամբ լսեցի, թէ մի դերձակի աշակերտ էր հարկաւոր։ Գնայ նրան. նա ինձ փորձեց և գործ տուեց։ Բայց ափսոս, հազիւ մի քանի ժամ մնացել էի խանութում, երբ սարսափելի կերպով տխրեցայ և ձանձրացայ։ Արուեստագէտի բոլոր երազները, որոնց ապրուստի անողոք պահանջը թմրեցրել էր, զարթնեցին իրար ետևից։ Դերձակին դարձրի ինձ յանձնած ասեղը և փողոց նետուեցի իր ազատութիւնը գտնող մի գերիի հրճուանքով։ Այնուհետև շուտով հասկացայ, թէ բանաստեղծական բոլոր քմահաճոյքներս Կոպենհակի հիւրանոցներում մի ամենաչնչին տեղ անգամ չէին կարող հայթայթել ինձ։ Պէտք է որ մի գործ, մի պաշտօն գտնէի և աշխատէի ապրելու համար։ Մինչդեռ այս մտորումներով Սամակերտովի երկանքին մոլորուած դընում էի, յանկարծ յիշեցի, թէ Օգանեսում յաճախ էին գովել իմ ձայնը։ Եւ ինձ թուաց, որ ես պէտք է ջանայի անպատճառ օգտվել այդ երկնային տուրքից։ Անմիջապէս գնացի, երաժշտութեան նշանաւոր պրոֆէսոր Սիբօնիի տան դուռը բաղխեցի։ Դուռը բացող ծառային միամտօրէն պատմեցի իմ ամբողջ պատմութիւնը և յոյսերը։ Նա հաւատարմօրէն հաղորդեց իմ պատմութիւնը իր տիրոջ, և ես ներսից ծիծաղի բարձրաձայն քրքիջներ լսեցի։ Այդ օրը Սիբօնին ճաշի էր հրաւիրել բազմա-

թիւ անձերի, ի մէջ այլոց երգահան՝ կոմպոզիտոր Վէյսին և բանաստեղծ Բագդեզընին։ Ամենքը ցանկացին տեսնել այդ տարօրինակ ճանապարհորդին, որ գալիս էր հեռուից բաղդ փնտռելու, և ինձ ներս մտցրին։ Վէյս ձեռքիցս բռնեց, Բագդեզընը ժպտալով այտերիս խանդաղատագին խփեց և փոքրիկ բաղդախնդիր անուանեց ինձ։ Սիբօնի, երգելս լսելուց յետոյ, վճռեց ինձ երաժշտութիւն սովորեցնել և մտցնել Օպէրա։ Արբչութեամբ դուրս եկայ տնից։ Արուեստագէտի բոլոր երազները վերջապէս պիտի իրականանային։ Կեանքը իմ առաջ բացուում էր ծաղկազարդ պսակներով և ներդաշնակ երգերով։ Հետևեալ օրը, Վէյս՝ որ իր բարեկամների մէջ մի փոքրիկ հանգանակութիւն էր արել, եօթանասուն ռիքսդալեր բերաւ ինձ, խորհուրդ տուաւ լրջօրէն աշխատել, և մի պարկեշտ ընտանիքում բնակուել։ Բայց ես մի վատ բնակարան ընկայ։ Այնտեղ երկար չը մնացի։ Եւ մի օր կորցրի իմ ձայնն ու բոլոր յոյսերը։ Սիբօնին ուզում էր, որ ես Օգանեսի վերադառնամ, բայց ես կամենում էի մնալ և դերասան լինել։ Մտայ թատրոնի պարի դպրոցը, մասնակցեցի մի քանի պարախաղերի (բալետ)։ Շատ ձախորդ կերպով կատարում էի իմ դերը, աւազ, ու խնդճ, դժբաղդ էի։ Ամսական 10 ֆրանկից աւելի չէի շահում, և ձմեռուայ սառնակաչունչ օդերին կոտաւեայ անդրավարդիկ էի հագնում։ Բայց միշտ յոյս ունէի, որ ձայնս պիտի բացուէր։ Ես անպատճառ

ուզում էի դերասան դառնալ. երբ վերադառնում էի իմ խղճուկ բնակավայրս, ինձ տաքացնելու համար փաթաթվում էի վերմակիս մէջ. կարդում և կրկնում էի կատակերգութիւնից վերցրած դերեր։ Այդ ժամանակ, երեխայական ամբողջ անմեղութիւնը, տգիտութիւնն ու միամիտ աւելորդապաշտութիւններն ունէի։ Ես լսել էի, թէ ինչ որ անում էին յունվարի 1-ին, ընդհանրապէս մի և նոյն բանը կանէին ամբողջ տարուայ ընթացքում։ Մտածեցի որ, եթէ յունվարի 1-ին կարողանայի բեմ բարձրանալ, դա ամբողջ տարուայ համար լաւ նշան կը լինէր։ Կաղանդի օրը, մինչդեռ բոլոր կառքերը անց ու դարձ էին անում փողոցներում, մինչդեռ ազգականները գնում էին տեսնելու իրանց ազգականներին, ու բարեկամները՝ իրանց բարեկամներին, ես մի ծածուկ դռնից սողոսկեցի Թատրոնի նրբանցքի մէջ ու առաջացայ դէպի բեմ։ Բայց, նոյն րոպէին, թշուառութեանս զգացումը այն աստիճան ինձ ճնշեց, որ փոխանակ պատրաստած ճառս արտասանելու, ծունր դրի և լալագին Հայր մեր ասացի։

«Բաղդս պէտք է ժպտէր սակայն։ Ալեզարդ բանաստեղծ Գուլդբերգը խանդաղատել էր ինձ վրայ։ Նոր հրապարակ հանած իր մի գրքի արդիւնքը ինձ նուիրեց։ Հրաւիրելով իր մօտ, ինձ յանձնարարեց կրթիչ գրքեր կարդալ, յետոյ գրել ու փորձեր անել։ Իմ նախնական կրթութիւնը թերի էր. ես իմ լեզուի քերականութեան կանոններն անգամ չը գիտէի. բայց երբ ուզեցի շարադրութեան փորձեր անել, մի ողբերգութիւն գրեցի։ Գուլդբերգ կարդաց, և գրչի մի հարուածով դատապարտեց։ Անմիջապէս աշխատել սկսեցի և ութ օրուայ ընթացքում մի ուրիշ ողբերգութիւն գրեցի և թատերական յանձնաժողովին ուղղեցի։ Քիչ ժամանակ յետոյ, պ. Կոլլէն՝ Թատրոնի տնօրէնը՝ հրաւիրեց ինձ և ասաց, որ իմ ողբերգութիւնը թէև չի ներկայացնուի, բայց նրանից պարզ երևում էր, որ ես գրելու շնորհքից զուրկ չէի։ Այս պատճառով էլ նա ինձ համար կառավարական մի թոշակ էր ստացել, որ պէս զի ուսումս շարունակեմ քաղաքի գիմնազիայում։

«Այդ վայրկեանից սկսած՝ մտայ լուրջ կեանքի մէջ։ Ստանում էի այն ուսումը, որին կարիք ունէի, և որով պիտի դնէի իմ ապագայի խարիսխները։ Մինչև այդ, կեանքս անուտոյդ էր և անհիմն. ես պիտի գնայի այժմ մի աւելի հաստատ ուղիով։ Այդ հանկացայ ու պ. Կոլլէնի շնորհակալութիւն յայտնեցի խորին երախտագիտութեամբ։ Բայց, գիմնազիայում անցկացրած ժամանակս՝ ամենից ճնշող մասն է կազմում կեանքիս։ Երբէք ես այդքան չեմ տառապել, երբէք ես այդքան չեմ լացել։ Տասնվինը տարեկան էի, ու սկսում էի ուսումս տասը տարեկան երեխաների հետ, որոնց մէջ ես ոչ ընկեր և ոչ բարեկամ կարող էի գտնել։ Ես մենակ ապրում էի, ուսումնարանի վարիչի բնակարանում։ Ու այդ

մարդը՝ ասես, մասնաւորապէս աշխատում էր՝ ինձ նուաստացնելու, ինձ զգայնել տալու օրուայ ամեն ժամին, աղքատութեանս ու մենակութեանս ծանրութիւնը։ Իրան յանձնուած մի անպաշտպան որբի հետ այդ աստիճան բարբարոսութեամբ վարուած լինելու համար, թող Աստծուց գտնի։ Ես նրան վաղուց եմ ներել, և յիշում եմ առանց բարկութեան ու առանց ատելութեան, այն բոլոր անկարելի բաները, ինչ նա արել է ինձ. նա մինչև անգամ ինձ փնտռել տուաւ ձմեռուայ այն օրերը, երբ ես ամսական վեց ֆրանկ էի միայն ստանում, երբ ես կրակ չունէի տաքանալու համար, զգեստ չունէի մերկութիւնս ծածկելու համար։

«Վերջապէս փորձութեան այդ ժամանակները անցան։ Քննութիւններս տուի գոհացուցիչ կերպով։ Մտայ Կոպէնհակի համալսարանը ու լաւագոյն ուսանողներից մինը եղայ։ Մի քանի բանաստեղծութիւններ հրատարակել էի, որոնց մասին խօսուեց։ Բազմաթիւ նշանաւոր անձնաւորութիւններ ինձ հովանաւորեցին։ Բազմաթիւ ընտանիքներ իմ առաջ բացուեցին։ Շարունակեցի ուսումս հանգստութեամբ, ուրախութեամբ։ Ես չը գիտէի դեռ ես, թէ նրանք ինձ ուր պիտի առաջնորդէին. բայց ես զարգանալու, սովորելու պէտք էի զգում։ Երբ աւարտեցի, Էօհլէնշլօկէր, Էօրսդէտ, Ինկէման ինձ թագաւորին յանձնարարեցին։ Նրանց միջնորդութեամբ ստացայ ինչ որ մենք անուանում ենք reise stipendium—ճանապարհորդավարձ, ճանապարհածախս։ 1833—1834 թ. այցելեցի Գերմանիա, Զուեցերիա, Ֆրանսիա, Իտալիա, ուսումնասիրելով այցելած երկրներիս լեզուն, բարքերը, բանաստեղծութիւնը։ Այժմ ես Կոպէնհակ քաղաքացի եմ։ Ո՛չ պաշտօն ունեմ, ոչ կենսաթոշակ. ես գրում եմ մի լեզուով, որ քիչ է տարածուած և քիչ ընթերցողներ ունի։ Բայց ուշ կամ վաղ, գրած վէպերս սպառուում են և Ռէտցէլ՝ գրավաճառս ինձ վճարում է կանոնաւորապէս։ Ցաճախ, երբ Նիհաւնի սենեակս զարդարող սիրուն վարագոյրներն ու ինձ շրջապատող գրքերն եմ դիտում, ես ինձ մի իշխանից աւելի հարուստ եմ կարծում։ Փառք Նախախնամութեան այն ճանապարհներին համար, որով ինձ առաջնորդեց և այն բաղդին համար, որին ինձ արժանացրեց»։

Այսպէս էր պատմում երիտասարդ Անդէրսըն՝ մի ֆրանսիացի գրողի Կոպէնհակում։

Այնուհետև Անդէրսըն մեծ ճանապարհ է կտրել. մի քանի տարուայ ընթացքում գրել է այնպիսի գործեր, որ նրան հռչակաւոր են դարձրել ոչ միայն իր հայրենիքում, այլ ամբողջ աշխարհում։ Անդէրսըն ընդհանրապէս ծանօթ է, իբրև պատմող, հէքիաթներ գրող։ Բայց նա ունի մանկական հէքիաթներից զատ՝ վէպեր, բանաստեղծութիւններ, թատերական այլ և այլ գրուածներ, ինչպէս դրամա, վոդեվիլ, կոմէդիա, ճանապարհորդական տպաւորութիւններ, վերջապէս մի ամբողջ գրականութիւն։

Իր գլուխ-գործոցը՝ հէքիաթներն են, որոնք աշխարհիս ամեն լեզուներով թարգմանուած են, որոնցից մի քանի հատ հայերէն։ Մենք՝ կատարելով այդ թարգմանութիւնը ֆրանսերէնից, բաց թողեցինք մի քանի հէքիաթներ, որոնք գուցէ նոյնքան հետաքրքրութեամբ չը կարդացուէին հայ երեխաների կողմից։ Կարդացէք և պիտի սիրէք Անդերսընին, որովհետև նա տառապել է։ Նրա ծիծաղի տակ պահուած է արցունքը։

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԻԿԸ ԵՒ ԼՈՒՑԿԻՆԵՐԸ

Օդը ցուրտ էր։ Ձիւն էր գալիս և գիշերը հեռու չէր։ Տարուայ վերջին երեկոն էր, կաղանդի նախընթաց օրը։ Մի խեղճ, փոքրիկ աղջիկ՝ գլխաբաց և բոբիկ՝ այդ ցրտի և մթութեան մէջ, փողոցից անցաւ։ Նա՝ ճիշդ է, տնից դուրս գալու ժամանակ հողաթափներ ունէր, բայց նրանք երկար ժամանակ նրա ոտքին չը մնացին։ Մեծ հողաթափներ էին, որ իր մայրը գործ էր ածել արդէն, այնքան մեծ, որ փոքրիկը՝ երկու կառքի մէջտեղ մնալով՝ փողոցի մի կողմից միւսը շտապագին անցնելիս նրանց կորցրեց։ Հողաթափներից մինը իսկապէս կորաւ, գալով միւսին՝ մի չարաճճի նրան յափշտակեց տարաւ, իր փոքրիկ երեխային օրօրոց շինելու դիտաւորութեամբ, երբ երկինքը նրան մի երեխայ պարգևէր։

ՅՍ·393

Փոքրիկ աղջիկը քայլում էր (փոքրիկ) բոբիկ ոտներով, որոնք կարմրել և կապտել էին ցրտից։ Նա իր հին գոգնոցի մէջ մեծ բանակութեամբ լուցկի ունէր, և ձեռքին կրում էր լուցկու մի ամբողջ ծրար։ Այդ օրը՝ նրա համար մի վատ օր էր, որովհետև ոչ ոք նրա լուցկիներից չէր գնել, և նա կոպէկ անդամ չունէր։ Նա շատ էր քաղցած, շատ մրսած էր և շատ խղճալի կերպարանք ունէր։ Խեղճ փոքրիկ։ Ձիւնի բուլանները թափւում էին նրա երկար, խարտեաշ մազերի վրայ, որոնք նրա վզի շուրջը սիրուն խոպոպներ էին կազմում։ Բայց նա չէր էլ խորհում իր խոպոպ մազերի մասին։ Պատուհանները լոյսից շողշողում էին. խորովածների հոտը փողոցը լեցրել էր։ Նոր Տարի՛ նախորդ գիշերը—ահա նա ինչի՛ մասին էր մտածում։

Երկու տների մէջտեղում, նա նստեց և կուչ եկաւ։ Ցուրտը հետզհետէ նրա ոսկորների ծուծն էր թափանցում, բայց նա չէր համարձակւում տուն վերադառնալ, որովհետև նա մի տուփ լուցկի անդամ չէր ծախել, և անկարող պիտի լինէր ոչ մի կոպէկ տուն տանելու։ Հայրը նրան պիտի ծեծէր,

և յետոյ իրանց տանն էլ նոյնչափ ցուրտ էր որչափ փողոցում։ Նրանք վերնայարկում էին բնակւում, թէպէտ տան խոշոր ծակերը դարմանով և փալասով խցել էին, բայց քամին դարձեալ ներս էր մտնում։ Իր փոքրիկ ձեռքերը ցրտից թմրել, դրեթէ սառել էին։ Ա՜խտա՛ս։ Եթէ մի փոքրիկ լուցկի վառէր նրանց տաքացնելու համար. եթէ համարձակուէր ծրարից մի տուփ, միայն մի տուփ հանելու և մի լուցկի պատին քսելով իր մատները տաքացնելու... Նա չկարողացաւ համբերել, վերցրեց մի լուցկի... չքրքի՛ կ... ինչպէս բռնկուեց, նա մի տաք և պայծառ լոյս արձակեց։ Փոքրիկը ձեռքը նրա վրայ բռնեց։ Ի՜նչ տարօրինակ լոյս էր։ Փոքրիկ աղջկան թուաց, թէ նստել էր փայլուն կափարիչով ծածկուած երկաթեայ մի մեծ վառարանի առաջ, որտեղից կրակը հիանալի կերպով ցոլցլում էր և տաքացնում։ Բայց ի՜նչ պատահեց։ Փոքրիկն իր ոտքերը երկարում էր նրանց էլ տաքացնելու համար, երբ բոցը մարեց, վառարանն անհետացաւ։ Նա նստել էր վառուած լուցկու մի ծայր ձեռքում։

Նա քսեց մի երկրորդ լուցկի, որ վա-

ռուեց, որ փայլեց և պատի վրայ այնտեղ, ուր լոյսի ճաճանչն ընկաւ, շղարշի նման թափանցիկ դարձաւ։ Փոքրիկին թուաց, թէ նշմարում էր մի սենեակ, որի մէջտեղում դրուած էր սեղանը՝ սպիտակ ծածկոցով, և յախճապակեայ շլացուցիչ անօթներով։ Սեղանի վրայ տապակած մի սադ կար, որից բուրում էր մի ախորժելի հոտ։ Ո՞վ անակնկալ, ո՞վ երջանկութիւն։ Ճանկարծ, սադը՝ պատառաքաղը և դանակը կռնակին խրած՝ պնակից թռաւ և ընկաւ տախտակամածի վրայ, ուղիղ խեղճ աղջկայ առաջ։ Լուցկին մարեց և նա իր առաջ ցցուած տեսաւ միայն թանձր և ցուրտ պատը։

Նա վառեց մի երրորդ լուցկի։ Ու անմիջապէս, մէկ էլ տեսաւ, որ նստել է մի շքեղ տօնածառի տակ։ Այդ տօնածառը շատ աւելի հարուստ և մեծ էր, քան այն, որ տեսել էր, անցեալ տարի, մի հարուստ վաճառականի խանութում ապակեայ դռնից։ Կանաչ ճիւղերի վրայ բիւրաւոր մոմեր էին վառուում, և դոյնզդոյն պատկերներ, նման այն պատկերներին, որ զարդարում են վաճառականների պատուհանները,

կարծես ժպտում էին նրան։ Փոքրիկը երկու ձեռքերը բարձրացրեց։ Լուցկին մարեց։ Տօնածառի բոլոր մոմերը բարձրանում էին, բարձրանում; և նա նկատեց շուտով, որ նրանք աստղեր էին։

Նրանցից մէկը վայր ընկաւ, և երկնքի վրայ թողեց մի երկար, լուսաւոր գիծ։

«Մէկը մեռաւ» ասաց փոքրիկը, որովհետև նրա պառաւ տատը, որը՝ միայն, բարի էր եղել նրա համար, և որը չը կար այլ ևս, նրան յաճախ կրկնում էր. «Երբ մի աստղ վայր է ընկնում, իմացիր, որ մի հոգի բարձրանում է առ Աստուած»։

Նա դարձեալ մի լուցկի վառեց. նրա շուրջը լուսաւորուեց ցերեկուայ նման և այդ լոյսի մէջ տեսաւ իր տատին՝ կանգնած իր առաջ ժպտադէմ և շողշողուն։

«Տա՛տ, գոչեց փոքրիկը, տա՛ր ինձ։ Երբ լուցկին մարի, գիտեմ որ դու այստեղ չես լինի, դու էլ կանհետանաս, ինչպէս երկաթեայ վառարանը, ինչպէս տապակած սադը, ինչպէս գեղեցիկ տօնածառը»։

Նա արագութեամբ վառեց ծրարի մնացորդը, որովհետև ուզում էր անպատճառ

տատին իր մոտ պահել, և լուցկիները ցե-
ղեկուանից աւելի մեծ լոյս տարածեցին։

Ոչ մի ժամանակ իր տատը այդչափ
մեծ և այդչափ գեղեցիկ չէր եղել։ Նա

փոքրիկ աղջկան առաւ իր բազուկների մէջ,
և երկուսը միասին ուրախ զուարթ, լոյսի
միջից թռան, վեր, վեր, այնչափ բարձր,
այնչափ բարձր, ուր ոչ ցուրտ, ոչ քաղց և

ոչ էլ վիշտ կար։ Նրանք Աստուծու մոտ էին։

Բայց, երբ սառը առաւօտը ծագեց,
փոքրիկ աղջիկը՝ այտերը բոլորովին կար-
մրած, ժպիտը շրթներին, երկու տների
մէջտեղ, անկիւնում նստել էր... մեռած,
մեռած ցրտից, տարուայ վերջին դիշերը։

Նոր-Տարին ծագեց փոքրիկի մարմնի
վրայ, նստած այնտեղ, լուցկիների մէջտեղ,
որոնց մի ծրարը գրեթէ ամբողջապէս վա-
ռուել էր։ «Նա ուզեցել է տաքանալ», ա-
սաց մի անցորդ։ Բայց արար-աշխարհ ան-
գիտացաւ այն գեղեցիկ բաները, որոնց
նա տեսել էր, և ոչ ոք իմացաւ, թէ ինչ
շքեղութեան միջով նա մտել էր իր պառաւ
տատի հետ Նոր-Տարին։

ՍԻՍԵՌԻ ՎՐԱՑ ՊԱՌԿՈՂ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Կար մի անգամ մի իշխան, որ ուզում էր ամուսնանալ մի իշխանուհու հետ, բայց մի իսկական իշխանուհու հետ։ Նա աշխարհը շրջեցաւ նրան գտնելու համար։ Իրաւ, պատահեցաւ շատ իշխանուհիների, բայց չէր կարողանում վստահ լինել, նրանց հարազատութեան մասին։ Միշտ նրանց վրայ գտնում էր մի ինչ-որ բան, որ կասկած էր ներշնչում։ Հետևաբար, տրտում, տխուր վերադարձաւ։

Մի գիշեր, օդը սարսափելի էր. կայծակները իրար խաչաձևում էին, երկինքը գոռում էր ու հեղեղի նման անձրև էր դալիս։ Ահռելի բան էր։ Մէկը դղեակի դուռը բաղխեց, ու ծեր թագաւորը շտապեց, դուռը բացաւ։

Դա մի իշխանուհի էր։ Բայց, Տէր

Աստուած, որքան անճանաչելի էր դարձել նա անձրևից և փոթորկից։ Նրա մազերի և զգեստների վրայից ջուրը կաթկթում էր, կօշիկների ծակից ներս էր մտնում և կըրունկից դուրս էր հոսում։ Այնուհանդերձ նա իրան ցոյց տուեց իբրև մի իսկական իշխանուհի։

«Մենք շուտով կարող ենք հասկանալ թէ ինչ է նա» մտածեց պառաւած թագուհին։ Ու առանց ձայն հանելու, մտաւ ննջասենեակ, վերցրեց մահճակալի բոլոր դէօշէկները ու վերմակները և նրանց տակ դրեց մի սիսեռ։ Յետոյ դէօշէկների վրայ քսան դէօշէկ էլ աւելացրեց։ Իշխանուհին այդտեղ պառկեց։ Հետևեալ առաւօտ նըներան հարցրին թէ ինչպէս էր անցկացրել գիշերը։

—Շատ վատ, պատասխանեց։ Ամբողջ գիշերը աչքերս գրեթէ չը փակեցի. չը գիտեմ ինչ կար անկողնի տակ, մի ինչ-որ կարծր բան, որ բոլորովին կապտացրեց մարմնս։ Ի՞նչ տանջանք, Աստուած իմ։

Այս պատասխանից հասկացան, որ նա մի ճշմարիտ իշխանուհի էր, քանի որ քսանից աւելի դէօշէկների տակից մինչև ան-

դամ մի սիսեռի կարծրութիւնը զգացել էր։ Բացի մի իշխանուհուց, ուրիշ ով կարող էր այդչափ նուրբ մորթ ունենալ։

Իշխանը՝ լաւ համոզուելով, որ նա մի ճշմարիտ իշխանուհի էր, կնութեան առաւ նրան։

Ահաւասիկ մի պատմութիւն, որը նոյնքան ճշմարիտ է, որքան իշխանուհին։

ՀՐԵՇՏԱԿԸ

«Ամեն անգամ, երբ մի բարի երեխայ մեռնում է, մի հրեշտակ իջնում է երկիր, առնում է երեխային իր բազուկների մէջ, բաց է անում իր լայն թեւերը և սաւառնում է դէպի այն տեղերը, որոնց սիրել է երեխան և քաղում է մի բուռ ծաղիկ։ Յետոյ երկուսը միասին այդ ծաղիկները տանում են բարի Աստուծուն, որպէս զի նրանց ծաղկեցնէ երկնքում, աւելի գեղեցիկ, քան երկրի վրայ։ Բարի Աստուած իր սրտին է սեղմում բոլոր ծաղիկները և մի համբոյր դրոշմում է այն ծաղկի վրայ, որը ամենից աւելի հաւանում է։ Այդ համբոյրը նրան կեանք ու ձայն է պարգևում, և նա մտնում է զուարթնոց խմբի մէջ»։

Ահա ինչ էր պատմում Աստուծոյ կողմից երկիր ուղարկուած մի հրեշտակ, որը

եկել էր վախճանած մի երեխայի երկինք փոխադրելու։ Եւ երեխան լսում էր, որպէս երազի մէջ։ Ու նրանք սաւառնում էին այն տեղերի վրայ, ուր փոքրիկը խաղացել էր— հիանալի ծաղիկներով զարդարուած մի պարտէզի վրայ։

—Ո՞ր ծաղիկները տանենք մեզ հետ երկինք, հարցրեց հրեշտակը երեխային։

Նրանց մօտ կար մի հրաշալի վարդենի։ Բայց մի չար ձեռք կոտրել էր նրան բունից։ Նորափթիթ կոկոններով ծանրաբեռնուած ճիւղերը վայր էին կախուել ու կամաց կամաց չորանում էին։

—Խե՜ղճ վարդենի, վերցրէք ահա այս, որպէս զի վերը, Աստուծոյ մօտ, նորից ծաղկի, ասաց երեխան։

Հրեշտակը վեր առաւ վարդենին ու մի և նոյն ժամանակ համբուրեց երեխային։ Փոքրիկը կիսով չափ բացաւ իր աչքերը։ Նրանք այլ այլ տեղերից ուրիշ դեղեցիկ ծաղիկներ էլ քաղեցին։

—Այժմ մենք բաւական ծաղիկ ունենք, ասաց երեխան։

Հրեշտակը՝ հաւանութեան մի նշան արեց, բայց նրանք դեռ ևս չը պացան դէ-

պի երկինք։ Գիշեր էր արդէն. ամեն տեղ տիրում էր խոր լռութիւն։ Նրանք անցնում էին մի փոքր, մռայլ և նեղ փողոցով, ուր կեղտոտ դարմանի, մոխիրի և աւելածութիւնից առաջ եկած աղբի մի

դեզ կար։ Մի ընտանիք՝ տնից մի ուրիշ տուն փոխադրուած լինելով՝ փողոցը լիքն էր ջարդուած պնակներով, դաճեայ արձանիկների բեկորներով և պատառոտուն ցընցոտիներով, որոնք անհաճոյ տեսարան էին պարզում։

Հրեշտակը, այդ անպէտք իրեղէնների մէջ երեխային ցոյց տուաւ մի ծաղկամանի բեկորները։ Թաղարը կոտրուած լինելով՝ նրա միջից դուրս ընկել էր հողի կոյտը, որին կպած էր իր արմատով՝ դաշտային մի մեծ, թոչնաձ ծաղիկ։

—Այս էլ վերցնենք, ասաց հրեշտակը. ճանապարհին ես կը պատմեմ թէ ինչու։

Նրանք բարձրացան օդի մէջ և հրեշտակը սկսեց իր պատմութիւնը։

«Այնտեղ, հեռուն, այդ մռայլ փողոցում, մի աղքատիկ խրճիթի մէջ բնակւում էր մի խեղճ, փոքրիկ, հիւանդ երեխայ։ Նա իր մանկութեան օրից հիւանդ պառկել էր։ Երբեմն, երբ երեխան իրան լաւ էր զգում, կռնատակին դրած ցուպերով սենեակին մէջ մաղ էր դալիս։ Այդ էր իր ամբողջ զբօսանքը։ Ամառը, երբ արեգակի ճառագայթները երբեմն, երբեմն լուսաւորում էին այդ մռայլ բնակարանը, այն ժամանակ այդ փոքրիկ երեխան արևի տակ տաքանում էր և իր փափուկ, նիհար մատներ մէջ պտոյտ եկող կարմիր արիւնը դիտելով՝ ասում էր. «Այսօր, փառք Աստուծոյ, ես կարողացայ վեր կենալ»։ Նա՝ անտառի հիանալի բուսականութիւնը երբէք չէր տեսել։ Մի օր հարևանի որդին նրան, կաղամախիի մի ճիւղ բերաւ։ Նա այդ ճիւղը բռնում էր իր գլխի վրայ և այնպէս էր կարծում, թէ հանդչել է բարձր ծառերի տակ, որի միջից աղօտ փայլում է արեւելեգակը, և որի վրայ բիւրաւոր թռչնիկներ երգում են զմայլելի կերպով։

Հարևանի որդին, դարնան մէջ, դաշտի մի քանի ծաղիկներ էլ բերաւ, որոնց մինը պատահմամբ արմատ ունէր։ Նա այդ ծաղիկը տնկեց մի թաղարի մէջ, դրաւ պատուհանի առաջ, անկողնու մօտ։ Բարեբաղդաբար ծաղիկն աճեց, ճիւղեր արձակեց և ամեն տարի նոր ծաղիկներ արտադրեց։ Դա՝ հիւանդ երեխայի պարտէզն էր, նրա միակ գանձը՝ այս աշխարհի վրայ։ Երեխան իր ծաղիկը ջրում էր, խնամում էր և թաղարը դնում էր միշտ այնպիսի ձևով՝ որ արեգակի ճառագայթները լուսամուտից խրփէին ուղղակի նրան։ Այսպէս ծաղիկը, ամեն օր զարգանում էր և գեղեցկանում։ Նա ծաղկում էր միմիայն հիւանդի համար. նրա համար և տարածում էր իր բուրմունքը։ Երբ բարի Աստուածն երեխային իր մօտ կանչեց, նա մեռնելուց առաջ կռացաւ դէ-

պի ծաղիկը և վերջին անգամ համբուրեց։ Մի տարի է արդէն, որ երեխան Աստուծոյ մօտ է, ու մի տարի է, որ ծաղիկը պատուհանի եզերքին անխնամ մնաով չորացաւ։ Տնից փոխադրուելու օրը ծաղկամանը նետեցին փողոցի աղտեղութիւնների մէջ, ու ահա այդ խեղճ, թառամած ծաղիկն էր, որ մենք հաւաքեցինք, որովհետև նա շատ աւելի մեծ հաճոյք պատճառեց իր տիրոջ, քան թագաւորական պարտէզի մի շքեղ ծաղիկ։

Բայց դու ի՞նչպէս դիտես այդ բոլորը, հարցրեց երեխան։

—Դիտեմ, պատասխանեց հրեշտակը, որովհետև ես էի այն հիւանդ փոքրիկ երեխան, որ կռնատակին փայտեր դրած բայլում էր։ Ես լաւ եմ ճանաչում իմ ծաղիկը։

Ու երեխան՝ բաց անելով ամբողջապէս իր աչքերը, հրեշտակի շողշողուն ու վսեմ դէմքը դիտեց։ Հասել էին արդէն. նրանք մտան Դրախտ, ուր ուրախութիւնն և երջանկութիւնը յաւիտենական են։ Երբ, բարի Աստուած՝ մեռած երեխային սեղմեց իր կրծքին, նրան՝ միւս հրեշտակի նման թե-

ւեր բուսան, և, նրանք իրար ձեռքից բռնելով՝ միասին սաւառնեցին երթերի մէջ։ Բարի Աստուած՝ իր կրծքին սեղմեց նոյնպէս բոլոր ծաղիկներին. նա՝ մանաւորաբար մի համբոյր դրոշմեց դաշտի խեղճ, թառամած ծաղկին, ու անմիջապէս ծաղիկը խօսելու կարողութիւն ստացաւ և Ամենակալի շուրջը պար կազմող, երջանիկ ու անմահ հրեշտակների հետ երգեց։ Այո, նրանք ամենքը փառաբանում էին ու երգում։ Երգում էին մեծ ու փոքր, և՛ օրհնուած, բարի երեխան, և՛ դաշտի խեղճ, թառամած ծաղիկը, որին՝ նետել էին նեղ ու մռայլ փողոցում, աղտեղութիւնների մէջ։

Ի ՅԻՇ ՍՈՒՆ
ՍԵՐՈՒԹՅԱՆ-ՀԱՅՈՑ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՎԻՆ

ՄԵԾ ԴՈՒՔՍԻ ՆՈՐ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ

Կար մի անգամ մի Մեծ-Դուքս, որը այնքան շատ էր սիրում նոր հագուստները, որ իր ամբողջ փողը մսխում էր արդուզարդի համար։ Զօրքերը աչքէ անցկացնելիս, Թատրոն գնալու կամ զբօսնելու ժամանակ, նրա միակ մտածումն էր իր նոր հագուստները ցոյց տալ։ Օրուայ իւրաքանչիւր ժամին հագուստները փոխում էր։ Ինչպէս որ մի Թագաւորի համար ասում են. «Արքան խորհրդարանում խորհրդի նստած է», այնպէս էլ նրա համար միշտ ասում էին. «Մեծ-Դուքսն իր զգեստասենեակումն է, հագուստները փոխելու զբաղուած է»։ Մայրաքաղաքը՝ մի շատ զուարթ քաղաք էր, որովհետև մեծ Թուով օտարականներ էին այցելում։ Բայց, մի օր, երկու խաբեբայ մարդիկ եկան, և այնպէս հաւատացրին, որ նրանք ջուլհակ էին, և կարող էին գործել աշխարհի ամենահրաշալի կերպասը։ Այդ կերպասի ոչ միայն գոյները և նկարները աննման էին, այլ և նրանից պատրաստուած հագուստները մի հրաշալի յատկութիւն ունէին—նրանք անտեսանելի էին դառնում այն անձերին, որոնք իրանց պաշտօնը լաւ չէին կատարում կամ հեռատես չէին։

«Օ՜հ, դրանք անգին հագուստներ լինելու են, խորհեց Մեծ-Դուքսը, երբ լսեց հրաշագործ կերպասի մասին. նրանց շնորհիւ ես կարող կը լինեմ իմ անպէտք, անշնորհք պաշտօնեաներին ճանաչել. ես կը կարողանամ որոշել ճարպիկները՝ անփորձներից։ Այո՛, այդ կերպասը անհրաժեշտ է»։

Յետոյ նա երկու խաբեբաներին յանձնեց մի մեծ գումար, որպէս զի անմիջապէս աշխատանքի սկսեն.

Երկու կեղծ ջուլհակները իսկապէս երկու ոստայն (դէզդեահ) սարքեցին և այնպէս ձևացրին, որպէս թէ գործում էին, թէպէտև մաքոքների մէջ թել չը կար, բացարձակապէս դատարկ էին։ Նրանք Դըքսից անդադար նուրբ մետաքս և փայլուն ոսկի էին պահանջում, և բոլորը դնում էին

իրանց պարկի մէջ։ Բայց մինչև կէս գիշեր աշխատում էին դատարկ ոստայնների առաջ։

—Տեսնենք, որքան են դործել, ինքն իրան ասաց Մեծ-Դուքսը։

Բայց նրա սիրտը ճմլում էր, երբ մըտածում էր, թէ իրանց պաշտօնը կատարելու անկարող ու անփորձ անձերը չը պիտի կարողանային կերպասը տեսնել և հիանալ։ Ի հարկէ կասկած անդամ չունէր, որ ինքը փորձուած և կարող էր, բայց և այնպէս իրանից առաջ յարմար դատեց ուղարկել մէկին՝ դործի որչափ յառաջացած լինելը իմանալու համար։ Քաղաքի բոլոր բնակիչները դիտէին արդէն դործող կերպասի հիանալի յատկութիւնը, և ամենքը անհամբերութիւնից այրւում էին դիտնալու համար, թէ ո՞ր աստիճան անհեռատես ու անկարող էր իրանց հարևանը։

«Լաւ կը լինի, եթէ իմ ծեր, բարի նախարարիս ուղարկեմ ջուլհակների մօտ, մտածեց Մեծ-Դուքսը. ամենից աւելի նա կարող է դատել կերպասը. նա նշանաւոր է թէ իր խելացութեամբ և թէ ճարպիկութեամբ»։

Ծերունի, պարկեշտ նախարարը մտաւ

այն սրահը, որտեղ երկու խարդախները աշխատում էին դատարկ ոստայնների առաջ։ «Տէր Աստուած, մտածեց նա, աչքերը մեծ մեծ բանալով, ես ոչինչ չեմ տեսնում»։ Բայց մի բառ անդամ չասաց, որ բան չէր տեսել։

Երկու ջուլհակները խորհուրդ տուին, որ աւելի մօտենայ, և յետոյ հարցրին, թէ ինչպէս է դտնում նա նկարները և դոյները։ Ծերունի նախարարը հայեացքը ոստայնների վրայ սևեռեց, բայց դարձեալ ոչինչ չը տեսաւ, այն պարզ պատճառով, որ ոչինչ չը կար։

«Տէր Աստուած, մտածեց նա, չը լինի թէ ես իսկապէս անկարող եմ ու անպէտք, քանի որ չեմ տեսնում կերպասը։ Բայց աշխատենք, որ իմ մասին չը կասկածեն։ Ես չեմ համարձակում խոստովանել, թէ կերպասը ինձ անտեսանելի է»։

—Հը՞, լաւ, ինչպէս էք դտնում կերպասը, հարցրեց ջուլհակներից մինը։

—Հիանալի՜ է, պարզապէս հիանալի՜, պատասխանեց նախարարը ակնոցները դնելով։ Մէկ մտիկ տուէք այս դոյներին և այս

բանուածքին... Այո, կասեմ Մեծ-Դքսին, որ շատ գոհ մնացի։

—Այդ մի բարեբաղդութիւն է մեզ համար, ասացին ջուլհակները, և սկսեցին նրան ցոյց տալ երևակայական գոյներ և նկարներ։

Ծեր նախարարը մեծ ուշադրութեամբ լսեց, որպէս զի նրանց բոլոր բացատրութիւնները կրկնի Մեծ-Դքսի առաջ։ Խաբեբաները անդադար արծաթ, մետաքս և ոսկի էին պահանջում ու բոլորը գրպանում։

Բայց շարունակում էին նրանք գործել դատարկ ոստանների առաջ։

Քիչ ժամանակից յետոյ, Մեծ-Դուքսը մի ուրիշ պարկեշտ պաշտօնեայ ուղարկեց կերպասը քննելու և տեսնելու համար, որ չէր վերջացել արդեօք։

Այս նոր պատգամաւորին էլ պատահեց այն՝ ինչ որ պատահել էր նախարարին։ Նա միշտ դիտում էր, հա դիտում էր, բայց ոչինչ չէր տեսնում։

—Հիանալի է բանուածքը, չէ՞, հարցրին երկու խաբեբաները՝ ցոյց տալով և բացատրելով այն հոյակապ նկարները և գեղեցիկ գոյները, որոնք գոյութիւն չունէին։

«Զը լինի թէ ես անշնորհք եմ, մտածում էր մարդը և անկարող՝ իմ պաշտօնը կատարելու. ա՛յ տարօրինակ բան, բայց պէտք է աշխատել, որ պաշտօնը ձեռքից չը փախցնենք»։

Յետոյ նա գովեց կերպասը, և իր բուռը հիացումը յայտնեց գոյների և նկարների ընտրութեան համար։

—Անբաղդատելի կերպով գեղեցիկ է, ասաց նա, Մեծ-Դուքսի մօտ վերադառնալով։

Ամբողջ քաղաքը այնուհետև այդ տարօրինակ կերպասի մասին էր խօսում։

Վերջապէս, Մեծ-Դուքսը կամեցաւ անձամբ տեսնել կերպասը, երբ նա տակաւին ոստայնի վրայ էր։ Ընտրուած մարդկանց մի շքախմբով, որոնց մէջ էին և՛ պարկեշտ նախարարը, և՛ պարկեշտ պաշտօնեան, նա գնաց ճարպիկ դողերի մօտ, որոնք գործում էին, միշտ գործում էին առանց մեռաքսեայ, ոսկեայ կամ որ և է թելի։

—Հրաշալի՞ է, չէ՞, ասացին երկու պարկեշտ պաշտօնեաները։ Նկարները և գոյները կատարելապէս արժանի են Ձերդ Բարձրութեան, և նրանք մատով ցոյց տուին դատարկ ոստայնը։

«Այս ինչ բան է, մտածեց Մեծ-Դուքսը, ոչինչ չեմ տեսնում։ Սարսափելի՞ է։ Արդեօք ես մի անպէտք մարդ եմ։ արդեօք անկարող եմ կառավարելու։ Սրանից աւելի մեծ դժբաղդութիւն չէր կարող պատահել ինձ»։ Յետոյ յանկարծ նա գոչեց.

—Հիանալի՞ է։ Ես ձեզ յայտնում եմ իմ ամբողջ գոհունակութիւնը։

Նա գլուխը շարժեց գոհ կերպարանքով, և ոստայնը դիտեց առանց ճշմարտու-

թիւնը ասել համարձակելու։ Հերթով իր հետևորդներն էլ դիտեցին, բայց ոչինչ չը տեսան։ Բայց նրանք կրկնում էին, ինչպէս Մեծ-Դուքսը։

—Հիանալի՞ է։

Նրանք նոյն իսկ խորհուրդ տուին, հագնել նոր զգեստները՝ յառաջիկայ մեծ տօնի առիթով։

—Հիանալի՞ է, սքանչելի՞ է, զմայլելի՞ է, բացագանչում էին բոլոր բերանները։ Գոհունակութիւնը ընդհանուր էր։

Երկու խաբեբաները՝ իբրև վարձատրութիւն, պատուանշան և աղնուականի տիտղոս ստացան։

Նրանք տօնի նախորդ գիշերն ամբողջապէս հսկեցին և աշխատեցան տասնուվեց մոմի լոյսով։ Նրանց չարաչար աշխատանքը ամենքին յայտնի էր։ Վերջապէս ջուլհակները յայտարարեցին, թէ կերպասը պատրաստ էր։ Այնուհետև մեծ մկրատներով հագուստները օդի մէջ ձևեցին, առանց թելի մի ասեղով կարեցին, և յայտնեցին, թէ ամեն ինչ վերջացած էր։

Մեծ-Դուքսը՝ իր թիկնապահների հետ նոր հագուստները քննեց։ Խաբեբաները՝ զգեստ-

ները իբրև թէ օդի մէջ բարձրացնելով՝ գոչեցին.

—Ահաւասիկ տաքատը (պանտալոն), ահաւասիկ բաճկոնը, ահաւասիկ վերարկուն: Օդի նման թեթև են, այնքան թեթև, որ դուք նրանց ծանրութիւնն անգամ չէք զգար: Ահա ինչի մէջ է կայանում այս կերպասի թանկագին յատկութիւնը:

—Անկասկած, պատասխանեցին թիկնապահները, բայց ոչինչ չէին տեսնում, որովհետև ոչինչ չը կար:

—Եթէ Ձերդ Բարձրութիւնը բարեհաճի հանուել, ասացին խաբեբաները, մենք մեծ հայելու առաջ կը փորձենք նրա նոր հագուստները:

Մեծ-Դուքսը հանուեց, և խաբեբաները այնպէս ձևացրին, իբրև թէ հագուստները իրար հետևից նրա վրայ փորձում էին:

Մեծ-Դուքսը հայելու առաջ շուռ եկաւ ու շուռ եկաւ:

—Աստուած իմ, ինչ էլ լաւ յարմարեցաւ: Ինչ նկարները, ինչ գոյները, ինչ թանկագին, բարեձև հագուստ, աղաղակեցին բոլոր պալատականները:

Արարողապետը ներս մտաւ.

—Ամպհովանին՝ որի տակ Ձերդ Բարձրութիւնը պէտք է ներկայ լինի թափօրին՝ դրան առաջ պատրաստ է, ասաց նա:

—Լաւ, անմիջապէս, պատասխանեց Մեծ-Դուքսը: Այս հագուստներով վատ չեմ, այնպէս չէ՞:

Արարողապետը խորը գլուխ տուաւ:

Մեծ-Դուքսը՝ յետ դառնալով՝ մի ան-

գամ էլ հայելու մէջ դիտեց իր հագուստի շքեղութիւնը։

Այն սենեկապանները՝ որոնց պաշտօնն էր Դքսի հագուստի երկար տտունը բարձրացնել, ծռեցին և իբր թէ գետնից մի բան վերցրին. յետոյ իրանց ալ ձեռքը օդի մէջ առկախ 'բռնած՝ հետևեցին Մեծ-Դքսին, որովհետև չէին ուզում խոստովանել, որ ոչինչ չէին տեսնում։

Մինչդեռ Մեծ-Դուքսը՝ իր շքեղ ամպհովանու տակ, հպարտութեամբ առաջանում էր, փողոցում և պատուհաններում գտնուող բոլոր մարդիկը աղաղակում էին.

—Ի՜նչ բարեձև, ի՜նչ փառաւոր հագուստ. տեսէք, տտունը տեսէք, որքան երկար է, որքան շնորհալի։

Ոչ ոք ուզում էր ցոյց տալ, թէ բան չէր տեսնում, որովհետև այն ժամանակ, նա կը համարուէր մի անկարող մարդ, մի անշնորհ արարած՝ որ ոչ մի գործի պէտք չի դար։ Դրա համար էլ Մեծ-Դքսի հագուստները երբէք այդչափ հիացում չէին պատճառել։

—Ինձ թւում է սակայն, որ Մեծ-Դուքսը ամենևին զգեստ չի կրում, նկատեց

մի փոքրիկ երեխայ։

—Տէր Աստուած, այս անմեղ երեխային լսեցէք, ասաց հայրը. ու խսկոյն և եթ ամբոխի մէջ շշնջացին։

—Մի երեխայ կայ, որ ասում է թէ Մեծ-Դուքսը ամենևին զգեստ չի կրում։

—Ամենևին զգեստ չի կրում, աղաղակեց վերջապէս ամբողջ ժողովուրդը։

Մեծ-Դուքսը չափազանց վիրաւորուեց, որովհետև զգում էր, որ ժողովուրդն իրաւունք ունէր։ Այնուհանդերձ նա խորհրդածեց և հետևեալ վճիռն արձակեց։

—Ինչ որ էլ լինի, պէտք է որ ես թափօրի մինչև վերջը մնամ։

Յետոյ նա գոռոզաբար ուղղեց իր հասակը, և սենեկապանները շարունակեցին յարգանքով վեր բարձրացնել նրա հագուստի տտունը, որ գոյութիւն չունէր։

ՓՈՔՐԻԿ ԿԼՕՍՆ ՈՒ ՄԵԾ ԿԼՕՍԸ

Մի քաղաքում ապրում էին երկու մարդիկ, որոնց անունն էր Կլոս։ Նրանցից մինը չորս ձի ունէր, իսկ միւսը՝ միայն մէկ ձի։ Այս պատճառով էլ նրանց զանազանելու համար, առաջինը կոչում էին մեծ Կլոս, իսկ երկրորդը փոքրիկ Կլոս։ Լսեցէք այժմ, թէ ինչ պատահեց նրանց, որովհետև սա մի իսկական պատմութիւն է։

Ամբողջ շաբաթուայ մէջ փոքրիկ Կլոսը ստիպուած էր մեծ Կլոսի արտը վարել և նրան փոխ տալ իր մէկ հատ ձին. իսկ փոխադարձաբար մեծ Կլոսը իր չորս ձիերով օգնում էր փոքրիկ Կլոսին շաբաթը մի անգամ, այսինքն կիրակի օրերը միայն։ Շրա՞խ, ինչպէ՞ս փոքրիկ Կլոսը իր մարակը շաչեցնում էր հինգ ձիերի գլխին վերև։ Նա կարծում էր, թէ բոլոր ձիերը իրանն են։ Արե-

դակը հիանալի կերպով փայլում էր։ Զանդակները ժողովրդին եկեղեցի էին հրաւիրում։ Տղամարդիկ և կանայք՝ իրանց կիրակնօրեայ դեղեցիկ զգեստներով անցնում էին փոքրիկ Կլոսի առաջից, որը զուարթօրէն հերկում էր երկիր և մարակը շաչեցնում էր աղաղակելով.

—Դէ՛հ, վարեցէք իմ ձիեր։

—Իմ ձիեր մի՛ ասա, գոռաց նրա վրայ մեծ Կլոսը, ձիերի միայն մինը քոնն է։

Բայց փոքրիկ Կլոսը շուտով մոռացաւ պատուէրը, և մի քանի անձերի անցկենալը տեսնելով, անկարող եղաւ իրան զսպելու և նորից աղաղակեց.

—Դէ՛հ, վարեցէք, իմ ձիեր։

—Վերջին անգամ ասում եմ քեզ, որ այլ ևս այդ խօսքերը չը կրկնես։ Եթէ դարձեալ կրկնես, ձիուդ ճակատին մի այնպիսի ուժեղ հարուած կը տամ, որ շանսատակ կը հանեմ։

—Էլ չեմ ասի, պատասխանեց փոքրիկ Կլոս։

Բայց, երբ մօտիցը դարձեալ մարդիկ անցնելով գլխով բարևեցին, նա մեծ բաւականութիւն զգաց և հպարտանալով, որ իր

դաշտը հինգ ձիով է հերկում՝ շաչեցրեց մտրակը աղաղակելով.

—Դէ՛հ, վարեցէք իմ ձիեր։

—Հիմա «դէ՛հ, վարեցէք, իմ ձիեր»ը քեզ ցոյց կը տամ, ասաց մեծ Կլօս ու մի լախտ վերցնելով՝ այնպիսի ուժգին հարուած տուաւ փոքրիկ Կլօսի ձիու ճակատին, որ ձին վայր ընկաւ ու հոգին փչեց։

Նրա տէրն սկսեց լալ ու ողբալ։ Ցետոյ մեռած կենդանու կաշին քերթեց, քամիի դիմաց չորացրեց, մի պարկի մէջ դրաւ և քաղաք գնաց ծախելու։

Ճանապարհը երկար էր։ Պէտք էր անցնել մի մեծ անտառի միջից։ Օդը սարսափելի կերպով վատ էր։ Փոքրիկ Կլօս ճանապարհը կորցրեց։ Գիշերը վրայ հասած լինելով՝ ստիպուեց քաղաք վերադառնալու մտքից հրաժարուել։

Ճանապարհի մօտ կար մի մեծ ագարակ. թէպէտև պատուհանի արտաքին փեղկերը փակուած էին, բայց նրանց միջից լոյս էր երևում։ «Գուցէ կարողանամ գիշերն այստեղ անցկացնել», մտածեց նա, և գնաց դուռը բաղխեց։

Կինը բաց արեց։ Բայց, երբ իմացաւ

թէ գիշերել էր ուզում։

—Ամուսինս տանը չէ՛, հետևաբար ոչ մի օտարի չեմ կարող ընդունել. ճանապարհդ շարունակիր, պատասխանեց կինը և դուռը նրա երեսին փակեց։

—Լաւ, ես էլ դուրսը կը պառկեմ, ասաց փոքրիկ Կլօս։

Տանը կողքին մի ամբարանոց կար, որի տանիքի վրայ չոր խոտ էր դիզուած։ «Ահա այնտեղ կը պառկեմ, մտածեց փոքրիկ Կլօս, անկողինը փափուկ է և արագիլը սրունքներս չի խածներ»։

Տանիքի վրայ կար և մի արագիլի բոյն, որի մօտ թառել էր արագիլը։

Ամբարանոցի վրայ մագլցեց և պառկեց։ Քնելու համար նա մի քանի անգամ շուռ եկաւ. տան պատուհանի փեղկերը լաւ փակուած չը լինելով՝ նա կարող էր տեսնել ինչ որ կատարւում էր սենեակում։ Սկսեց դիտել։ Սենեակի մէջտեղում դրած էր մի մեծ սեղան, որի վրայ զետեղել էին տապակած միս, ձուկ և գինու բազմաթիւ շիշեր։ Գեղջկուհին և տիրացուն՝ ուրախ զուարթ սեղանի շուրջը պպզած՝ քէֆ էին անում։

«Որքան երջանիկ են», մտածեց փոքրիկ Կլոս։ Ու գլուխն երկարացրեց, որպէս զի լաւ տեսնէ։ Կինը մի համեղ կարկանդակ մէջտեղ բերաւ։ «Աստուած իմ, ի՞նչ խնճոյք» մտածեց փոքրիկ Կլոս։

Ցանկարծ մի ձիաւոր տանը մօտեցաւ։ Կնոջ ամուսինն էր, որ տուն էր վերադառնում։

Ամենքը նրան յարգում էին, որովհետև աղնիւ մարդ էր։ Միայն թէ նա մի տարօրինակ հիւանդութիւն ունէր. տիրացուին տեսնելիս սաստիկ բարկանում էր։ Այդ բանը գիտէր տիրացուն, հետևաբար ամուսնու բացակայութեան առիթից օգտուելով՝ այցելեց նրա կնոջ։ Բարեսիրտ կինը նրան պատուելու համար, մի համեղ ճաշ էր սարքել։ Երբ կինը, իր ամուսնու վերադարձի աղմուկը լսեց, անախորժութիւններից խոյս տալու համար խնդրեց հիւրից, որպէս զի անմիջապէս թաղնուի մի մեծ պարապ արկղի մէջ։ Տիրացուն յօժարութեամբ կատարեց կնոջ խնդիրքը։ Կինը՝ մի ակնթարթում կերակուրները և գինին փռան մէջ կոխեց, որպէս զի ամուսինը ոչինչ չիմանայ։

—Մեղք, հառաչեց փոքրիկ Կլոս՝ կարկանդակի անհետանալը տեսնելով։

—Ո՞վ կայ վերևում, պոռաց գիւղացին, Կլոսի հանած աղմուկը լսելով։

—Ի՞նչու այդտեղ ես պառկել, հարցրեց գիւղացին։

Փոքրիկ Կլոս ասաց, թէ ճանապարհը կորցրել էր և գիշերն անցկացնելու համար ասպնջականութիւն խնդրեց նրանից։

—Յօժարութեամբ, պատասխանեց գիւղացին. բայց նախ մի կտոր բան ուտենք։

Կինը երկուսին էլ սիրալիր կերպով ընդունեց. նորից սեղանը պատրաստեց և նրանց հրամցրեց, մի խոշոր ամանով բրնձեայ կերակուր։ Գիւղացին քաղցած էր, հետևաբար մեծ ախորժակով կերաւ։ Բայց փոքրիկ Կլոսը փռան մէջ պահուած համեղ կարկանդակի, տապակած մսի և գինու մասին էր խորհում։ Նա սեղանի տակ էր նետել ձիու մորթին պարունակող պարկը։ Եւ որովհետև նա երբէք չէր սիրում բրինձը, ոտքով կոխեց պարկի վրայ և չոր կաշին ճարճատեց։

«Սուս» արեց Կլոս պարկին, որպէս թէ մէկին ուզէր լռեցնել։ Բայց քիչ յետոյ ա-

ելի ուժով կոխեց կաշու վրայ և կրկին ճարճատեցրեց։

—Էդ ինչ կայ պարկում, հարցրեց գիւղացին։

—Մի վհուկ, պատասխանեց Կլօս. նա չի ուզում, որ մենք բրինձ ուտենք։ Ինձ ասում է, որ կախարդութեամբ մեզ համար փռան մէջ դրել է տապակած միս, ձուկ և կարկանդակ։

—Անկարելի՞ է այդ, բացականչեց գիւղացին։ Բայց անմիջապէս թռաւ դէպի փուռը, բացաւ դռնակը և այնտեղ գտաւ այն հիանալի կերակուրները, որ իր կինը թագցրել էր։ Նա կարծեց թէ վհուկն էր գործել այդ հրաշքը։ Կինը չհամարձակեց մի բան ասել, և ամենը դրեց սեղանի վրայ, և նրանք սկսեցին ուտել ձուկ, տապակած միս և կարկանդակ։

Կլօսը նորից ճարճատեցրեց մորթին։

—Ի՞նչ է ասում այժմ, հարցրեց գիւղացին։

—Նա ասում է, որ երեք շիշ գինի է դրել փռան մէջ։

Կինը բերաւ գինին, և ամուսինը խմելով հեռդհեռէ զուարթացաւ. նա շատ էր

ուզում փոքրիկ Կլօսի պարկի մէջ գտնուած վհուկի նման մի վհուկ ունենալ։

—Ես կամենում եմ, որ նա ինձ ցոյց տայ սատանային, ասաց գիւղացին. այդ՝ մեծ հաճոյք կը պատճառէր ինձ։

—Իմ վհուկը կարող է կատարել բոլոր ցանկութիւններս, ասաց Կլօս։ Նրա միջոցով ես քեզ ցոյց կը տամ սատանային։ Յետոյ նա ճարճատեցրեց մորթին։

—Լսո՞ւմ ես, վհուկը «այո՛» է ասում։ Բայց սատանայի տեսքը սարսափելի է։

—Օ՜, ես չեմ վախենում։ Ինչ կերպարանք ունի։

—Նա ձեր առաջ կը ներկայանայ մի տիրացուի կերպարանքով։

—Ո՜ւֆ, ինչ վատ տեսք ունի, ես չեմ կարող տանել մի տիրացուի բերանը... Բայց հոգ չէ, միայն թէ ինձ թող չը մօտենայ։

Փոքրիկ Կլօս ականջ դրաւ պարկին, որպէս թէ վհուկի խօսքերը լսելու համար։

—Ի՞նչ է ասում։

—Նա ասում է, որ եթէ հեռուն, անկիւնում գտնուած մեծ արկղը բանաք, այնտեղ կը գտնէք սատանային։ Բայց պէտք է լաւ պահէք կափարիչը, որպէս զի նա չը փախչի։

—Օգնեցէք ինձ, ասաց գիւղացին մոտենալով արկղին, ուր կնոջ պահած իսկական տիրացուն երկիւղից դողդողում էր։

Կափարիչը բացին. «հուֆ» գոչեց գիւղացին մի ոստիւն անելով դէպի յետ. ես

նրան տեսայ։ Նա Բոլորովին նման էր մեր եկեղեցու տիրացուին։ Նա ահռելի է։

Յետոյ նրանք սկսեցին նորից խմել մինչև ուշ գիշեր։

—Ծախիր ինձ քո վհուկը, ասաց գիւղացին. ինչ որ ուզես կը տամ—մի գրիւ ոսկի, եթէ կամենաս։

—Չեմ կարող, պատասխանեց փոքրիկ Կլոս. մէկ մտածիր թէ որքան օգտակար է նա ինձ։

Դու ինձ կը բաղդաւորացնէիր, ասաց գիւղացին պնդելով։

—Լաւ, թող այդպէս լինի, ասաց վերջապէս փոքրիկ Կլոս, քանի որ դու ինձ հիւրընկալեցիր մի գրիւ արծաթի փոխարէն կը տամ քեզ իմ վհուկը. բայց լաւ չափիր։

—Անհոգ կաց, միայն թէ ես կը խնդրէի քեզ այդ արկղը այստեղից տանել։ Ես չեմ ուզում, որ նա մնայ իմ տանը մի րոպէ աւելի։ Գուցէ սատանան միշտ այնտեղ է։

Փոքրիկ Կլոս գիւղացուն տուաւ իր պարկը՝ մէջի չոր կաշիով. փոխարէն ստացաւ մի գրիւ արծաթ դրամ և բացի այդ, մի մեծ ձեռնասայլակ՝ դրամն ու արկղը փոխադրելու համար։

—Մնա՛ք բարեաւ ասաց ու հեռացաւ, Անտառի միւս կողմում, նա կանգ առաւ մի նոր շինուած կամրջի վրայ, որի տակից անցնում էր մի խոր գետ, և բարձրաձայն ասաց.

—Ի՞նչ անեմ այս անպիտան արկղը. կարծես թէ քարով լիքը լինի. ես արդէն

յոգնեցի. աւելի լաւ է, որ դետը գցեմ։ Եթէ ջուրը նրան տանի դէպի իմ տունը, լաւ, ապա թէ ոչ ես նրան պէտք չունեմ։ Յետոյ նա ձեռքով բարձրացրեց արկղը՝ ջուրը գցելու համար։

—Կա՛ց, կա՛ց, աղաչեց տիրացուն արկղի միջից. թող ինձ նախ դուրս գամ։

—Ծ՛ռ, գոչեց փոքրիկ Կլոս, վախենալ կեղծելով. սատանան դեռ ևս մէջն է. պէտք է անպատճառ նրան խեղդել։

—Ո՛չ, ո՛չ. աղաղակեց տիրացուն, խնայիր ինձ և ես քեզ մի դրիւ արծաթ դրամ կը տամ։

—Այդ ջոկ բան, պատասխանեց փոքրիկ Կլոս արկղը բանալով։

Տիրացուն դուրս եկաւ, դատարկ արկղը հրեց ջրի մէջ և գնաց տուն, որպէս զի փոքրիկ Կլոսին մի դրիւ արծաթ դրամ տայ։ Կլոս այդ էլ դրաւ իր ձեռնասայլակին մէջ և վերադարձաւ տուն։

Տուն հասնելով, նա իր բոլոր դրամը դիզեց սենեակի մէջ։

— Ի՞նչ թանդ գնով ծախեցինք ձիու մի մորթին, ուրախութեամբ բացագանչեց։ Մեծ Կլոսը կատաղութիւնից կը տրաքուի, եթէ

իմանայ, որ իմ միակ ձին, ինձ այսքան հարստացրեց։ Յետոյ նա մեծ Կլոսի մօտ ուղարկեց մի երեխայի՝ նրանից մի դրիւ փոխ վերցնելու համար։

«Ի՞նչ պիտի անէ դրիւը», մտածեց մեծ Կլոս։ Ու նրա յատակը կուպրով ծեփեց։

Երբ փոքրիկ Կլոս դրիւը վերադարձրեց, յատակին երեք արծաթեայ դրամ կպած էր։

«Զարմանալի է, ո՞րտեղից է վերցրել այդքան դրամը» գոչեց նա, և անմիջապէս վազեց փոքրիկ Կլոսի մօտ։

—Ո՞րտեղից վերցրիր այդքան դրամը։

—Իմ ձիու կաշուից, որը երէկ երեկոյեան ծախեցի։

—Քո ձիու կաշուի՞ց, դու նրան շատ լաւ գնով ես ծախել, ասաց մեծ Կլոս. յետոյ շուտով վերադարձաւ տուն, վերցրեց մի կացին, չորս ձիերին էլ սպանեց, նրանց քերթեց և մորթիները տարաւ քաղաք։

«Կաշի՞, կաշի՞, կաշի գնող չը կա՞յ», աղաղակում էր նա փողոցներում։

Բոլոր կօշկակարները և կաշեգործները վազեցին կաշու դինն իմանալու։

Իւրաքանչիւրը մէկ դրիւ արծաթ արժէ, պատասխանեց մեծ Կլօս։

—Գիժ ես, ինչ ես, դու կարծում ես որ մենք դրիւներով դրամ ունենք։

—Կաշի՛, կաշի՛, շարունակեց, ո՞վ է ուզում կաշի գնել. և եթէ մէկը սակարկէր, «իւրաքանչիւրը մի դրիւ արծաթ դրամ արժէ» պատասխանում էր միշտ։

—Ուզում է մեզ ծաղրել, ասացին վերջապէս ամենքը. ու կօշկակարները վերցրին իրենց թոկերը, կաշեգործները իրանց դոդոնոցները և սկսեցին մեծ Կլօսին լաւ թակել։

—Մենք քո կաշին այնպէս կանենք, որ կը կարմրի և կը կապտէ, ասացին, փասա փուսադ հաւաքելով կը կորսուիս, թէ չէ։

Ու մեծ Կլօս հարուածների միջից հազիւ կարողացաւ փախչել։

—Լա՛ւ, ասաց տուն մտնելով. այս բոլորի պատճառը փոքրիկ Կլօսն է. պիտի սպանեմ նրան։

Փոքրիկ Կլօսի պառաւ ատնտուն մեռել էր։ Թէպէտև նա շատ վատ էր վարուել նրա հետ, բայց փոքրիկ Կլօսը նրա վրայ լաց եղաւ։ Պառկեցրեց մեռելին իր անկողնում, մտածելով որ գուցէ նա կենդանանայ։ Իսկ ինքը ամբողջ գիշերը մի անկիւնում կծկուած մնաց։

Կէս գիշերին, յանկարծ դուռը բացուեց և ներս մտաւ մեծ Կլօս կացինը ձեռքին. փոքրիկ Կլօսի անկողնու տեղն իմանալով՝ կամաց մօտեցաւ, ու մեռած պառաւ ատնտուի ճակատին իջեցրեց մի ուժգին հարուած։

—Այժմ էլ ինձ խաբէ, եթէ կարող ես, դոչեց մեծ Կլօս հեռանալու ժամանակ։ Նա կարծում էր թէ սպանեց իր թշնամուն։

—Ի՞նչ չար մարդ, մտածեց փոքրիկ Կլօսը. նա ինձ էր ուզում սպանել։ Բարեբաղդաբար իմ պառաւ ատնտուն արդէն միւս աշխարհն էր չուել։

Այնուհետև, նա պառաւին հագցրեց կիրակնօրեայ զգեստները, հարևանի ձին փոխ վերցրեց և լծեց իր կառքին։ Ատընտուն դրաւ կառքի յետևի նստարանին վրայ ու ճանապարհ ընկաւ քաղաք։ Անտառից անցնելով հասաւ մի պանդոկ։ Փոքրիկ Կլօս՝ քաղցած լինելով՝ կանգ առաւ և ուտելու մի քիչ բան պահանջեց։ Պանդոկապետը՝ շատ

հարուստ մարդ էր. ճիշդն ասելով վատ մարդ չէր,

—Բարև, ասաց փոքրիկ Կլոսին, այսօր ինչպէս զուգուել զարդարուել ես։

—Այո, պատասխանեց Կլոս կառքից ցած դալով. իմ պառաւ ստնտուին քաղաք եմ տանում։ մի բաժակ զովացուցիչ ըմպելի բեր նրա համար, բայց նրա հետ բարձր ձայնով խօսիր, որովհետև նրա ականջները մի քիչ դժուարութեամբ են լսում։

—Շատ լաւ, պատասխանեց պանդոկապետը։ Անմիջապէս, մի մեծ բաժակ լցրեց մեղրաջրով և տարաւ պառաւին, որ անշարժ պառկել էր կառքում։

—Համեցէք մի բաժակ մեղրաջուր, բղաւեց նա մեռած կնոջը։

Ստնտուն տեղիցը չը շարժուեց։

—Խուլ էք, ինչ էք, ահա ձեզ մի բաժակ մեղրաջուր, կանչեց նա իր բոլոր ուժով։

Բայց, որքան էլ որ նա բղաւելով չընչասպառ եղաւ, պառաւը տեղից չը շարժուեց։ Այն ժամանակ, պանդոկապետը բարկութիւնից կրակ կտրած՝ բաժակը այնպիսի ուժով նետեց պառաւի երեսին, որ

նա՝ ոչ մի կապով կապուած չը լինելով նստարանին, ընկաւ վայր։ Նոյն րոպէին, փոքրիկ Կլոսը վրայ հասաւ։

—Վա՛յ, տունս քանդուեց, աղաղակեց նա պանդոկապետի օձիքից բռնելով. դու

սպանեցիր իմ ստնտուին. մէկ տես, այն վերքը՝ որ դու բացիր նրա ճակատում։

—Այո, վա՛յ ինձ, պատասխանեց պանդոկապետը, ձեռքերը պաղատագին վեր բարձրացնելով. ես նորից անկարող եղայ իմ զայրոյթը զսպելու... Իմ փոքրիկ Կլոս, ես

քեզ մի գրիւ արծաթ դրամ կը վճարեմ և քո ստնտուին թաղել կը տամ, այնպէս շը-քով, ինչպէս իմ մօրը՝ միայն թէ ինձ մի մատնիր։ Քեզ ինչ շահ, եթէ մինչև անգամ դահիճը իմ գլուխը կտրի։

Կլոս համաձայնուեց։ Մի գրիւ արծաթ դրամն ստացաւ և պառաւի թաղումը պան-դոկապետին յանձնելով՝ հեռացաւ։ Տուն վերադառնալով՝ մի երեխայի ուղարկեց մեծ Կլոսի մօտ, նրա գրիւը փոխ վերցնելու համար։

—Այդ ինչ բան է, գոչեց նա, միթէ ես նրան չսպանեցի. պէտք է որ ես ինքս անձամբ տեսնեմ նրան։ Ու իսկոյն և եթ գրիւը վերցնելով գնաց փոքրիկ Կլոսի մօտ։

Դրամի նոր դէզը տեսնելով՝ նա իր աչքերը մեծ մեծ բացաւ։

—Ի՞նչպէս շահեցար այդ գանձը, հարցրեց նա նախանձից իրան ուտելով։

—Դու փոխանակ ինձ սպանելու, իմ ստնտուին սպանեցիր։ Իսկ իմ ստնտուի մարմինը՝ մի գրիւ արծաթ դրամ շահեցրեց ինձ։

—Լա՜ւ գին է, ասաց մեծ Կլոսը ու շտապեց տուն։ Կացինի մի հարուածով սպա-

նեց իր պառաւ ստնտուին, դիակը դրաւ կառքի մէջ ու մէկ շունչով հասաւ քաղաք։ Անմիջապէս ներկայացաւ դեղագործին և հարցրեց թէ արդեօք չէր ցանկար գնել մի դիակ։

—Տեսնենք, պատասխանեց դեղագործը, բայց, նախ, ասա՛ ինձ, ո՞րտեղից ես վերցրել։

—Սա իմ ստնտուն է, որին ես սպանեցի, մի գրիւ արծաթ դրամի փոխարէն ծախելու համար։

—Տէ՛ր Աստուած, յիմա՞ր ես դու, ինչ ես. այդ ինչ՞ր ես դուրս տալիս, խելքդ գլուխդ հաւաքի՛ր, այդպիսի խօսքերի համար մարդու վիզը կը կտրեն, գիտե՞ս։

Մեծ Կլոս պատմեց բոլորը։ Երբ դեղագործը ճշմարտութիւնն իմացաւ, սաստիկ յանդիմանեց նրան, բացատրեց թէ ո՞րքան դարշելի էր իր վարմունքը և թէ ի՞նչ սարսափելի պատիժ էր սպառնում նրան։ Մեծ Կլոս՝ սարսափահար՝ թռաւ կառքի մէջ, մտրակեց ձիերին և սրարշաւ վերադարձաւ տուն։ Նրա սարսափը այնչափ մեծ էր, որ բոլոր նրան պատահողները խենթ էին կարծում։

—Վրէժս կը լուծեմ փոքր Կլօսից, վրէժս անպատճառ կը լուծեմ, դժուածի նման անդադար գոռում էր նա ճանապարհին։

Տուն հասաւ չը հասաւ, վերցրեց մի մեծ պարկ, վազեց փոքրիկ Կլօսի մօտ և ասաց.

—Ա՜յ անզգամ, անպիտան. ահա այս երկրորդ անգամն է, որ դու ինձ խաբում ես։ Իմ չորս ձիերին սպանել տալուց յետոյ, դու սպանել տուիր նաև իմ խեղճ ստնտուին։ Այս բոլոր չարիքի պատճառը դու ես։ Բայց այլ ևս դու ինձ չես կարող խաբել։

Այս ասելով՝ փոքրիկ Կլօսի մէջքից բռնեց և կոխեց պարկի մէջ. յետոյ պարկը նետեց ուսին ու դուրս ելաւ։ Նա ուզում էր իր հակառակորդին ջուրը գցել։

Մինչև գետափ՝ ճանապարհը բաւական երկար էր։ Կլօս թէև հասակով փոքր էր, բայց մարմնով ծանր էր կշռում։ Հետևաբար մեծ Կլօս յոգնեց. ճանապարհի վրայ, մտաւ մի գինետուն, քիչ հանգչելու և մի բաժակ էլ կոնծելու համար։ Ներս մտնելով՝ նա պարկը թողեց դուրսը, գինետան յետև մի այնպիսի անկիւն, որտեղից ոչ ոք չէր անցնում։

—Ափսոս, ափսոս հառաչում էր անդադար փոքրիկ Կլօս, և պարկի մէջ ժամ դալիս։ Նա աշխատում էր պարկի կապը քակել, բայց չէր յաջողում։

Այդ րոպէին, մի կով՝ պատահմամբ մարգագետնից փախչելով՝ վազեց դէպի փոքր Կլօսը. ծերունի հովիւը, որ նրա յետևից վազում էր, շարժող պարկը տեսնելով՝ կանգ առաւ։

—Ո՞վ ես դու, և ինչու՞ ես տրտնջում, դոչեց հովիւը.

—Մի խեղճ երիտասարդ, որին ուզում են անպատճառ դրախտ ուղարկել։

—Գոհ չե՞ս, ի՞նչ. ես, խեղճ Ծերունիս, շատ գոհ կը լինէի քո տեղը, դրախտ մըտնելով։

—Բայց ես չեմ կամենում դրախտ գընալ. եթէ դու, ցանկանում ես, արի իմ տեղը այս պարկի մէջ մտիր, և շուտով դրախտում կը լինես։

—Ամենայն սիրով, ասաց Ծերունի հովիւը պարկի բերանը բանալով և փոքրիկ Կլօսին դուրս հանելով։ Բայց խոստանում ես հօտիս պահպանութիւն անել։

—Ի հարկէ։

Ծերունին մտաւ պարկի մէջ ու փոքր Կլօս նրա բերանը փակեց։ Այնուհետև Կլօս հաւաքեց ցրուած հօտին ու նրան առաջը դցելով հեռացաւ, գնաց։

Մի քանի րոպէ յետոյ մեծ Կլօս դիտեանից դուրս եկաւ և պարկը շալակեց։ Որովհետև Ծերունի հօտաղը շատ աւելի նիհար էր քան փոքրիկ Կլօսը, նա պարկը շատ թեթեւացած դտաւ։

—Ա՜, արաղը ինձ զօրացրեց, ասաց, էս լաւ եղաւ։

Դեռակ հասնելով՝ հովուին ջուրը դցեց ու բղաւեց.

—Դէ, եթէ կարող ես, նորից ինձ խաբիր։

Յետոյ ուրախ զուարթ վերադարձաւ։ Բայց այնտեղ, ուր ճանապարհները միանում էին, նա ապշեց. ո՞ւմ տեսներ լաւ. փոքրիկ Կլօսին, որ եղների և կովերի մի հօտ էր արածեցնում։

—Ի՞նչ, դոչեց մեծ Կլօս, քեզ չը խեղդեցի։

—Ինչպէս չէ՞, կէս ժամ սրանից առաջ ինձ դցեցիր դեռակի մէջ։

—Որտեղից է ուրեմն այս դեղեցիկ հօտը։

—Ո՞րտեղից պիտի լինի, ջրից եմ հանել. բայց գիտե՞ս թէ ինչպէս։ Նախ թոյլ տուր, որ քեզ շնորհակալութիւն յայտնեմ ինձ ջուրը դցած լինելուդ համար, որովհետև, ինչպէս տեսնում ես, այժմ ես՝ մինչեւ մահս հարուստ եմ։

Պարկի մէջ, ես վախից դողում էի. քանի սուլում էր իմ ականջների տակ, երբ

դու ինձ սառը ջրի մէջ դցեցիր։ Անմիջապէս յատակն իջայ՝ առանց որ և է ձնաս կրելու, որովհետև յատակի վրայ երկար, փափուկ խոտ բուսած էր։ Շուտով պարկի բերանը բացուեց, ու մի դրաւիչ, սպիտակ հագնուած օրիորդ, որ գլխին ունէր դալարաղարդ պսակ, բռնեց ձեռքիցս և ասաց.

—Ես քեզ էի սպասում, իմ փոքրիկ Կլօս. տես ինչ սիրուն նուէր պէտք է անեմ քեզ։

Ու ինձ ցոյց տուաւ եղների և կովերի մի մեծ նախիր։ Շատ քաղաքավարի կերպով շնորհակալութիւն յայտնեցի և խնդրեցի որ ինձ ցոյց տայ ցամաք ելնելու ճանապարհը։ Տեսնում ես, մեծ Կլօս, գետակը՝ ուրիշ բան չէ, բայց եթէ դեղեցիկ ծառերով, կանաչագեղ դաշտերով և անուշահոտ ծաղիկներով զարդարուած մի մեծ ճանապարհ՝ ծովային բնակիչների համար։ Գետակում ես իմ գլխի վերև զգում էի ձկների լողանալը։ Հովիտներում, ամեն կողմ, գեր և հիանալի հօտեր էին արածում։ Շուտով մի ծանծաղուտից ցամաք ելայ հօտիս հետ ու ահաւասիկ այժմ կանգնել եմ քո առաջ։

—Ի՞նչ բաղդ ունէս, ես քեզ նման բաղ-

դաւոր մարդու իսկի կեանքումս չեմ հանդիպել, հառաչեց մեծ Կլօս. ինձ տես, փոքրիկ Կլօս, քեզ մի բան եմ հարցնելու, բայց ուզիղն ասա։ Եթէ ես էլ գետակի յատակն իջնեմ, մի հօտի տէր կարող եմ դառնալ. ասա։

—Անկասկած, բայց ես չեմ կարող պարկով քեզ մինչև գետեղերը տանել. դու շատ ծանր ես. եթէ դու ինքդ ոտքով մինչև այնտեղ գնաս ու յետոյ կը մտնես պարկի մէջ, այդ ջոկ բան. ես ամենայն սիրով քեզ կը հրեմ ջրի մէջ։

—Դու լաւ տղայ ես, փոքրիկ Կլօս. միայն թէ յիշիր ինչ որ քեզ կասեմ։ Եթէ, գետակից ես էլ մի հօտով դուրս չը գամ, այն ժամանակ, Աստուած վկայ, խուրտ ու խաշ կանեմ քեզ։

—Համաձայն եմ, պատասխանեց փոքրիկ Կլօս և երկուսը միասին ճանապարհ ընկան։

Երբ, ծարաւած եղները ջուրը տեսան, ամբողջ ուժով վազեցին խմելու համար։

—Տես, ինչպէս նրանք շտապում են դէպի ջուրը, ասաց փոքրիկ Կլօս. կարծես, նրանք ուզում են վերադառնալ իրանց նախկին տեղը։

Այս անգամ մեծ Կլոսը բոլորովին համոզուեց ու պարկի մէջ մտնելով.

—Օ՜ն, շուտ, օգնիր ինձ. բայց, որպէս զի անպատճառ ջրի յատակն իջնեմ, եթէ ուզում ես, վզիս մի մեծ քար էլ կապիր. ով գիտէ, գուցէ ջրի երեսը մնամ։

—Հանգիստ կաց, ասաց փոքրիկ Կլոս, անպատճառ յատակը կը գտնես։

Բայց մեծ Կլոսի վերջին ցանկութիւնն էլ կատարած լինելու համար, պարկում գտեղեց մի մեծ քար, բերանը կապեց ու հրեց գետի մէջ։ Բռամ։ մեծ Կլոսն իջաւ ջրի յատակը։

—Վախում եմ, սպիտակաղդեստ, գրաւիչ օրիորդին չը հանդիպի, ժպտելով ասաց չարաճճի փոքրիկ Կլոսը։

Ցեռոյ, հօտը առաջը դցեց, եկաւ մեծ ճանապարհի վրայ և ուրախ զուարթ վերադարձաւ տուն։

ԽՈՇՈՐ ԱՄԵՂԸ

Կար մի անգամ կարկատանի մի ասեղ, որ իրան կարի ասեղի չափ նուրբ էր համարում։

—Ուշադիր եղէք, և ինձ լաւ բռնեցէք, ասաց խոշոր ասեղը այն մատներին, որ նրան պիտի բռնէին։ Զը լինի թէ ինձ վայր դցէք, որովհետև, եթէ ընկնեմ, ես այնչափ նուրբ եմ, այնչափ նուրբ եմ, որ վստահ եմ, թէ չէք կարող ինձ այլ ևս գտնել։

—Լաւ, լաւ, դուք անհոգ եղէք, ասացին մատները և նրա մէջքից բռնեցին։

—Մէկ լաւ մտիկ տուէք, ես գալիս եմ իմ շքախմբով, ասաց խոշոր ասեղը, իր ետևից քաշ տալով մի երկար թել, որի ծայրին հանգոյց չը կար։

Մատները ասեղը մխեցին մի խոհարարուհու հողաթափի մէջ, որի վերի մասի

կաշին պատռած լինելով՝ կարկատուելու կարիք ունէր։

—Ի՞նչ կոպիտ աշխատանք, ասաց ասեղը. ես չեմ կարող երբէ՛ք անց կենալ, կը կոտրուեմ, ահ կոտրուում եմ։

Եւ, արդարև, նա կոտրուեց։

—Քեզ չ՚ասա՞ցի, բողոքեց ասեղը. ես չափազանց նուրբ եմ։

—Նա այլ ևս ոչ մի բանի պէտք չի դայ, ասացին մատները։

Խոհարարուհին նրան մեղրամոմից մի գլուխ շինեց և իր վզի թաշկինակը ամրացնելու համար գործ ածեց։

—Օ՜հո՛, այժմ ես կրծքի մի սիրուն գնդասեղ դարձայ, ասաց ասեղը։ Ես լաւ գիտէի, որ այսչափ մեծ պատիւների պէտք է հասնէի։ Ինձ նմանները՝ անկարելի է որ կորսուեն, ոչնչանան։

Եւ նա՝ հանդիսաւոր, շքեղ կառքի կառապանի նման, հպարտ կերպարանք ստացաւ և յոխորտանքով դիտեց շուրջը։

—Թոյլ կը տա՞ք ինձ արդեօք ձեզ հարցնելու թէ դուք ոսկուց էք, ասաց նա հարևան գնդասեղին։ Դուք լաւ արտաքին և միևնոյն ժամանակ սեպհական գլուխ ունիք.

միայն թէ նա շատ փոքր է։ Աշխատեցէ՛ք, որ նա մեծանայ, որովհետև ամենքը մեղրամոմից շինած գլխի չեն արժանանար։ Ու այս խօսքերից յետոյ, խոշոր ասեղը այնչափ գոռոզութեամբ բարձրացրեց գլուխը, որ թաշկինակից դուրս ելաւ և ընկաւ խոհանոցի լուացարանի մէջ, երբ խոհարարուհին լուանում էր ամանները։

—Ա՜յ, այժմ մենք կը ճանապարհորդենք, ասաց ասեղը, միայն թէ վախենում եմ որ չը կորսուեմ։

Արդարև կորսուեց։

—Ես արժանի չեմ այս տեղերին, ես չափազանց նուրբ եմ, ասաց ասեղը, մինչդեռ պառկել էր լուացարանի յատակում։ Բայց գիտեմ, թէ ո՞վ եմ ես, և այդ բաւական է, որ ինձ հպարտացնէ։

Եւ նա պահում էր միշտ իր յոխորտ կերպարանքն և ուրախ տրամադրութիւնը։

Մինչդեռ նա լուացարանի յատակին այդպէս ձգուել էր, նրա վրայից լողալով անցնում էին փայտի կտորտանքներ, յարդի չիւղեր, հին լրագրի պատառներ և այլն։

—Տեսէ՛ք, ի՞նչպէս այդ բոլորը լողում

են ու չեն էլ կանգ առնում, ասաց ասեղը։ Նրանք չը գիտեն թէ ինչ է պատահմամբ պառկել իրանց տակ—ինձ նման մի ասեղ։ Ահ, ահա օրինակի համար այս փայտի կտորը, որ անցնում է. նա աշխարհում միայն իր և իր նման փայտի կտորների վրայ է մտածում... Ահա և մի յարդի շիւղ. ի՞նչպէս նա պտոյտ է գալիս, ի՞նչպէս նա կորտուում է. հէյ, մի քիչ ուշադրութիւն դարձրու շուրջդ. ապա թէ ոչ ոտքդ քարին կը խփես։ Ահա նոյնպէս հին լրագրի մի պատառ։ Այն բոլորը, ինչ որ տպուել էր այդ լրագրում, վաղուց մոռացուել է, բայց և այնպէս, նա հպարտանում է...։ Իսկ ես՝ թէև համբերութեամբ պառկել եմ այստեղ, բայց գիտեմ, թէ ով եմ ես, և ի՞նչ է իմ արժէքը։

Ցանկարծ, ասեղը նկատեց մի ինչ որ փայլուն բան, և նրան ադամանդ կարծեց։ Նա գարեջրի շիշի մի կտոր էր պարզապէս։ Բայց նա փայլում էր և խոշոր ասեղը՝ ներկայացնելով ինքն իրան՝ իբրև կրծքի մի դնդասեղ, սկսեց նրա հետ խօսակցել։

—Դուք, երևի մի ադամանդ էք, հարցրեց։

—Այո, ես մի ինչ որ այդպիսի բան եմ, պատասխանեց շիշի կտորը։

Այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրը համոզուեց, որ իր հարևանը թանկագին էր։ Եւ նրանք մասնաւորաբար խօսակցեցին աշխարհում տիրող հպարտութեան մասին։

—Առաջ ես ապրում էի մի արկղում, որը պատկանում էր մի օրիորդի, ասաց ասեղը։ Այդ օրիորդը խոհարարուհի էր։ Նրա իւրաքանչիւր ձեռքը հինգ մատ ունէր. ես երբէք նրանց նման յաւակնոտ և հպարտ մատներ չեմ տեսել. և սակայն նրանք եղել էին միայն նրա համար, որպէս զի ինձ արկղից հանեն և նորից արկղի մէջ դնեն։

—Արդեօք նրանք ազնուականն դասակարգից էին, հարցրեց շիշի կտորը։

—Ազնուական, կրկնեց ասեղը, բոլորովին ոչ, բայց նրանք չափազանց մնապարծ էին։ Հինգ եղբայր էին... և ամենքը ծնուել էին... մատ։ Նրանք հպարտութեամբ իրար կողքին էին կենում, թէպէտև միևնոյն հասակը չունէին։ Ամենից դրսինը՝ մեծ մատը՝ կարճ և հաստ՝ մատներից հեռու էր կանգնում։ Նա ծռւում էր միայն մի տեղից, որովհետև միայն մի յօդ ունէր։ Բայց նա

միշտ ասում էր, որ եթէ մի մարդ իր մեծ մասը կորցնէ, այն ժամանակ նա չի կարող զինուորական ծառայութիւն կատարել։ Երկրորդ մասը ուտում էր և՛ քաղցրը և՛ թթուն, ցոյց էր տալիս արևը, լուսինը և յենւում էր դրչի վրայ, երբ միւս մասնեները ուզում էին գրել։ Երրորդը՝ միջամասը՝ բարձրից էր նայում իր եղբայրների վրայ. չորրորդը կրում էր մի ոսկի դօտի, իսկ վերջին փոքրիկը ոչինչ չէր անում, և դրա համար էլ չափազանց հպարտ էր։ Հինգ եղբայրները՝ բացի պոռոտախօսութիւնից, մեծամտութիւնից ոչինչ չը գիտէին։ Այս պատճառով՝ ես էլ հեռացայ նրանցից. լաւ չարի։

—Ի հարկէ. այժմ մենք նստած ենք այստեղ և փայլում ենք, ասաց շիշի կտորը։

Բայց ճիշտ այդ րոպէին լուացարանի մէջ ջուր լեցրին, որը եղերքներից դուրս թափուելով երկուսին էլ քշեց տարաւ իր հետ։

—Վերջապէս շարժւում, առաջանում ենք, ասաց խոշոր ասեղը։ Նրանք հասան մինչև առուակը։ Շիշի կտորը շարունակեց ճանապարհը, բայց ասեղը կանգ առաւ առուակի մէջ։

—Հը՞ն, էլ տեղից չեմ շարժուի. ես չափազանց նուրբ եմ և իրաւունք ունեմ հպարտանալու, ասաց ասեղը։

Արդարև նա մնաց իր տեղում և անձնատուր եղաւ խոր ու բարձր մտածումների։

—Ա՜հ, Աստուած իմ, որքան նուրբ եմ ես. ինձ թւում է, որ ես ծնուել եմ ուղղակի արեգակի մի ճառագայթից։ Կարծես թէ նրանք էլ գալիս են ինձ փնտռելու մինչև ջրի յատակը։ Բայց ես այնչափ բարակ եմ, որ մայրս՝ արեգակը՝ անկարող պիտի լինի ինձ գտնելու։ Եթէ աչքս կորցրած չը լինէի, գոնէ կը նստէի լաց կը լինէի։ Ո՛չ, ես չեմ ուզում լաց լինել. դա ինձ վայել չէ։

Մի օր, երեխաները եկան առուակի մէջ հին մեխեր, կոպեկներ և ուրիշ արժէքաւոր առարկաներ որոնելու։ Կեղտոտ աշխատանք էր այդ. բայց ի՞նչ արած, նրանք այդ բանի մէջ զուարճութիւն էին գտնում։ Ամեն մարդ իր կարողութեան չափով է զուարճանում։

—Վա՛յ, վա՛յ, աղաղակեց նրանցից մինը, ասեղից խայթուելով. ա՛յ անպիտան, ա՛յ։

—Ես անպիտան չեմ, ես մի աղնուազարմ օրիորդ եմ, ասաց ասեղը։

Բայց ոչ ոք նրան չը լսեց։ Ասեղի մեղրամոմեայ գլուխը պոկուել էր և ասեղն ամբողջապէս սևացել էր։ Բայց սև գոյնը հասակը աւելի նուրբ ու երկար է ցոյց

տալիս, դրա համար էլ ասեղը աւելի քան երբէ՛ք նուրբ էր կարծում իրան։

—Ահաւասիկ ձուի մի կեղև, ասացին երեխաները, և ասեղը ցցեցին նրա վրայ։

—Կեցցէք, ասաց ասեղը. այժմ ես աւելի գրաւիչ դարձայ, քանի որ ես սև եմ և ինձ շրջապատող կեղևը բոլորովին սպիտակ է։ Այսպէս ես կարող եմ ամենքի ուշադրութիւնը հրաւիրել իմ վրայ։ Բայց, Աստուած տայ, որ ծովի հիւանդութեամբ

չը բռնուեմ, ապա թէ ոչ փափուկ սիրտս տակն ու վրայ կը լինի։

Նա ծովի հիւանդութեամբ չը բռնուեց և սիրտն էլ տակն ու վրայ չեղաւ։

—Ի՜նչ բարեբաղդութիւն է, պողպատեայ ստամոքս ունենալ, երբ մարդ ճանապարհորդում է ծովի վրայ։ Ասացէք, ես մի մարդուց աւելի չե՞մ արժում։ Ո՞վ կարող է պարծենալ, որ իմ ստամոքսի նման ստամոքս ունի։ Ի՜նչ պատուական կազմուածք ունեմ։ Եւ յետոյ, պէտք է խոստովանուել, որ մարդ որչափ բարակ է, այնչափ քիչ է ենթարկւում վտանգի։

Զա՜թ, փշրուեց կեղևը։ Նրա վրայից անցաւ ապրանքատար մի սայլակ։

—Ա՜հ, Աստուա՜ծ, սիրտս ճմլւում է, ասաց ասեղը. կարծես ծովի հիւանդութեամբ բռնուեցի. սիրտս տակն ու վրայ է լինում։

Որքան էլ որ կառքը նրա վրայից անց կացաւ, սիրտը տակն ու վրայ չեղաւ։ Նա՝ իր ամբողջ հասակով առուակի յատակում անշարժ պառկել էր, ինչպէս առաջ։ Լաւ. թող մնայ այնտեղ։

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐԸ

Խեղճ Ժանը շատ վշտացել էր, որովհետև հայրը հիւանդ էր և առողջանալու յոյս չը կար։ Փոքրիկ սենեակում միայն իրանք երկուսն էին։ Լամպան սեղանի վրայ վառւում էր, հատնում, ու դիշերը անցնում էր։

—Դու, բարի պտուղ հասար, Ժանս, ասաց հիւանդ հայրը. դու լաւ որդի ես, Աստուած քեզ օգնական ու պահապան լինի։

Ցետոյ հայրը երկար ու բաղցր նայեց իր որդուն, խոր շունչ քաշեց ու մեռաւ։ Նա ասես թէ քնում էր։ Ժան լացաւ։ Աշխարհում ոչ ոք ունէր, ոչ հայր, ոչ մայր, ոչ եղբայր, ոչ քոյր։ Խեղճ Ժան։ Անկողնու առաջ ծունր դրած՝ նա իր վախճանուած հօր ձեռքն համբուրեց ու դառն արտասուք

թափեց։ Բայց աչքերը վերջապէս փակուեցին, և նա քնեց, գլուխը անկողնու կարծր փայտին կռթնցրած։

Այն ժամանակ նա մի տարօրինակ երազ տեսաւ։ Արեգակն ու լուսինը իր առաջ խոնարհուեցին. տեսաւ հօրը ողջ և առողջ որ, ծիծաղում էր առաջուայ նման, երբ լաւ տրամադրութեան մէջ էր։ Մի փոքրիկ դրաւիչ աղջիկ՝ իր երկար և գեղեցիկ մազերի վրայ ոսկեայ պսակ դրած՝ ձեռքը Ժանին երկարեց։ Եւ հայրը որդուն ասաց.

—Տես, ահա նշանածդ, աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն է։

Ցետոյ Ժան զարթնեց. գեղեցիկ տեսիլքը չքացաւ։ Հայրը՝ սառը և մեռած՝ ձգուել էր անկողնու մէջ ու ոչ ոք կար նրանց մօտ։ Խեղճ Ժան։

Հետևեալ օրը՝ հօրը թաղեցին։ Ժան դագաղի ետևից գնաց։ Նա այլ ևս չը պէտք է տեսնէր իր բարի հօրը, որին չափազանց շատ էր սիրում։ Դագաղն իջեցրին փոսի մէջ և վրան հող լցրին։ Ժան երկար դիտեց դագաղի ծայրը, որ հողի տակից երևում էր տակաւին. բայց հողը լցւում էր հա լցւում. շուտով ամբողջ դագաղը հողով ծածկեց։

կուեց։ Այն ժամանակ նրա սիրտը ճմլուեց. շատ էր մեծ նրա վիշտը։ Գերեզմանի եղերքին՝ մի տխուր, շատ տխուր շարական էին երգում։ Ժան յուզուեց ու լացաւ։ Արտասուքները սիրտը թեթեւացրին։ Արեգակը քնքշութեամբ լուսաւորում էր կանաչ ծառերը և կարծես ուզում էր ասել. «Մխիթարուիր, Ժան, տես երկինքը որքան գեղեցիկ ու կապոյտ է։ Այնտեղ է քո հայրը և խնդրում է բարի Աստուծուց, որ դու միշտ բաղդաւոր լինես»։

—Միշտ բարի պիտի լինեմ, ասաց Ժան, որովհետև ուզում եմ իմ հօր մօտ՝ երկինք գնալ. այնտեղ, մենք մեծապէս ուրախ պիտի լինենք իրար տեսնելով։ Ա՜հ, նրան պատմելու որքան բաներ ունեմ. նա անշուշտ ինձ ցոյց կը տայ և կը բացատրի երկնքի հրաշալիքները, ինչպէս առաջ ինձ սովորեցնում էր երկրի վրայ։ Օ՜հ, որչափ պիտի ուրախանանք։

Ժան այս բոլոր բաների վրայ խորհելով՝ արտասուքների միջից ժպտում էր։ Շաղանակենիների վրայ փոքրիկ թռչունները զուարթօրէն դայլայլում էին. «ճի՛ւ, ճի՛ւ, ճի՛ւ»։ Նրանք էլ թաղման ներկայ էին եղել.

դիտէին՝ թէ հանդուցեալը երկնքումն էր, և շատ աւելի մեծ ու գեղեցիկ թեւեր ունէր, քան իրանք և թէ նա յաւիտեան բաղդաւոր էր, որովհետև երկրի վրայ բարիք էր միայն գործել։ Ահա ինչու համար թռչնիկները գոհ և ուրախ էին։

Ժան տեսաւ, թէ ինչպէս նրանք մեծ ծառերի վրայից թռչկոտում էին օդի մէջ, գնում էին հեռու, շատ հեռու։ Ու ինքն էլ ցանկացաւ նրանց նման ճանապարհորդել։ Նախ, փայտից մի մեծ խաչ շինեց երեկոյեան իր հօր գերեզմանի վրայ դնելու համար։ Երբ խաչը երեկոյեան տարաւ, տեսաւ թէ գերեզմանը զարդարուած էր աւազով և ծաղիկներով։ Գերեզմանը զարդարողները մի քանի ազնիւ անձեր էին որ սիրում և յարգում էին այդ բարի հօրը։

Յաջորդ օրը, առաւօտ կանուխ, Ժան ճանապարհորդական փոքրիկ ծրարը պատրաստեց, իր ժառանգութեան բաժինը՝ մօտ յիսուն և հինգ ռուբլի՝ մէջքին կապեց ու սկսեց աշխարհ ման գալ։ Նախ, գնաց գերեզմանատուն. իր հօր վրայ հայր մեր ասաց և գոչեց.

—Մնաս բարեաւ, հայր։ Ես էլ պիտի

ջանամ քեզ նման միշտ բարի լինել, որպէս զի դու ինձ համար աղօթես բարի Աստծուն։

Դաշտերում, բոլոր ծաղիկները թարմ ու շնորհալի էին արեգակի ջերմութեան տակ։ Նրանք զեփիւռի առաջ խոնարհւում էին և կարծես մրմնջում էին Ժանին. «Բարի եկար, դու, հազար բարի. գեղեցիկ է մարգագետինը, չէ՞».

Բայց, Ժան՝ վերջին անգամ ետ դարձաւ ու դիտեց հին եկեղեցին, ուր նրան մկրտել էին, և ուր, ամեն կիրակի, գնում էր իր ալևոր հօր հետ փոքրիկ Ցիսուսին աղօթելու համար։ Նա, հեռուից՝ զանգակատան վերև, մի խորշի մէջ, կարմիր ու սրածայր գդակով եկեղեցու ոգին նշմարեց, որ թևով դէմքը արեգակից ծածկել էր։ Ժան մնաք բարևի նշան արեց նրան և փոքրիկ ոգին հանեց ու շարժեց իր կարմիր գդակը, ձեռքը տարաւ սրտին և իր մատների ծայրով համբոյրներ ուղարկեց, յաջողութիւն և բարի ճանապարհ մաղթելու համար։ Ժան՝ այժմ խորհում էր այն գեղեցիկ բաների մասին, որոնց պիտի տեսնէր աշխարհում։ Նա գնաց հեռու, հեռու, շատ հեռու, այնպիսի տեղեր, ուր երբէք նա չէր եղել։ Նա՝

ոչ իր անցած քաղաքներն և ոչ էլ պատահած մարդկանցն էր ճանաչում։

Առաջին գիշերը, հարկադրուեց պառկելու դաշտում, չոր խոտի մի դեզի վրայ, որովհետև ուրիշ անկողին չունէր։ Նա ուղղակի սքանչացաւ. թագաւորը իրանից դիսա չէր կարող լինել։ Ամբողջ դաշտը, իր լճակով, իր չոր խոտով և իբրև առաստաղ՝ իր կապոյտ անսահման երկնքով՝ իսկապէս հրաշալի մի ննջասենեակ էր կազմում։ Մարգագետինը՝ իր կարմիր և սպիտակ փոքրիկ ծաղիկներով, ասես մի գորգ լինէր, որը պըսակազարդում էին թմբերի մացառները և վայրի վարդենիները։ Լճակը՝ իր յատակ ու սառը ջրով՝ աղբիւրի տեղ էր ծառայում. եղեգները՝ խոնարհուելով՝ «բարի լոյս, բարի երեկոյ» էին մրմնջում. լուսինը՝ իբրև մի մեծ լամբար, կապոյտ առաստաղից կախուել էր և վախենալու կարիք չը կար, որ այդ լամպան շրջելով վարագոյրները բռնկցնէր։ Ժան՝ կարող էր ուրեմն քնել հանգստութեամբ, առանց երկիւղի։ Ու նա քնեց։ Երբ զարթնեց, արեգակը ծագել էր արդէն և թռչնիկները ծլլում էին շուրջը և կարծես ասում էին.

—Բարի լոյս, բարի լոյս, դու դեռ ես վեր չես կացել։

Կիրակի էր. գանգակները ժողովրդին եկեղեցի էին հրաւիրում. ամենքը քարոզ լսելու համար շտապում էին։ Ժան հեռուից ժողովրդին, ինքն էլ մի սաղմոս երգեց եկեղեցում, յետոյ Աստուծոյ խօսքը լսեց։ Նա յիշեց այն եկեղեցին, ուր մկրտուել էր, և ուր գնացել էր յաճախ իր հօր հետ փառաբանելու մանուկ Յիսուսին։

Այցելեց գերեզմաննոց։ Այնտեղ շատ գերեզմաններ կային, որոնց մեծ մասի վրայ խոտ էր բուսել։ Ժան մտածեց, թէ իր հօր գերեզմանն էլ դուցէ այդպէս անխնամ մնացել էր։ Նա նստեց, գերեզմանների խոտերը քաղեց, բարձրացրեց ընկած խաչերը և քամուց ցանուցիր եղած ծաղկեպսակները իրանց տեղը զետեղեց։ Նա խորհրդածում էր.

«Դուցէ, այս բոպէիս, մի ուրիշը՝ իմ հօր գերեզմանին միևնոյն խնամքն է տանում. ես ուրիշ կերպ անել չեմ կարող»։

Գերեզմանատան դռան առաջ, մի մուրացիկ՝ փայտին յենած նստելէր։ Ժան՝ նրան մի քիչ փող բաշխեց ու բաւականութեամբ ճանապարհը շարունակեց։

Երեկոյեան դէմ, օդը սարսափելի կերպով վատացաւ։ Ժան շտապում էր մի ապաստան գտնել, բայց շուտով վրայ հասաւ մութ գիշերը։ Վերջապէս, մի բլրակի գագաթին՝ մի փոքրիկ, մենաւոր մատուռ տեսաւ։ Մատուռի դուռը բաց էր, ներս մտաւ և սպասեց որ փոթորիկն անցնի։



«Ցոդնել եմ, հանգչելու մեծ կարիք եմ զգում, նստեմ մի քիչ այստեղ», մտածեց։ Ու մի անկիւն նստեց։ Ձեռները կցեց, երեկոյեան աղօթքն արեց ու անգիտակցաբար

ընեց։ Մինչդեռ երկինքը որոտում էր և շանթը փայլատակում, նա հանդարտութեամբ երաղում էր։

Կէս գիշերին միայն զարթնեց. օդը պարզուել էր, և պատուհանի միջից լուսինը ժպտում էր։ Եկեղեցու մէջտեղում մի բաց դագաղ կար, որի մէջ գտնուող մեռելին դեռ ևս չէին թաղել։ Ժան չը վախեցաւ, որովհետև խիղճը հանդարտ էր, և գիտէր թէ ողջ ու չար մարդիկը միայն չարիք են գործում, իսկ մեռելները ոչինչ չեն աներ։ Այդ կենդանի ու չար մարդերից երկուքը կանգնել էին դագաղի կողքին և ուզում էին մեռելը հանելով դուրս շպրտել։

—Ինչու համար ուզում էք դուրս նետել մեռելին, հարցրեց Ժան. դա մի վատ ու չար գործ է։ Աստուծոյ սիրուն, թողէք նրան հանգիստ.

—Ինչքը ես դուրս տալիս, պատասխանեցին երկու չար մարդերը։ Նա մեղ խաբեց. մեղ դրամ պարտական էր և առանց վճարելու շտապեց մեռնել. սրա համար մենք էլ ուզում ենք վրէժ լուծել շան նման փողոց շպրտելով նրան։

—Ես յիսուն ռուբլի ունեմ, ասաց Ժան.

այդ թէև իմ ամբողջ ժառանգութիւնն է. բայց յօժարութեամբ ձեզ կը տամ, եթէ ինձ կը խոստանաք խեղճ մեռելին հանգիստ թողնել։ Առանց այդ դրամին էլ կարող եմ ճանապարհս շարունակել. ես ողջ եմ և առողջ և բարի Աստուածն ինձ կօգնէ։

—Այո, պատասխանեցին վատ մարդերը. եթէ դու նրա պարտքը վճարես, մենք նրան ոչինչ չենք աներ. խօսք ենք տալիս։

Ու նրանք վերցրին Ժանի փողը, բարձրաձայն ծիծաղեցին նրա բարութեան վրայ և հեռացան։ Ժան՝ մեռելը կարգի բերեց դագաղի մէջ, նրա ձեռները միացրեց և «մնաք բարեաւ» ասելով՝ ուղղուեց դէպի մեծ անտառը։

Նա՝ լուսնի շողերով արծաթազօծուած անտառում, ամեն տեղ տեսաւ անտառի փոքրիկ, շնորհալի ոգիներին, որ զուարթութեամբ խաղում էին։ Նրանք ոչ վախեցան և ոչ էլ փախան, որովհետև Ժանի անմեղութիւնը նրանց յայտնի էր. նրանք փախչում, անտեսանելի էին դառնում չարերին միայն։ Նրանցից ոմանք՝ մի մատից աւելի մեծ չէին. և իրանց երկար, խարտեաշ մազերը վեր էին բարձրացրել ոսկի սանդրով։

երկուս առ երկուս նրանք օրօրւում էին տերևների և խոտերի վրայ սփռուած ցօղի խոշոր կաթիլների վրայ։ Երբեմն կաթիլը գլորւում էր ցած ու նրանք ընկնում էին յարդի երկար շիւղերի մէջտեղ. այն ժամանակ միւս փոքրիկ ոգիները հը՞ռ հը՞ռ ծիծաղում էին։ Ա՜հ, որչափ զուարճալի էր այս ամենը։ Նրանք սկսեցին երգել, ու Ժան նկատեց որ մանկութեան ժամանակ իր սովորած երգերն էին նրանց բոլոր երգածները։ Մեծ, խատուտիկ սարդեր՝ արծաթեայ պսակներով՝ մի մացառից միւսը կախ ընկած՝ կամուրջներ ու պալատներ էին հիւսում, որոնք ցօղով ծածկուած, լուսնի ճառագայթներով լուսաւորուած՝ ապակիների նման վառվռում էին։ Այս բոլորը տեսեց մինչև արեգակի ծագելը. այն ժամանակ փոքրիկ ոգիները մտան ծաղիկների կոկոնների մէջ և քամին ցիր ու ցան արեց նրանց կամուրջները։

Ժան անտառից դուրս էր գալիս, երբ տղամարդու մի ուժեղ ձայն նրա ետևից կանչեց.

—Է՞, ընկեր, ո՞ւր ես գնում.

—Աշխարհ մանելու, պատասխանեց

Ժան։ Ես ոչ հայր ունեմ, ոչ մայր. ես մի խեղճ երեխայ եմ, բայց բարի Աստուածը ինձ կօգնէ։

—Ես էլ աշխարհ մանելու պիտի գամ, շարունակեց օտարականը. եթէ ուզում ես միասին ճանապարհորդենք, ընկեր լինենք։

—Ամենայն սիրով։

Ու միասին շարունակեցին նրանք առաջ գնալ։

Շուտով նրանք իրար սիրեցին, որովհետև երկուսն էլ բարի էին։ Բայց Ժան նկատեց, որ անծանօթը իրանից աւելի դիտուն էր. նա շատ էր ճանապարհորդել և կարող էր ամեն բանի մասին խօսել։

Արեգակը բարձրացել էր արդէն երկնքում. հեռուաբար մի մեծ ծառի տակ նըստան ճաշելու համար։ Մի պառաւ կին անց էր կենում նրանց մօտից։ Նա այնքան ծեր էր, որ քայլում էր բոլորովին կռացած, յենուելով մի ձեռնափայտի, և կռնակին կրում էր մի խուրձ, որ հաւաքել էր անտառից։ Ժան տեսաւ ողորմելու երեք դաւաղան, որոնց ծայրերը նրա գոգնոցից դուրս էին ընկնում։ Երբ նրանց առաջ հասաւ, պառաւը սահեց ու ընկաւ սուր ճիչեր արձակելով,

որովհետև խեղճ կինը կոտրել էր սրունքը։ Ժան ուզեց անմիջապես նրան տուն տանել։ բայց օտարականը բացաւ իր պայուսակը։ վերցրեց մի փոքրիկ աման և ասաց, որ մի բալասան, մի սպեղանի ունէր, որի շնորհիւ կարելի էր նրա ոտքն առողջացնել։ Այնու-

հետև նա կարող էր մենակ շարունակել իր ճանապարհը, որպէս թէ նրա սրունքը երբէք կոտրուած չէ լինել։ Միայն թէ՝ իբրև վարձատրութիւն, նրա գոգնոցի երեք գաւազանները պահանջեց։

—Նատ թանդ էք պահանջում, ասաց

պառաւը ու գլխով մի այլանդակ շարժում արեց։ Երևում էր որ նա հեշտութեամբ չէր ուզում իր գաւազաններից հրաժարուել։ բայց միւս կողմից, շատ անախորժ բան էր, սրունքը կոտրուած՝ պառկել այդպէս ճանապարհի մէջտեղում։ Հետևաբար, պառաւը յանձնեց երեք գաւազանները օտարականին, որ սպեղանին նրա սրունքի վրայ քսելով առողջացրեց ու պառաւը առաջուանից աւելի հաստատ քայլերով հեռացաւ։ «Ի՞նչ հրաշագործ սպեղանի» մտածեց Ժան։

—Ի՞նչ ուզում ես անել այդ երեք գաւազանները հարցրեց Ժան իր ուղեկցին։

—Սրանք երեք փոքրիկ, սիրուն աւելներ են, որոնց պէտք ունեմ. ես մի քիչ տարօրինակ մարդ եմ։

Նրանք բաւական երկար քայլեցին։

—Տես փոթորիկը մօտենում է, ասաց Ժան. այդ ամպերը հրչափ սև են ու սարսափելի։

—Ո՛չ, պատասխանեց ուղեկիցը. դրանք ամպ չեն, լեռներ են։ Երբ մարդ այդ լեռների վրայ է բարձրանում, հասնում է երթեւեկի ծոցը. ամպերն անդամ ներքև են մնում։ Հաւատա՛ ինձ որ այնտեղից բնութեան տեսքը

հիանալի է. վաղը մենք արդէն այդ լեռ-
ների վրայ կը լինենք։

Բայց պէտք էր ամբողջ օրը քայլել
հասնելու համար այդ լեռներին, որոնց կա-
տարի մութ անտառները երկինքին էին դիպ-
չում և որտեղ մի քաղաքի չափ խոշոր քա-
րեր կային։ Ո՞րչափ պիտի քայլէին, կտրել
անցնելու համար այդ երկար ճանապարհը։
Այս պատճառով էլ Ժան և իր ընկերը մտան
մի պանդոկ։ Պէտք էր հանգստանալ և հե-
տևեալ օրուայ համար ոյժ հաւաքել։

Պանդոկի մեծ սրահում ահագին բազ-
մութիւն կար։ Մի մարդ խամաճիկներ էր
խաղացնում։ Նա դեռ նոր էր հաստատել
իր փոքրիկ թատրոնը. հանդիսատեսները
նրա շուրջը բոլորակ էին կազմել։ Առաջին
կարգում, լաւագոյն տեղը դրաւել էր մի
ծեր, չաղ մսագործ, որին ընկերանում էր
նրա ցլաշունը՝ բուլդօկը։ Ուֆ, կատաղի
անասունը. ինչպէս նա դիտում էր իր մեծ
աչքերով։

Խաղն սկսեց։ Գեղեցիկ էր. ոսկեայ
թագ դրած և ատունաւոր երկար պատ-
մուճաններ հագած՝ մի թագաւոր և մի թա-
գուհի բազմել էին հոյակապ գահի վրայ.

նրանք հարուստ էին և կարող էին այդպէս
ձեռ հագնուել։ Ապակեայ աչքերով, մեծ
բեխերով խամաճիկներ՝ կանգնել էին բոլոր
դռների առաջ, որոնց շարունակ բանում և
փակում էին օդը մաքրելու համար։ Այո,

շատ գեղեցիկ ու մանաւանդ շատ ուրախ
խաղ էր։ Բայց, յանկարծ՝ թագուհին վեր
կացաւ և մի քանի քայլ առաջ եկաւ։ Աստ-
ուած դիտէ թէ ինչի վրայ էր խորհում
այդ պահուն խոշոր ցլաշունը։ Որովհետև
մսագործը նրան չէր բռնում, նա այդ բա-

նից օգտուելով՝ մի ոսաիւն արեց մինչև Թատրոնը և Թադուհիի նուրբ մէջքից խաժաւ։ Զաթ, չուրթ։ Ա՜հ սարսափելի էր։

Խաղը ցոյց տուող խեղճ մարդը վշտից ու յուսահատութիւնից ձեռներն էր ճմլում, որովհետև ցլաշունը՝ Թադուհին՝ նրա տիկնիկներից ամենագեղեցիկին՝ դլուխն էր կերել։

Բայց, երբ ամենքը մեկնեցան, Ժանին ընկերացող օտարականը խոստացաւ շուտով դրստել Թադուհուն դլուխը։ Նա վերցրեց իր փոքրիկ ամանը, և տիկնիկին շփեց այն սպեղանիով, որի շնորհիւ առողջացրել էր արդէն աղքատ պառաւի սրունքը։ Տիկնիկն անմիջապէս բժշկուեց։ Նա կարողանում էր խաղալ մինչև իսկ առանց Թելի։ Խօսելու կարողութիւնն էր միայն պակասում։ Տէրը սքանչացած էր, նրա առանց Թելի պարելը տեսնելով։ Իր տիկնիկներից և ոչ մինը կարող էր այդպէս ինքն իրան պարել։

Գիշերը, երբ պանդոկում ամեն մարդ արդէն պառկել էր, մէկը՝ մի քանի անգամ այնպէս խորը հառաչեց, որ բոլորը զարթնեցին և վեր կացան, իմանալու համար թէ ո՞վ էր այդ հառաչողը։ Խամաճիկների տէրը վազեց Թատրոն, որովհետև հառաչանքի

ձայնը այնտեղից էր գալիս։ Բոլոր տիկնիկները՝ Թադաւորը՝ Թիկնապահների մէջտեղում, խառն ի խուռն պառկել էին։ Նրանք էին ահա ողբագին հառաչում, որովհետև չատ փափաքում էին որ նրանց էլ սպեղանիով շփեն, որպէս զի կարողանան իրանք իրանց շարժուել։ Թադուհին ծունր դրեց և իր փոքրիկ ոսկի Թագը ներկայացնելով ասաց.

—Առէք, բայց շփեցէք սպեղանիով ամուսնուս և պալատականներիս։

Այն ժամանակ, Թատրոնի հեգ տեսուչը անկարող եղաւ իր լացը զսպելու և խոստացաւ ներկայացման բոլոր արդիւնքը տալ, միայն թէ Ժանի ուղեկիցը հաճէր իր ամենագեղեցիկ տիկնիկներից չորսին կամ հինգին սպեղանիով շփել։ Բայց ուղեկիցը, ի փոխարէն, տնօրէնի կողքից կախուած սուրը միայն պահանջեց։ Տնօրէնը ուրախութեամբ ընդունեց պայմանը։ Ժանի ընկերը անմիջապէս սպեղանիով շփեց վեց տիկնիկներին էլ։ Տիկնիկներն այնքան սիրուն կերպով սկսեցին պարել, որ պանդոկի մէջ գտնուող բոլոր աղջիկները, նրանց օրինակին հետևեցին։ Կառապանը պարում էր խոհարարուհու

հու հետ, սպասաւորը՝ սենեկապանուհու հետ։ Բոլորը պարում էին, մինչև իսկ Թիակն և ունելիները։ Բայց այս վերջինները խաղալ չիմանալով, վայր ընկան։ Ի՞նչ ուրախ գիշեր էր։

Հետևեալ օրը Ժան իր ընկերոջ հետ մեկնեցաւ և լեռները, կաղնու մեծ անտառներով ծակծուած բարձր լեռները հասան։ Նրանք այնչափ բարձրացան, որ եկեղեցիների զանգակատները երևում էին ցածր, շատ ցածր դալարիքների մէջտեղում, կարմիր փոքրիկ պտուղների նման։ Ու նրանց առաջ բացւում էր մի անսահման հեռապատկեր։ Ժան այնքան մեծ տարածութիւն երբէք չէր տեսել։ Արեգակի լոյսը լիքնում էր թարմ ու կապոյտ երկնքից։ Որսորդները լեռներում փողահարում էին։ Այդ ամենը այնքան դեղեցիկ էր ու այնքան յուզիչ, որ Ժան ուրախութիւնից լացաւ և աղաղակեց.

—Բարի Աստուած, դու այնչափ ողորմած ես ամենքի համար, որ ես կը փափագէի քեզ համբուրել։ Քեզ միայն պարտական ենք այս բոլոր շքեղութիւնը։

Ուղեկիցը կանգնել էր, ու նա նոյնպէս ձեռքերը միացրած արեգակի լոյսի առաջ

աղօթում էր։ Նրանք դիտում էին անտառները ու քաղաքները։ Ցանկարծ մի տարօրինակ ձայն լսուեց նրանց վերևից։ Բարձրացրին գլուխները։ Մի մեծ սպիտակ կարապ սաւառնում էր օդի մէջ։ Նա հիանալի էր, ու երգում էր այնքան քաղցր, որ նրանք ոչ մի թռչնի այդպէս երգելը չէին լսել։ Բայց նրա ձայնը հետզհետէ մարում էր. նա խոնարհեցրեց գլուխը և դանդաղօրէն ընկաւ նրանց ոտքերի առաջ։ Նա մեռած էր։

—Այս երկու սպիտակ, մեծ թևերը շատ թանգ արժէն, ասաց ուղեկիցը. վերցնեմ սրանց։ Տեսնում ես, լա՞ւ արի, չէ՞, որ սուրը պահանջեցի.

Մի հարուածով մեռած կարապի թեւերը կտրեց և տարաւ։ Ճանապարհորդները՝ ամպերի վերևից շատ ու շատ վերստեր կտրեցին անցան, մինչև որ հեռուից նշմարեցին մի մեծ քաղաք, որի հարիւր զանգակատները, արևի տակ, փայլում էին արծաթի նման։ Քաղաքի մէջտեղում, մի մարմարեայ, ոսկեզօծ դղեակ էր բարձրանում, որտեղ ապրում էր թագաւորը։

Ժան և իր ընկերը անմիջապէս քաղաք մտնել չուզեցին։ Դադար առին մի պանդո-

կում, վրայ դլուխ դրստելու համար. նրանք ցանկանում էին գեղեցիկ երևալ փողոցներում։ Պանդոկապետը նրանց պատմեց, որ թագաւորը մի պատուական մարդ էր, և ոչ ոքի ոչ բարիք և ոչ էլ չարիք էր հասցրել, բայց նրա աղջիկը...

—Աստուած մեզ փրկէ նրանից. շատ

Ի ՅԻՇԱՏ
ԻՒՂԱՐԱ
ՍԵՊՈՒՀԱՆ - ԻՆՁԻՆԵԱՆ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929

չար իշխանուհի է։ Նա արևի նման գեղեցիկ է, բայց ինչի է ծառայում նրա գեղեցկութիւնը։ Նա մի սարսափելի կախարդ է և բազմաթիւ գեղեցիկ իշխանների գլուխն է կերել։

Այդ իշխանուհին՝ անխիլը ամենքին, իշխանի ինչպես մուրացիկի, թոյլ էր տուել

ինդրելու իր ձեռքը։ Բայց պէտք էր գուշակել երեք հանելուկ, որոնց նա առաջարկում էր։ Նա, ով կը կարողանար հանելուկները լուծել, կամուսնանար և իշխանուհու հետ, ու նրա հօր մահից յետոյ, կը բարձրանար թագաւորական գահի վրայ։ Իսկ նրանք որոնք անկարող կը լինէին հանելուկները գուշակելու, կը կախուէին կամ կը գլխատուէին։ Ահա որչափ չար էր գեղեցիկ իշխանուհին։ Նրա հայրը, ալևոր արքան, դրա համար շատ էր վշտացել, բայց չը կարողացաւ իր աղջկայ այդ արիւնալից խաղն արգելել, որովհետև մի անգամ ընդ միշտ յայտարարել էր, որ չը պէտք է բնաւ խառնուէր փեսայի ընտրութեան գործի մէջ. իշխանուհին այդ մասին բացարձակապէս ազատ էր։ Ամեն անգամ, երբ մի իշխան, գեղեցկուհուն հետ ամուսնանալու համար փորձել էր հանելուկները գուշակել՝—չէր յաջողել և գլխատուել կամ կախաղան էր բարձրացել։ Բանը նրանումն է սակայն, որ այդ իշխաններին նախազգուշացրել էին. ինչու նրանք յամառել էին։ Ծերունի թագաւորը՝ իր աղջկայ այդ վարմունքից այնքան զզուել էր, որ ամեն տարի, իր զօրքերի հետ,

մի ամբողջ օր ծնրադիր աղօթում էին, որ-
պէս զի իշխանուհին բարի լինի, նրա սիրտը
կակղի։ Բայց իզո՞ւր։ Արաղ խմող պառաւ
կնանիքը, իրանց վիշտն արտայայտելու հա-
մար սև ներկեցին իրանց արաղը։ Դրանից
աւելի ի՞նչ կարող էին անել։

—Անպիտա՜ն իշխանուհի, ասաց Ժան,
արժանի է որ նրան մի լաւ մտրակեն, գուցէ
այն ժամանակ խելքը գլուխը գայ։ Ա՞խ,
եթէ ես ծերունի թագաւորի տեղը լինէի,
նրան ցոյց կը տա՛յի...

Նոյն րոպէին երկու ընկերները լսեցին
որ ժողովուրդը բղաւում էր «հուռռա՜,
հուռռա՜»։ Իշխանուհին էր անցնում։ Ար-
դարև, նա այնչափ գեղեցիկ էր, որ ամեն
մարդ նրան տեսնելով մոռանում էր նրա
չարութիւնը։ Ահա դրա համար բղաւում էին,
հուռռա՜։ Սպիտակ մետաքսեայ շրջազգեստ
հագած, մի մի ոսկեայ կակաչ ձեռներումը,
ածուխի նման սև ձիերի վրայ նստած՝
տասներկու սիրուն օրիորդներ շրջապատում
էին նրան։ Իսկ իշխանուհին նստել էր ա-
դամանդներով և սուտակներով պճնուած
սպիտակ, ձիւնի նման սպիտակ մի ձիու
վրայ։ Նրա զգեստները զուտ ոսկուց էին,

ու ձեռքին բռնած մտրակը արեգակի մի
ճառագայթի էր նմանում։ Նրա գլխի թագը
երկնքի աստղերից կազմած էր թւում, և
շրջազգեստը՝ ասես պատրաստուած լինէր
բիւրաւոր թիթեռնիկների հրաշալի թևերից։
Այնուհանդերձ, նա իր հագուստներից էլ
գեղեցիկ էր։

Երբ Ժան նրան նշմարեց արիւնի նման
կարմրեց և անկարող եղաւ մի բառ անգամ
արտասանելու։ Իշխանուհու դէմքը նման էր
այն տեսիլքին, որը նա ունեցել էր իր վախ-
ճանած հօր սնարի մօտ։ Նրան չափազանց
գեղեցիկ գտաւ, ու սիրեց։

—Անկարելի է, ասաց, որ նա մի չար
կախարդ լինի, և հանելուկները լուծել չը
կարողացողներին կախել կամ գլխատել տայ։
Ամեն մարդ, մինչև իսկ վերջին մուրացիկը
աղատ է նրա ձեռքը խնդրելու, այնպէս
չէ։ Ես էլ կը գնամ ուրեմն դղեակ, այո՛,
անպատճառ պէտք է որ գնամ, ես ուզում
եմ գնալ։

Ամենքը նրան ասացին որ սխալւում է,
թէ անկասկած նա էլ պիտի ենթարկուի
միւսների դժբաղդ վիճակին։ Նրա ընկերն
էլ չանաց համոզել, բայց Ժան անդրդուելի

մնաց։ Խնամով խոզանակեց զգեստները, փայլեցրեց կօշիկները, մանրակրկիտ կերպով լուաց ձեռքերն ու երեսը, կարգի բերաւ գեղեցիկ խարտեաշ մազերը և մենակ մտաւ քաղաք դղեակ գնալու համար։

—Մտէք, ասաց, Ծերունի Թագաւորը, երբ Ժան դղեակի դուռը բաղխեց։ Ժան ներս մտաւ, և Ծերունի Թագաւորը գիշերազգեստով, սաեղնազարդ հողաթափներով դիմաւորեց նրան։ Նա կրում էր գլխին ոսկի թագ, մի ձեռքին արքայական գաւազանը և միւսին մի ոսկեայ խնձոր։

—Սպասեցէք, ասաց նա, խնձորը կըռնատակին դնելով, որպէս զի ձեռք տայ Ժանին. բայց, երբ լսեց թէ եկել էր իշխանուհու ձեռքը խնդրելու, այնչափ սաստիկ լացաւ, որ գաւազանն ու խնձորը վայր ընկան և ստիպուեց աչքերը սրբել գիշերազգեստով։ Հէդ Ծերունի Թագաւոր։

—Հրաժարուիր այդ մտքից, աղաղակեց նա, միւսների նման քո վախճանն էլ վատ կը լինի. արի, տես.

Նա Ժանին առաջնորդեց իշխանուհու պարտէզը։ Սարսափելի բան. իւրաքանչիւր ծառի կատարից երեք կամ չորս արքայորդիներ կախուել էին։ Ամեն անգամ, երբ քամին փչում էր, նրանց կմախքները իրար զարնուելով հնչում էին ու փոքրիկ թռչունները նրանցից փախչում էին այլ ևս չը վերադառնալու համար։ Ամեն տունկ մի ոսկոր էր կրում. ծաղկամանների մէջ մեռելի գլուխներ ծիծաղում և իրանց ատամներն էին կրճատացնում։

—Տեսնում ես, ասաց ալևոր Թագաւորը. քեզ, սրանցից լաւագոյն բաղդ չի սպասում. հրաժարուիր քո մտքից, ես շատ եմ տանջուում այս թափուած արիւններից. դու ինձ կը դժբաղդացնես։

Ժան՝ Ծեր, բարի Թագաւորի ձեռքը համբուրեց և ասաց որ երբէք երկիւղ չը կրէ, ինքը պիտի յաջողի, որովհետև իշխանուհուն չափազանց շատ է սիրում։

Նա՝ միևնոյն ժամանակ, իր նաժիշտների ընկերակցութեամբ մտաւ դղեակ և երկուսը միասին ընդ առաջ գնացին բարի լոյս մաղթելու համար։ Մեծ շնորհալիութեամբ նա ձեռքն երկարեց Ժանին։ Ժան աւելի քան երբէք սիրեց նրան և պնդեց որ սխալուում էին նրան մի չար կախարդ կարծելով։ Յետոյ նրանք բարձրացան մեծ

սրահը, որտեղ փոքրիկ մանկաւիկներ նրանց
քաղցրեղէն մատուցին։ Բայց ծեր թագա-
ւորը այնքան տխուր էր, որ ոչինչ չը կարո-
ղացաւ ուտել, բացի այդ, շաքարները շատ
կարծր էին նրա ատամների համար։ Որոշ-
ուեց որ Ժան՝ հետևեալ օր պիտի վերա-
դառնար դղեակ, և դատաւորների և նա-
խարարական խորհրդի ներկայութեամբ պի-
տի փորձէր դուշակել առաջին հանելուկը։
Եթէ նա յաջողէր, երկու անգամ էլ հանե-
լուկ պիտի առաջարկուէր։ Բայց, մինչև այդ
օրը, ոչ ոք յաջողել էր նոյն իսկ առաջին
հանելուկը լուծելու։ Բոլորն էլ կորցրել էին
իրանց գլուխը,

Ժան իր բաղդից բնաւ չէր վախենում.
ընդհակառակը նա հրճուում էր, և դեղեցիկ
իշխանուհու վրայ միայն էր մտածում։ Նա
հաստատապէս համոզուած էր, որ բարի Աս-
տուած նրան կօգնէ։ Բայց ինչպէս։ Այդ
նա չը գիտէր և չէր էլ ուզում այդ մասին
խորհել։ Պանդոկ վերադառնալու ժամանակ,
որտեղ սպասում էր նրա ընկերը, նա ուրա-
խութիւնից պարեց մեծ ճանապարհի վրայ։

Ժան՝ բառ չը գտաւ պատմելու հա-
մար, թէ իշխանուհին որքան սիրալիր եղել

էր նրա հետ և որքան դեղեցիկ էր։ Ո՞րչափ
անհամբերութեամբ նա յաջորդ օրուան էր
սպասում դղեակ դառնալու և բաղդը փոր-
ձելու համար։ Բայց ուղեկիցը գլուխը ցն-
ցում էր տխրութեամբ.

—Ես քեզ շատ եմ սիրում, ասաց նա,
մենք կարող էինք տակաւին երկար ժամա-
նակ իրար հետ ապրել։ Ի՞նչ, պէտք է շու-
տով քեզնից զրկուեմ։ Խե՜ղճ Ժան, ես ու-
զում եմ լալ, բայց քո ուրախութիւնը պըղ-
տորելուց վախենում եմ։ Դուցէ սա վերջին
երեկոն է, որ մենք միասին ենք անցկաց-
նում։ Է՜հ, ուրախ լինենք։ Ես վաղը կը լամ,
երբ դու մեկնած կը լինես։

Քաղաքում, ամեն մարդ գիտէր, որ մի
նոր փեսացու է յայտնուել։ Ցնծութիւնը
ընդհանուր էր։ Թատրոնները փակել էին,
քաղցրաւենիքի վաճառականները սև քօղով
ծածկել էին իրանց շաքարեայ տիկնիկները,
թագաւորը և քահանաները եկեղեցում
ծնկաչոք աղօթում էին և ամենքի վիշտը
մեծ էր։ Մի թէ միւսներից տարբեր վախ-
ճան կունենար Ժանը։

Երեկոյեան դէմ, Ժանի ընկերը մի մեծ
ման պօնչ պատրաստեց և ասաց.

— Օ՛ն, ուրախանանք և խմենք իշխանուհու կենացը։

Բայց, երբ Ժան երկու բաժակ խմեց, գլուխը ծանրացաւ, աչքերը փակուեցին և ակամայ քնեց։ Ուղեկիցը նրան մեղմով վերցրեց աթոռից և դրաւ անկողնու վրայ։ Երբ մութը կոխեց, կարապի մեծ թևերը վեր առաւ և կպցրեց ուսերին։ Գրպանը դրեց պառաւի գաւազաններից ամենամեծը, պատուհանը բացաւ և քաղաքի վրայից թռաւ մինչև մարմարեայ դղեակը։ Այնտեղ, իշխանուհու ննջասենեակի պատուհանի տակ, մի անկիւնում նստեց։

Քաղաքի վրայ տարածւում էր խոր լռութիւն։ Կէս գիշերուայ բառորդ ժամ մնացած՝ պատուհանը բացուեց և իշխանուհին՝ սև, երկար թևերով, փաթաթուած՝ մի սպիտակ լայն վերարկուի մէջ, թռաւ քաղաքի վրայից և կուղէր հասնել մի մեծ սարի։ Ժանի ընկերը անտեսանելի դարձաւ և հետևեց իշխանուհուն, արիւնելու ասպիճան նրան գաւազանով խփելով։ Ո՜ւֆ, ինչ ճանապարհորդութիւն։ Քամին՝ նրա վերարկուն առագաստի նման ուռեցրեց.

— Ա՜խ, ինչպէս կարկուտ է գալիս, ա-

սում էր իշխանուհին գաւազանի իւրաքանչիւր հարուածն սուանալիս։

Նա արժանի էր այդ հարուածներին։

Վերջապէս հասաւ լեռան ու բաղխեց։ Լսուեց որոտումի նման մի աղմուկ։ Լեռը բացուեց և իշխանուհին ներս մտաւ։ Ժանի ընկերը՝ միշտ աչխատելով անտեսանելի դառնալ, սողոսկեցաւ նրա ետևից։

Նրանք անցան մի երկար նրբուղիով, որի պատերը փայլատակում էին տարօրինակ կերպով. բիւրաւոր բոցեղէն սարդեր՝ բարձրանում էին և իջնում։ Ահա ինչից էին կազմուած այդ պատերը։ Այնուհետև հասան արծաթահուռ, ոսկեքանդակ մի մեծ սրահ։ Կարմիր, կապոյտ, արեգակի չափ մեծ ծաղիկներ փայլում էին պատերի վրայ։ Բայց ոչ ոք կարող էր նրանց քաղել, որովհետև ցօղունները թունաւոր, ագեղ օձեր էին և իրանք՝ ծաղիկները՝ այդ օձերի կոկորդից բղխած բոցեր էին միայն։ Ամբողջ առաստաղը փոսուռաներով ցանցնուած էր և երկնագոյն չղջիկներ թափահարում էին իրանց թևերը։ Ո՜րքան տարօրինակ էր այդ բոլորը։ Տախտակամածի մէջտեղում բարձրանում էր մի գահ, որը զետեղուած էր

չորս ձիու կմախքի վրայ, որոնք ասպազին-
ուած էին փայլակնացայտ սարդերով։ Գա-
հը՝ կաթի նման սպիտակ շիշից էր և նրա
յենարան-բարձերը փոքրիկ սև մկներ էին,
որոնք իրանց պոչն էին խածոտում։ Նրա
վրայ կար մի ամպհովանի, որը սարդի կարմիր
ոստայնից էր և որը զարդարուած էր կա-
նաչ, փոքրիկ, սիրուն, աղամանդի նման փայ-
լող ճանճերով։ Գահի մէջտեղ նստել էր մի
պառաւած կախարդ, որը գլխին թաղ էր
կրում և ձեռքին՝ դաւազան։ Նա համբուրեց
իշխանուհուն՝ ճակատից, հրաւիրեց նրան
իր մօտ թանկագին գահի վրայ և երաժշ-
տութիւնն սկսեց։ Սև, մեծ մարախներ պա-
րում էին ...և բուն՝ թմբուկի փոխարէն, իր
փորն էր դափում։ Իսկ որ մի այլանդակ
նուագահանդէս։ Գդակի վրայ մի մի շրջմո-
լիկ-հուր կրող, փոքրիկ սև ուրուականներ
սրահում շուրջպար էին դառնում։ Ո՛չ ոք
տեսաւ ժանի ընկերոջ. նա գահի յետևումն
էր թաքնուել, որտեղից նա և՛ լսում էր և՛
տեսնում բոլորը։ Շուտով մտան պալատա-
կանները, որոնք ճոխ կերպով էին հագնուել
և քայլում էին սիգալով։ Բայց ով որ զանա-
զանելու մի քիչ կարողութիւն ունէր, իսկոյն

և եթ նրանց բուն արժանիքը կը գնահա-
տէր։ Նրանք պարզապէս աւելի կոթեր էին
կազմբեայ գլուխներով, որոնց կախարդը
կեանք էր ներշնչել և հագցրել էր ասեղ-
նազարդ զգեստներ։ Է՜հ, դրանից աւելին
էլ հարկաւոր չէր, որպէս զի նրանք այդպէս
հպարտանային։

Երբ պարերն աւարտեցան, իշխանու-
հին պատմեց կախարդին, որ մի նոր փեսա-
ցու էր մէջտեղ եկել, և նրան առաջարկելի
հանելուկի մասին խորհուրդ հարցրեց.

—Եթէ դու ուզում ես, իմ խորհրդին
հետևել, ասաց կախարդը, խորհիր մի այն-
պիսի պարզ բանի վրայ, որի մասին նա կաս-
կածել անդամ չը կարողանայ։ Մտածիր քո
կոշիկների մէկի վրայ. այո՛, այո՛, քո կոշիկ-
ների մէկի վրայ. նա անկարող կը լինի
դուշակելու։ Այն ժամանակ կտրել տուր
նրա գլուխը. բայց չը մոռանաս վաղը դի-
շեր ինձ բերելու նրա աչքերը, որ ես անուշ
անեմ։

Իշխանուհին խորը գլուխ տուաւ և խոս-
տացաւ աչքերը բերել։ Ցեռոյ կախարդը
բացաւ լեռը ու նա թռաւ։ Ժանի ընկերը
միշտ հետևում էր նրան և միշտ խփում

էր այնչափ ուժով, ինչպես ուժով, որ նա դառնապէս գանգատուում էր։

—Ա՜խ, Տէր Աստուած, այս ինչ սարսափելի կարկուտ է.

Երբ պատուհանից ննջասենեակը մտաւ, ուղեկիցը թռաւ դէպի պանդոկ, որտեղ Ժան քնում էր դեռ ևս. հանեց թևերը և ինքն էլ մտաւ անկողին։ Անշուշտ շատ յոգնած լինելու էր, չէ՞։

Ժան, հետևեալ օրը, վաղ առաւօտեան զարթնեց. ուղեկիցն էլ վեր կացաւ և պատմեց, թէ գիշերը մի շատ տարօրինակ երազ էր տեսել. երեւակայեցէք ինչի մասին՝ — մի իշխանուհու և նրա կօշիկի մասին։ Այս պատճառով էլ նա խորհուրդ տուաւ Ժանին պատասխանել իշխանուհուն թէ նա չէ՞ր մտածել իր կօշիկի վրայ։

—Դուցէ դու ճիշտ երազ ես տեսել, ասաց Ժան, աւելի լաւ է որ ես իշխանուհուն այդպէս պատասխանեմ քան թէ ուրիշ կերպով։ Ես միշտ հաւատացած եմ, որ բարի Աստուած ինձ կօգնէ։ Այնու հանդերձ արի ողջագուրուենք և հրաժեշտ տանք իրար, որովհետև, եթէ չեմ սխալուում, մի

ինչ որ նախազգացում ինձ ասում է, թէ ես քեզ չեմ տեսնելու այլ ևս։

Դրա վրայ նրանք համբուրուեցին։ Ժան դէպի քաղաք ուղղուեց և գնաց դղեակ։ Մեծ սրահը բազմութեամբ լիքն էր։ Դատաւորները նստել էին իրանց թիկնաթոռներում և գլխները յենել էին փետրալից բարձերի վրայ, որովհետև շատ պիտի խորհրդածէին։ Ծերունի թագաւորը վեր կացաւ և աչքերը սրբեց մի սպիտակ թաշկինակով։ Վերջապէս ներս մտաւ իշխանուհին։ Նա աւելի գեղեցիկ էր քան նախորդ օրը. շնորհալի կերպով բարևեց և ձեռքը տալով Ժանի.

—Բարև, սիրելիս, ասաց նա։

Ժան պիտի գուշակէր, թէ ինչ բանի մասին խորհել էր նա։ Իշխանուհին բարեկամաբար դիտում էր Ժանը։ Ժան պատասխանեց։

—Իշխանուհի, դուք մտածեցիք ձեր կօշկի մասին, չէ՞.

Իշխանուհու դէմքը կաւիճի նման տժգունեց, երբ լսեց «կօշիկ» բառը, և սկսեց ամբողջ մարմնով դողդղալ.

—Դու, ճիշտ գուշակեցիր, պատասխա-

նեց վերջապէս Իշխանուհին։ Գիտէք ամենից աւելի ո՞վ ուրախացաւ։ Ծերունի Թագաւորը, որ ցնծութիւնից երեխայի նման թռչկոտում էր։ Բոլոր ներկայ եղողները սկսեցին ծափահարել և՛ Թագաւորին և Ժանին։

Առաջին յաջողութեան լուրն ստանալով Ժանի ընկերը նոյնպէս շատ ուրախացաւ։ Ժան միացրեց երկիւղածութեամբ ձեռքերը և շնորհակալ եղաւ բարի Աստուծուց, որը՝ անկասկած, միւս երկու հանելուկներն էլ լուծելու համար պիտի օգնէր իրան։ Հետեւեալ օրը պէտք է դուշակէր երկրորդ հանելուկը։

Այդ գիշերն էլ անցաւ, ինչպէս նախորդ գիշերը։ Երբ Ժան քնեց, նրա ընկերը հետեւեց Իշխանուհուն և նրան խփեց նախորդ օրուանից աւելի ուժգին, որովհետև երկու գաւազան էր վերցրել։ Նրանք մնան կախարդի մօտ։ Ժանի ընկերը դարձեալ ամեն ինչ իմացաւ։ Իշխանուհին՝ այս անգամ, իր ձեռնոցի մասին պիտի մտածէր։ Նա Ժանի յայտնեց առաւօտեան, թէ Իշխանուհին խորհել էր իր ձեռնոցի մասին, որովհետեւ այդպէս ցոյց էր տալիս իր երազը։

Շատ հեշտ եղաւ Ժանի համար, երկրորդ անգամ ճիշտ դուշակել հանելուկը։

Այս անգամ դղեակում տիրեց աննկարագրելի ուրախութիւն։ Ո՛չ միայն Թագաւորը, այլ և ամբողջ արքունիքը ցնծութիւնից թռչկոտում էր։ Իսկ Իշխանուհին այնքան տխրեց, որ մի բառ անգամ չը կարողացաւ արտասանել և ընկաւ մի բազմոցի վրայ։

Այժմ ամեն ինչ կախուած էր երրորդ փորձից։ Եթէ այս անգամ էլ յաջողէր, Ժան պիտի ամուսնանար Իշխանուհուն հետ և Թագաւորի մահից յետոյ պիտի ժառանգէր գահը։ Հակառակ պարագայում, նա կը կորցնէր իր կեանքը և կախարդը կուտէր նրա կապոյտ, գեղեցիկ աչքերը։

Ժան՝ այդ գիշեր վաղ պառկեց, աղօթեց և հանգստութեամբ քնեց։ Բայց ուղեկիցը կպցրեց կարապի թեւերը, սուրը կապեց և երեք գաւազանը միասին վերցնելով թռաւ դէպի դղեակ։

Գիշերը սարսափելի էր. փոթորիկը տանիքների կղմինտրներն էր վայր թափում, և Իշխանուհու պարտիզի մարդկային կմախքներ կրող ծառերը, քամու իւրաքանչիւր

շունչի տակ եղեգների նման ծռւում էին։ Փայլակները անդադար իրար էին յաջորդում։ ԵՒ երկինքը որոտումներից պիտի փլչեր կարծես։

Պատուհանը բացուեց և Իշխանուհին թռաւ։ Նա մահու չափ դժգոյն էր, բայց ծաղրում էր օդի խստութիւնը, որը նա դեռ ևս շատ մեղմ էր գտնում։ Նրա սպիտակ վերարկուն՝ առագաստի նման՝ օդի մէջ պտոյտ էր գալիս ու շաչում։ Ժանի ընկերը՝ երեք գաւազաններով նրան այնպէս ուժգին էր խփում, որ նրա մարմնից արիւնի կաթիլներ ընկնում էին գետին։ Նա հազիւ էր կարողանում թռչել, բայց և այնպէս նա հասաւ լեռ։

—Ի՞նչ անողորմ կարկուտ, ի՞նչ կատաղած քամի, ասաց նա. ես իմ կեանքումս երբէք այսպիսի օդի չէի պատահել։

—Այո՛, այդ տեսակ օդ յաճախ ենք վայելում, պատասխանեց կախարդը։

Իշխանուհին պատմեց նրան, թէ Ժանը երկրորդ անգամին էլ ճիշտ էր գուշակել։ Եթէ վաղն էլ յաջողէր, այն ժամանակ իրանց բանը բուրդ էր։ Նա չէր կարող այլ ևս վերադառնալ լեռ և գործ դնել իր կախարդութիւնները։ Նա շատ ցաւ էր զգում դրա համար։

—Այս անգամ նա չի կարող գուշակել, բացագանչեց կախարդը։ Մի՞թէ նա ինձնից աւելի մեծ կախարդ է։ Ես կը գտնեմ մի այնպիսի բան, որը նա, եթէ կաշուից անգամ դուրս գայ, չի կարող գուշակել։ Առ այժմ մենք զուարճանանք։

Նա բռնեց Իշխանուհու երկու ձեռքերից և սրահում գտնուող ուրուականների և շրջմոլիկ հուրերի հետ սկսեցին շուրջպար դառնալ։ Կարմիր սարդերը ուրախութեամբ ոստոստում էին պատերի վրայ. բոցեղէն ծաղիկները փայլատակում էին. բուն թըմբուկ էր ածում, ծղրիթները երգում էին, սև մարախները իրանց ատամներով վին էին ածում։ Պարահանդէսը չափազանց ոգևորուած էր, արդարև։

Երբ նրանք պարելուց ձանձրացան, Իշխանուհին պատրաստուեց դղեակ վերադառնալ, որպէս զի իր բացակայութիւնը չը նկատուի։ Կախարդը պատրաստակամութիւն յայտնեց նրան ուղեկցելու։

Նրանք փոթորկալից օդի միջից թռան և Ժանի ընկերը հեռևելով նրանց, իր երեք

դաւաղաններն էլ կոտրեց նրանց ողնաշարի վրայ։ Կախարդը նոյնպէս սկսեց տրտնջալ և յայտնեց որ երբէք չէր հանդիպել մի այդպիսի կարկուտի։ Դղեակի մօտ նա հրաժեշտ տուաւ իշխանուհուն և կամաց շշնջաց նրա ականջին.

—Մտածիր իմ գլխի մասին։

Բայց Ժանի ընկերը լսել էր արդէն։ Այն րոպէին, երբ իշխանուհին պատուհանից սողոսկեց իր ննջասենեակը, և կախարդն ուզում էր վերադառնալ, Ժանի ընկերը բռնեց կախարդի երկար, սև մօրուքից և իր սրով կտրեց նրա այլանդակ գլուխը։ Այդ՝ այնքան շուտ կատարուեց, որ կախարդը մինչեւ անգամ չիմացաւ։ Ուղեկիցը նրա մարմինը նետեց լճի մէջ։ Իսկ գլուխը ջրով լաւ լուանալուց յետոյ, փաթաթեց իր թաշկինակի մէջ, տարաւ պանդոկ և մտաւ անկողին։

Առաւօտեան, թաշկինակը տուաւ Ժանի և պատուիրեց բանալ այն ժամանակ, երբ իշխանուհին կուզէր երրորդ հարցումը։

Դղեակի մեծ սրահում այնքան բազմութիւն էր հաւաքուել, որ մարդիկ դարսուել էին միմեանց վրայ ինչպէս բողկերը մի կապոցում։ Դատաւորները՝ փեսրալից

բարձերը գլխների տակ, խորհրդի էին նստել։ Ծերունի թագաւորը հագել էր նոր զգեստներ։ Նրա ոսկեայ թագը և արքայական գաւազանը վառվռում էին, որովհետև նրանց մաքրել, յղկել էր տուել։ Բայց իշխանուհին մեռելի նման գունատ էր։ Նա կրում էր սև շրջազգեստ, որպէս թէ թաղման ներկայ լիներ։

—Ինչի՞ մասին եմ մտածում այժմ, հարցրեց նա Ժանին։

Ժան բաց արեց թաշկինակը, և կախարդի զարհուրելի գլուխը տեսնելով՝ ինքն էլ մնաց ապշած։ Մի ընդհանուր սարսուռ անցաւ ներկայ եղողների վրայից։ Իսկ իշխանուհին արձանացաւ, պապանձուեց։ Վերջապէս նա վեր կացաւ և ձեռքն երկարեց Ժանի, որովհետեւ ճիշտ էր գուշակել, և առանց համարձակելու իր շուրջը դիտել, նա խոր հառաչեց և ասաց.

—Այժմ, դու իմ տէրն ես. այս երեկոյ մենք կը տօնենք մեր հարսանիքը։

—Կեցցէ, կեցցէ՛ բացագանչեց Ծերունի թագաւորը։

Բոլորը՝ հուռռա՜, հուռռա՜ աղաղակեցին։ Անմիջապէս զինուորական երաժշտու-

թիւնը թնդաց փողոցներում, եկեղեցու զանգակները սկսեցին երգել օդի մէջ, քաղցրաւենիքի վաճառականները վեր առին սեքօղերը և ընդհանուրի ուրախութեան չափ չը կար։ Շուկայի մէջտեղում սարքեցին խնջոյք։ Երեք եղների փորը բաղով և վառեակով լեցնելով տապակեցին և դրին սեղանի վրայ, որպէս զի ամէն մարդ մասնակից լինի խնջոյքին։ Ամենապատուական գինին ջրի նման վազեց փողոցներում։ Ով որ հացագործից մի կոպէկի հաց էր գնում, հացի հետ ստանում էր վեց խոշոր կարկանդակ, և ինչ համեղ կարկանդակ։

Երեկոյեան ամբողջ քաղաքը լուսավառուեց։ Զինուորները թնդանօթներ էին արձակում, իսկ երեխաները փամփուշտներ էին պայթեցնում։ Դղեակում ուտում էին, խմում էին, կենացներ էին առաջարկում, թռչկոտում էին եւ պարում։ Բոլոր ազնուական պարոններն ու դեղեցիկ տիկինները մասնակցում էին պարին։ Դղեակում, ոչ մի ժամանակ այդպիսի ուրախութիւն էր կատարուել։

Իշխանուհին միայն տխուր էր, որովհետև նրա վրայից կախարդութիւնը չէր

հեռացել և հետևաբար, նա չէր սիրում Ժանին։ Ուղեկիցը դրա ճարն էլ գտաւ։ Նա Ժանին տուաւ կարապի թեւից երեք փետուր և մի սրուակ, որը մի ինչ որ հեղուկի կաթիլներ էր պարունակում։ Յետոյ պատուիրեց հարսանեկան անկողնու մօտ դնել ջրով լիքը մի տաշտ, փետուրներն ու սրուակի պարունակութիւնը ածել նրա մէջ, և երեք անգամ իշխանուհուն ընկղմել ջրում։ Դա միակ միջոցն էր, իշխանուհուց կախարդանքը հեռացնելու և նրա մէջ Ժանի համար սէր ծնեցնելու։

Ժան իր ընկերոջ բոլոր պատուէրները կէտ առ կէտ կատարեց։ Երբ իշխանուհուն ջրի մէջ ընկղմեց, նա սուր ճիչեր արձակեց եւ աշխատում էր փախչել Ժանի ձեռքից։ Առաջին ընկղմումից յետոյ, նա փոխուեց մի սեւ, փայլակնացայտ կարապի։ Երկրորդ ընկղմումից յետոյ, կարապը սպիտակացաւ, միայն մի սեւ օղակ մնաց նրա վզի շուրջը։ Ժան աղօթեց բարի Աստուծուն, եւ երբ թռչունին՝ երրորդ անգամ ջրի մէջ ընկղմեց, նա դուրս եկաւ հիանալի կերպով գեղեցիկ մի իշխանուհի։ Նա աւելի քան երբէք պաշտելի էր. ար-

տասուլն աչքերին՝ շնորհակալութիւն յայտնեց Ժանի, որ նրանից հանել էր դեւերը։

Յաջորդ օրը, Ծերունի թագաւորը՝ բոլոր պալատականների ընկերակցութեամբ այցելեց իշխանուհուն։ Ամբողջ օրը շնորհաւորութիւններով անցաւ։ Ուղեկիցը փայտը ձեռքին և մախաղը կռնակին՝ ներկայացաւ դղեակ, վերջին անգամ տեսնելու Ժանին։ Ժան նրան համբոյրներով ծածկեց և չէր ուզում թողնել, որ իր երջանկութեան հեղինակը հեռանայ, Բայց նա ցնցեց գլուխը, և քաղցր ու բարեկամական ձևով ասաց.

—Ո՛չ, ժամանակ է բաժանուելու. ես վճարեցի իմ պարտքը. յիշում ես դու այն մեռելը, որին երկու չար մարդիկ ուզում էին դագաղից դուրս շպրտել։ Դու տուիր քո ունեցած չունեցածը՝ նրա գերեզմանի հանգիստը ապահովելու համար։ Այդ մեռելը՝ ես եմ։

Այդ խօսքերից յետոյ, նա անհետացաւ։

Մի ամբողջ ամիս տեւեց հարսանիքը։ Ժան և Իշխանուհին իրար սիրեցին խանդակաթ ու քնքուշ սիրով։ Ծերունի թագաւորը տակաւին շատ ուրախ օրեր անց-

կացրեց։ Նա տեսաւ իր թոռներին, որոնց յաճախ նստեցնում էր իր ծնկների վրայ և տալիս էր իր արքայական գաւազանը նրանց ձեռքը իբրև խաղալիք։

Նրա մահից յետոյ, Ժան բարձրացաւ թագաւորական գահի վրայ։

ՓՈՔՐԻԿ ԻԴԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ

—Խեղճ ծաղիկներս, բոլորը մեռել են, ասաց փոքրիկ Իդան։ Երեկ երեկոյեան նը-
րանք այնքան գեղեցիկ էին, իսկ այժմ, նը-

րանց ամբողջ տերևները կախուել են, չո-
րացել։ Ինչ՞ն է այս, հարցրեց նա՝ այն ու-
սանողին, որ նստել էր բազմոցի վրայ և
որին շատ էր սիրում։

Ուսանողը չափազանց սիրուն պատմու-
թիւններ գիտէր և շատ զուարճալի պատ-
կերներ կարում էր թղթից, օրինակի համար
պարոդ փոքրիկ կիներ, ծաղիկներ, մեծ
դղեակներ որոնց դուռը կարելի էր բանալ
և փակել։ Օ՜, նա մի շատ ուրախ ուսա-
նող էր։

—Ի՞նչու համար իմ ծաղիկները այսօր
այդպէս տխուր կերպարանք ունեն, հարց-
րեց երկրորդ անգամ Իդա, նրան ցոյց տա-
լով բոլորովին չորացած մի փնջիկ։

—Ես քեզ իսկոյն կասեմ, թէ ինչ ու-
նեն նրանք, պատասխանեց ուսանողը։ Քո
ծաղիկները՝ այս գիշեր, պարահանդէս են
գնացել, և պարելով պարելով յոգնել են. ահա
ինչու համար նրանց գլուխները այդպէս
կախ ընկած են։

—Բայց, չէ՞ որ ծաղիկները պարել չը
գիտեն, ասաց փոքրիկ Իդան։

—Հաւատացիր գիտեն, պատասխանեց
ուսանողը։ Երբ մթնում է և մենք ամենքս
քնում ենք, նրանք համարեա ամեն գիշեր
թռչկոտում են, պարում են և զուարճանում՝
որքան կարողանում են։

—Լաւ, երեխաները չէն կարող նրանց պարահանդէսին ներկայ լինել։

—Ի՞նչպէս չէ, պատասխանեց ուսանողը. պարտէզի երեխաները՝ ինչպէս փոքրիկ մարգարիտները և փոքրիկ մեխակները։

—Ո՞րտեղ են պարում դեղեցիկ ծաղիկները, հարցրեց փոքրիկ Իդան։

—Դու քաղաքից դուրս չէս եկել երբէք. չէս եղել մեծ դղեակի կողմերում, ուր Թագաւորը բնակւում է ամառը և որտեղ կայ ծաղիկներով լի մի հիանալի պարտէզ։ Դու տեսած կը լինես կարապները, որ լողում են դէպի քեզ, երբ դու նրանց հացի փշրանքներ ես տալիս։ Ահա այնտեղ են տրւում մեծ պարահանդէսները։

—Երէկ մայրիկի հետ պարտէզ գնացինք, պատասխանեց փոքրիկ աղջիկը. բայց ծառերի վրայ ոչ մի տերեւ կար, ոչ էլ մի հատ ծաղիկ՝ պարտիզում։ Ո՞րտեղ են այժմ այն բոլոր ծաղիկները, որոնց տեսայ ամառ ժամանակ։

—Նրանք դղեակի ներսումն են, ասաց ուսանողը։ Թագաւորը և պալատականները հաղիւ թէ քաղաք վերադարձած, ծաղիկները իսկոյն թողնում են պարտէզը, մըտ-

նում են դղեակ և ուրախ զուարթ կեանք վարում։ Ա՜հ, տեսնելու բան է։ Երկու ամիս գեղեցիկ վարդերը նստում են գահի վրայ և դառնում են թագաւոր և թագուհի։ Արնագոյն կակաչները կարգաւ շարւում են նրանց երկու կողմում և խոնարհութիւն անում. դրանք թագաւորական տան սպաներն են (օֆիցէր)։ Յետոյ գալիս են միւս ծաղիկները և մի մեծ պարահանդէս են սարքում։.. Կապոյտ մանուշակները՝ ծովային դպրոցի աշակերտները՝ յակինթածաղիկների և քրքումների հետ պարում են նրանց օրիորդ, օրիորդ, կոչելով։ Կակաչների և կարմիր մեծ շուշանների՝ այսինքն տիկինների պաշտօնն էր հսկել, որպէս զի ամեն մարդ պատշաճ կերպով պարէ և ամեն ինչ անց կենայ, ինչպէս որ հարկն է։

—Բայց, հարցրեց փոքրիկ Իդան, ծաղիկներին չէն պատժում՝ թագաւորական դղեակում պարած լինելուն համար։

—Համարեա ոչ ոք գիտէ այդ բանը, ասաց ուսանողը։ Ճիշտ է, երբեմն, գիշեր ժամանակ, ծեր վերակացուն գալիս է դղեակում շրջելու համար։ Բայց նա կրում է բանալիների մի մեծ տրցակ եւ հէնց որ

ծաղիկները լսում են բանալիների շրխկոցը, անմիջապես թագնւում են երկար վարդոյրների յետեւը՝ գլխները միայն դուրս հանելով.

—Զգում եմ, որ այստեղ ծաղիկներ կան, ասում է ծեր վերակացուն, բայց չի տեսնում նրանց։

—Հիանալի է, բացագանչեց փոքրիկ Իդան ծափահարելով։ Արդեօք ես էլ չեմ կարող նրանց պարը տեսնել։

—Դուցէ, ասաց ուսանողը։ Երբ գնաս թագաւորի պարտէզը, պատուհանից մտիկ տուր եւ կը տեսնես։ Ես այսօր իսկ գիտեցի։ Այնտեղ բազմոցի վրայ փռուել էր մի երկար դեղին շուշան։ Դա մի պալատական տիկին էր։

—Բուսաբանական պարտէզի ծաղիկներն էլ այնտեղ գնում են արդեօք. եթէ նրանք ուզեն գնալ, ինչպէս կարող են այդ երկար ճանապարհը կտրել անցնել։

—Եթէ նրանք ուզեն, կարող են թռչել, ասաց ուսանողը։ Մի թէ չէս տեսել կարմիր, դեղին եւ սպիտակ սիրուն թիթեռնիկներ. նրանք մի թէ բոլորովին նման չեն ծաղիկներին։ Թիթեռնիկները առաջ

ծաղիկներ են եղել, որ իրանց ցօղունները թողնելով բարձրացել են օդի մէջ, յետոյ իրանց տերեւները շարժել են փոքրիկ թեւերի նման և սկսել են թռչկոտել։ Եւ որովհետեւ նրանք չարութիւն չեն արել, թոյլ տուութիւն են ստացել թռչկոտելու ամբողջ օրը։ Նրանք վարժուել են օդի մէջ ապրել և էլ կարիք չունեն իրանց ցօղունին նորից կպչելու։ Վերջ ի վերջոյ նրանց տերեւները իսկական թեւերի են փոխուել։ Կարող է պատահել, որ բուսաբանական պարտէզի ծաղիկները ոչ թէ միայն թագաւորի պարտէզը գնացած չը լինեն, այլ և տեղեկութիւն անգամ չունենան, որ այնտեղ ծաղիկները՝ գիշեր ժամանակ, ուրախ զուարթ կեանք են անցնում։ Ուզում եմ քեզ մի բան ասեմ։ Երբ բուսաբանական պարտէզ գնաս, լաւ տուր մի ծաղկի, թէ դղեակում մեծ պարահանդէս կայ. նա էլ միւս բոլոր ծաղիկներին կը յայտնէ և նրանք ամենքը կը թռչեն դէպի դղեակ։ Երեւակայում եմ արդեօք, թէ որչափ պիտի ապշի մեր հարեւանը՝ բուսաբանութեան ուսուցիչը, երբ պարտիզում ոչ մի ծաղիկ չը գտնէ։

—Բայց ինչպէս մի ծաղիկ կարող է

միւսներին լուր տալ, հօ ծաղիկները խօսել չեն իմանում։

—Այդ ճիշտ է, պատասխանեց ուսանողը. բայց նրանք շատ լաւ գիտեն շարժել ու ձեւերով խօսել։ Չէս տեսել որ, երբ մի քիչ քամի է փչում, ծաղիկները խոնարհւում են, և գլխով իրար ինչ որ նշաններ են անում։ Չէս նկատել, որ բոլոր կանաչ տերեւները շարժւում են։ Այդ շարժումները նրանց համար նոյնքան հասկանալի են, որքան խօսքերը մեզ համար։

—Արդեօք ուսուցիչը նրանց լեզուն հասկանում է, հարցրեց Իդան։

—Այո, անկասկած։ Մի օր, երբ նա պարտիզումն էր, մի մեծ եղիճ նշմարեց, որ իր տերեւներով՝ մի կարմիր, գեղեցիկ շահոբրամի նշաններ էր անում։ Եղիճն ասում էր. «Ո՞ւրքան գեղեցիկ ես, ես քեզ շատ եմ սիրում»։ Ուսուցիչը բարկացաւ և խփեց եղիճի այն տերեւներին, որ ծառայում են իբրեւ մատ։ Տերեւները խայթեցին ուսուցչին։ Այդ օրից սկսած, ուսուցիչը այլ ևս չի համարձակում դիպչել եղիճին։

—Շատ տարօրինակ է այդ, ասաց փոքրիկ Իդան, և սկսեց ծիծաղել։

Փոքրիկ Իդան մեծ հաճոյքով էր լսում ուսանողի պատմածները։ Այժմ նա խորհրդածում էր. «Ծաղիկներս իրանց գլուխը խոնարհել են, որովհետև ամբողջ գիշերը պարելուց յոգնել են։ Անշուշտ նրանք հիւանդ են»։ Իդան վերցրեց ծաղիկներին և տարաւ իր միւս խաղալիքների մօտ, որոնք գտնւում են մի փոքրիկ սիրուն սեղանի վրայ։ Այդ սեղանի դարակն էլ լիքն էր գեղեցիկ խաղալիքներով։ Նա տեսաւ, որ իր տիկնիկը՝ Սոֆին՝ սեղանի վրայ քնել էր։ Փոքրիկ Իդան նրան ասաց. «Վեր կաց Սոֆի, և այս գիշեր քնիր դարակում։ Իմ խեղճ ծաղիկները հիւանդ են, և պէտք է որ քո տեղը պառկեն։ Գուցէ նրանք առողջանան»։

Ու վերցրեց տիկնիկը։ Սոֆի յօնքերը կիտեց և մի բառ անգամ չարտասանեց. շատ էր բարկացել, որ ստիպուած եղաւ իր անկողնից բաժանուելու։

Իդա ծաղիկներին պառկեցրեց Սոֆիի անկողնում, նրա փոքրիկ վերմակով նրանց լաւ ծածկեց և պատուիրեց որ խելօք, հանդիստ քնեն։ Յետոյ գնաց թէյ պատրաստելու, որպէս զի խմեն, քրտնեն և հետեւեալ օրը, ուրախ, զուարթ վեր կենան։

Փոքրիկ անկողնու վարագոյրներն էլ վայր բաշեց, որ արեւը նրանց աչքերի մէջ ընկնելով՝ չը նեղացնի։

Ուսանողի ասածները փոքրիկ Իդայի մտքիցը չէին ելնում։ Պառկելու ժամանակ ուղղուեց դէպի պատուհանը, ուր գտնուում էին մայրիկի հիանալի ծաղիկները՝ յակինթ-ծաղիկներն ու կակաչները, և նրանց ականջին փսփսաց.

—Ես գիտեմ, դուք այս երեկոյ պարահանդէս պիտի գնաք։

Ծաղիկները այնպէս ձեւացրին, իբրեւ թէ ոչինչ չէին հասկանում ու իրանց մի տերեւն անգամ չը շարժեցին։ Բայց Իդա հաստատ համոզուած էր, թէ նրանք գիշերը պարելու են։

Երբ պառկեց, անկողնում երկար մտածեց, թէ որքան մեծ հաճոյք էր տեսնել ծաղիկների՝ թագաւորի դղեակում պարելը։ «Արդեօք իմ ծաղիկներն էլ այնտեղ գնացել են» մրմնջաց ու խկոյն և եթ ընեց։ Նա երազեց ծաղիկների և ուսանողի մասին։ Իդայի պառկած սենեակը բոլորովին լուռ էր. մի կանթեղ վառւում էր սեղանի վրայ ու հայրիկն ինչպէս մայրիկը քնում էին։

«Ո՞րչափ կը ցանկայի իմանալ, թէ իմ ծաղիկները Սոֆիի անկողնումն են արդեօք թէ ոչ. այո, շատ կը ցանկայի», մտածեց Իդա։

Նա անկողնի մէջ նստեց, և հայեացքը գցեց կիսաբաց դռան վրայ։ Ուշադրութեամբ մտիկ արեց... բայց այն ինչ էր. իրեն թուաց թէ սրահում մէկը նուագում էր դաշնակի վրայ չափազանց մեղմօրէն և այնչափ բաղցր՝ որ նա երբէք այդպիսի բընքուշ եղանակ չէր լսել։

—Անկասկած, ծաղիկները պարում են. ախ, Աստուած իմ. որքան կը ցանկայի նրանց պարը տեսնել, բացագանչեց Իդա անհամբեր։

Բայց նա չը համարձակուեց բոլորովին վեր կենալ. վախեցաւ որ մի գուցէ հայրիկն ու մայրիկը զարթնեն։

«Ա՜խ, եթէ ծաղիկները խելք անեն ու սենեակս մտնեն», մտածեց նա։ Բայց ծաղիկները ներս չը մտան ու երաժշտութիւնը շարունակւում էր քնքշաբար։ Փոքրիկ Իդան էլ չը կարողացաւ համբերել. խելքը գլխից դնում էր. անկողնից վայր թռաւ, ոտքի մատների վրայ քայլելով գնաց դէպի դուռը և սրահի մէջ դիտեց։ Օ՜, Աստուած իմ, որքան հրաշալի էր տեսածը։

Իրաւ, կանթեղ կամ ճրագ չը կար, բայց ամեն ինչ պայծառ էր երևում։ Լուսնեակի շողերը, պատուհանից ընկնում էին տախտակամածի վրայ. այնտեղ ամեն բան պարզ տեսնւում էր ինչպես ցերեկ ժամանակ։ Բոլոր յակնթածաղիկներն ու կակաչները՝ երկու երկար շարքերի վրայ ոտքի կանգնել էին. բոլոր ծաղկամանները դատարկ էին. պատուհանի եզերքին ոչ մի ծաղիկ չէր մնում։ Բոլորը իջել էին ցած և սիրուն կերպով պարում էին տախտակամածի վրայ. նրանք իրար խոնարհութիւններ էին անում և միմեանց երկար, կանաչ տերևներից բռնելով շուրջպար էին կազմում։ Դաշնակի առաջ նստել էր մի մեծ դեղին շուշան, որին հետ փոքրիկ Իդան ծանօթացել էր ամառը. նա շատ լաւ էր յիշում, նոյն իսկ ծանօթացումի ժամանակ արտասանուած խօսքերը։

—Տես այս շուշանը, որչափ նմանում է օրիորդ Կարօլինին, ասել էր ուսանողը։ Ամենքը դրա համար ծաղրել էին ուսանողին, բայց փոքրիկ Իդան տեսաւ, որ մեծ դեղին ծաղիկը իսկապես նման էր այդ օրիորդին։ Դաշնակ ածելու ժամանակ, դեղին շուշանը միևնոյն շարժումներն անում

էր, ինչ որ օր. Կարօլինը։ Նա կռացնում էր իր երկար, դեղին դէմքը, երբեմն այս, երբեմն այն կողմ, և իր գլխով չափ էր տալիս։ Ծաղիկներից ոչ մինը նկատել էր փոքրիկ Իդային։ Նա այնուհետև նշմարեց մի մեծ կապոյտ քրքում, որ խաղալիքների սեղանի մէջտեղ վեր վեր էր թռնում. քրքումը դնաց բաց արաւ տիկնիկի անկողնու վարագոյրը։ Հիւանդ ծաղիկները այնտեղ պառկել էին. նրանք անմիջապես վեր կեցան և գլխով նշան արին միւս ծաղիկներին, թէ իրանք էլ ուզում էին պարել։ Նրանք իրանց նախկին զուարթ կերպարանքն ստացան և միւսներին խառնուելով անչափ ուրախացան։

Յանկարծ, սեղանից մի բան ընկաւ։ Իդա նայեց. գաւազանն էր, որ վայր նետուեց, որպէս զի ինքն էլ ծաղիկների զուարճութեան մասնակցի։ Նրա վրայ հեծել էր, մեծ ու լայն գլխարկ կրող մի մեղրամոմեայ տիկնիկ։ Գաւազանը ծաղիկների մէջտեղ մի մազուրկա պարեց. փոքրիկ Իդան իր ծիծաղը չը կարողացաւ զսպել. գաւազանը շարունակեց պարել... Բայց, Իդայի խաղալիքների դարակից՝ մէկը սկսեց ուժ-

գնութեամբ բաղխել։ Անուշահոտութիւնների տուփի վրայ գտնուող մարդը վազեց մինչև սեղանը և մի քիչ բաց արեց դարակը։ Ցանկարծ Սոֆին վեր կացաւ և բոլորովին զարմացած՝ իր շուրջը դիտեց.

—Ի՞նչ, այստեղ պարահանդէս կայ. ինչու համար ոչ ոք ինձ լուր չի տուեց, ասաց նա։

—Ձէ՛ք հաճիր ինձ հետ պարել, առաջարկեց անուշահոտութիւնների տուփի մարդը.

—Ֆո՛ւ, ի՞նչ էլ կավալէր, հեգնեց նա և երեսը նրանից շուռ տուեց։

Նա դարակի վրայ նստեց, և սպասեց որ ծաղիկներից մինը գայ իրան պարի հրաւիրելու։ Բայց նրանցից ոչ մինը չը ներկայացաւ։ Ուշադրութիւն գրաւելու համար նա շատ հազաց, շատ «ըհ՞ը, ըհ՞ը» արեց, բայց իզուր. ոչ մի ծաղիկ չը մօտեցաւ նրան։ Որովհետև ոչ մի ծաղիկ ուշ չը դարձրեց նրան։ Այն ժամանակ Սոֆի դիտմամբ դարակից տախտակամածի վրայ գցեց իրան։ Բոլոր ծաղիկները վազեցին նրա մօտ և հարցրին թէ արդեօք նրա մի տեղը ցաւել էր. ամենքն էլ շատ ազնիւ վարուեցին, մանաւանդ այն երկու ծաղիկները, որ

իր անկողնում պառկել էին։ Նա պատասխանեց, որ ոչ մի ցաւ չէր զգացել։ Իդայի ծաղիկները նրան շնորհակալութիւն յայտնեցին նրա փափուկ անկողնու համար և նրան առաջնորդեցին սրահի մէջտեղ, ուր փայլում էր լուսինը և սկսեցին պարել նրա հետ։ Բոլոր միւս ծաղիկները շրջանակ կազմեցին նրանց դիտելու համար։ Սոֆին, ուրախացած՝ նրանց ասաց.

—Այսուհետև կարող էք անկողնի մէջ պառկել, իսկ ես միևնոյն է, կը քնեմ դարակում։

—Սրտանց շնորհակալ ենք. մենք չենք կարող երկար տպրել։ Վաղը արդէն մեռած կը լինենք։ Բայց, ասա, փոքրիկ Իդային, որ մեզ թաղէ պարտիզում, այն տեղ, ուր թաղուած է փոքրիկ դեղձանիկը։ Ամառը մենք յարութիւն կառնենք և աւելի գեղեցկացած կը գանք ձեզ մօտ, պատասխանեցին ծաղիկները։

—Ո՛չ, ես չեմ ուզում որ դուք մեռնէք, գոչեց Սոֆին և համբուրեց նրանց։

Բայց, նոյն րոպէին մեծ սրահի դուռը բացուեց և մի խումբ հիանալի ծաղիկներ պարելով ներս մտան։ Իդա չէր կարողանում հասկանալ թէ ո՞րտեղից էին գալիս,

Անկասկած, նրանք՝ բոլորը՝ թագաւորական պարտիզի ծաղիկներն էին։ Նրանց առջևից քայլում էին փոքրիկ ոսկեայ թագեր կրող երկու փալփլուն ծաղիկներ—դրանք թագաւորն ու թագուհին էին։ Նրանց ետևից գալիս էին ամենասիրուն շահպրակներն ու ամենագեղեցիկ շահոքրամները, որոնք աջ ու ձախ իրանց շուրջը բարևում էին։ Նրանց ընկերանում էր մի նուագախումբ։ Մեծ խաշխաշներն և պեոնիաները այնքան ուժով փչում էին իրանց տերևեայ փողերի մէջ, որ նրանց դէմքը կարմրել էր. կապոյտ յակինթածաղիկներն և փոքրիկ ձնծաղիկները այնպէս զանգահարում էին, կարծես իսկական զանգակիկներ կրելիս լինէին։ Երևելի երաժշտութիւն էր. միւս բոլոր ծաղիկները նոր խմբին միացան և մի ընդհանուր պար սկսուեց. ամենքը միմեանց համբուրեցին։ Զմայլելի տեսարան էր։

Այնուհետև, ծաղիկները իրար բարի գիշեր մաղթեցին և փոքրիկ Իդան մտաւ մեղմով անկողին, ուր նա երազեց իր տեսած բոլոր բաների մասին։ Հետևեալ օրը, երբ վեր կացաւ, վազեց դէպի փոքրիկ սեղանը, տեսնելու համար որ հիւանդ ծաղիկները այն-

տեղ էին։ Նա բաց արեց փոքրիկ անկողնու վարագոյրները. երկուսն էլ այնտեղ էին, բայց աւելի թառամած քան նախորդ օրը։ Սոֆին պառկած էր դարակում, միևնոյն տեղը և խոր քնի մէջ էր երևում։

—Կարո՞ղ ես ինձ պատմել քո տեսածների մասին, հարցրեց փոքրիկ Իդան։

Բայց Սոֆին բոլորովին զարմացած երևոյթ ունէր և մի բառով անգամ չը պատասխանեց։

—Դու բարի չես, ասաց Իդա. չէ՞ որ նրանք ամենքը քեզ հետ պարեցին։

Նա այնուհետև վերցրեց թղթէ մի փոքրիկ տուփ, ուր գտնուում էին գեղեցիկ թռչունների պատկերներ, և մեռած ծաղիկներին դրաւ նրա մէջ։

—Ահաւասիկ ձեր սիրուն, փոքրիկ դագաղը։ Երբ իմ փոքրիկ հօրեղբօր որդիները ինձ մօտ գան, ձեզ կը թաղենք պարտիզում, որպէս զի ամառը յարութիւն առնէք ու մեզ մօտ վերադառնաք աւելի գեղեցկացած, ասաց Իդա։

Իդայի հօրեղբօրորդիները երկու զուարթ երեխաներ էին, մէկի անուն էր Յոզեան, միւսինը Ադոլֆ։ Նրանք իրանց հօրից մի մի

կապարճ նուէր էին ստացել և բերել էին Իդային ցոյց տալու համար։ Փոքրիկ Իդան նրանց պատմեց խեղճ մեռած ծաղիկների պատմութիւնը և թաղման հանդիսին հրաւիրեց։ Երկու երեխաները, կապարճները ուսին դցած, դլխիկոր ընթանում էին առաջից. իսկ փոքրիկ Իդան նրանց ետևից դալիս էր ձեռքին բռնած սիրուն դագաղը։ Դագաղում էին մեռած ծաղիկները։ Պարտիզում մի փոքրիկ փոս փորեցին։ Իդա՝ ծաղիկներին հրաժեշտի մի վերջին համբոյր տալուց յետոյ, դագաղն իջեցրեց փոսի մէջ։ Որովհետև ոչ հրացան ունէին և ոչ էլ թընդանօթ, սգոյ երկու նշան՝ Ադոլֆ և Ցովհան գերեզմանի վրայ կապարճի մի մի հարուած արձակեցին։

ՍՈԽԱԿԸ

Չինաստանում, դուք անշուշտ լաւ գիտէք, կայսրը մի չինացի է, և նրան բոլոր չինացիները՝ նոյնպէս չինացի են։ Շատ ուրիշ առաջ—լաւ լսեցէք այս պատմութիւնը, որպէս զի շուտով չը մոռանաք—կայսրի դղեակը՝ աշխարհի ամենաշքեղ դղեակն էր. նա, ամբողջապէս յախճապակուց էր շինուած՝ այնքան թանկագին, այնքան դիւրաբեկ ու քնքոյշ յախճապակուց, որին կարելի չէր մատով նոյն իսկ դիպչել։ Պարտիզում կային աշխարհի ամենահրաշալի ծաղիկները. նրանցից ամենագեղեցիկները կրում էին արծաթեայ փոքրիկ զանգակներ, որոնք ամեն անգամ, երբ մէկն անցնում էր պարտիզից, հնչում էին, որպէս զի նա չը մոռանար նայել ծաղիկներին։ Այո՛, ինչ որ կար կայսրի պարտէզում, շատ սիրուն կեր-

պով զարդարուած էր։ Ու այդ պարտէզը տարածւում էր այնքան հեռու, այնքան հեռու, այնքան հեռու, որ պարտիզպանն անգամ, նրա ծայրը չէր տեսել բնաւ։ Գնալով առաջ, մի՛շտ դէպի առաջ, մարդ հասնում էր բարձր ծառերով և սիրուն լիճերով զարդարուած մի հոյակապ անտառի։ Այդ անտառը ձգւում էր մինչև ծովը, որ շատ կապոյտ ու շատ խոր, ծեծում էր նրա ափերը։ Մեծ նաւեր՝ կարող էին եղերքին մօտենալ, համարեա մտնել բարձրաբերձ ծառերի շուաքի տակ։

Մի սոխակ, ալիքների վերև կախուած ճիւղերից մէկի վրայ բոյն էր դրել, ու այնչափ հրաշալի կերպով էր երգում, որ՝ աղքատիկ ձկնորսները՝ թէպէտև ապրուստի ծանր մտահոգութիւններով լցուած՝ փոխանակ իրանց ուռկանները ջրից հանելու, կանգ էին առնում գիշերը և լսում սոխակին։

—Ա՜խ, Աստուած, ինչ գեղեցի՛կ է, ասում էին նրանք։

Այնու հանդերձ, նրանք ստիպուած լինելով իրանց աշխատանքին խորհելու, ակամայ հրաժարւում էին թռչնիկի երգից։ Բայց հեռաւեալ գիշերը, նորից կանգ էին առնում և կրկին բացագանչում էին.

—Ա՜խ, Աստուած, որքան գեղեցի՛կ է։

Աշխարհի ամեն երկիրներից, ճանապարհորդները ուղղւում էին դէպի կայսրի քաղաքը։ Ամենքը զարմացած էին մնում դէղակը և պարտիզը տեսնելով, բայց երբ լսում էին սոխակի երգը, ամենքը ասում էին.

—Ահա՛ ինչ որ ամենից հրաշալի է։

Ու ճանապարհորդները, վերադառնալով իրանց երկիրները, պատմում էին իրանց տեսած բոլոր հրաշալիքների մասին։ Գիտունները բաղաքի, դղեակի ու պարտիզի մասին գրքեր շարադրեցին։ Սոխակին կարելի էր մոռանալ. նա չը մոռացուեց ու ընդհակառակը այդ շարադրութիւնների մէջ նա լաւագոյն տեղը գրաւեց. նրանք, որոնք գիտէին ոտանաւոր գրել, մեծ լճի մօտ գեղեղող անտառի սոխակին ի պատիւ փայլուն քերթուածներ յօրինեցին։

Այդ գրքերը տարածուեցին ամեն կողմ, և նրանցից մի քանիսը հասան մինչև իսկ կայսրի ձեռքը։ Նա, այն ժամանակ, մի ոսկեայ աթոռի վրայ բազմեց և սկսեց նրանց

կարդալ։ Ամեն բոպէ նա թափ էր տալիս գլուխը, այնքան հիացած էր դղեակի, քաղաքի և պարտէզի գեղեցիկ նկարագրութիւններից։ «Բայց, անկասկած, այդ բոլորի մէջ սոխակը ամենից հրաշալին է» ասում էին գրքերը։

—Էդ ինչ բան է, էդ սոխակը, ասաց կայսրը։ Ես նրան չեմ ճանաչում։ Ուրեմն, իմ կայսրութեան, նոյն իսկ իմ պարտիզի մէջ մի այդպիսի թռչուն է գտնուում։ Եւ ես նրա մասին ոչինչ չեմ լսել երբէք, ու գրքերն է, որ ինձ յայտնում են նրա գոյութիւնը։

Ցեռոյ նա կանչեց իր թիկնապահին։ Սա այնքան հպարտ մարդ էր, որ, ամեն անգամ, երբ մի ստորադաս պաշտօնեայ համարձակում էր նրան խօսք ուղղել, նա չէր հաճում պատասխանել. «Փուհ», ասում էր միայն. ինչ որ ոչ մի իմաստ չունի։

—Այստեղ մի շատ հետաքրքիր թռչուն կայ եղել, որին անուանում են սոխակ, ասաց կայսրը. գրում են, որ իմ բովանդակ կայսրութեան մէջ, դրանից գեղեցիկ ոչինչ կայ։ Ինչու համար ոչ ոք մի բան չէ յայտնել ինձ նրա մասին։

—Ես ինքս էլ նրա մասին ոչինչ չեմ լսել բնաւ, պատասխանեց թիկնապահը։ Նա արքունիք ներկայանալու պատիւը չէ ունեցել երբէք։

—Պէտք է որ, այս երեկոյ, նրան ներկայացնէք ինձ և նա երգէ իմ առաջ, ասաց կայսրը։ Ամեն մարդ իմ տիրացած դանձերին ծանօթ է, մինչդեռ ես ոչինչ չը գիտեմ նրանց մասին։

—Ես նրա մասին ոչինչ չեմ լսել երբէք, կրկնեց թիկնապահը, բայց կը փնտռեմ և կը գտնեմ։

Բայց որտեղից պէտք է գտնէր։

Թիկնապահը բարձրացաւ և իջաւ բոլոր սանդուղներից, անցաւ նրբանցքներից և սրահներից, պատահած անձերին հարցուփորձ արեց, բայց ոչ ոք տեղեկութիւն ունէր սոխակի մասին։

Նա վերադարձաւ ուրեմն կայսրի մօտ և ասաց, որ իրանց գրքերում այդ բանը գրող մարդիկ, անշուշտ մի հէքիաթ էին ուզեցել պատմել.

—Ձերդ կայսերական վեհափառութիւնը անկարող է երևակայել, թէ մարդիկ ինչ ինչ բաներ են գրում, Աստուած իմ, ինչ

բաներ գրում։ Նրանց ամեն գրածները պարզ յերիւրանքներ և ցնորամտութիւններ են։

—Բայց, այն գիրքը՝ որտեղ ես այդ կարդացի, ասաց կայսրը, Ճաբոնի հզոր կայսրի կողմից է ինձ ուղարկուած. հետևաբար ստութիւններ չի կարող պարունակել։ Պէտք է որ սոխակին լսեմ։ պէտք է որ այս գիշեր իսկ նա այստեղ լինի. ես նրան շնորհում եմ իմ բարձր հաճութիւնը. ու եթէ նա այստեղ չը լինի, կը հրամայեմ որ, ընթրելուց յետոյ, բոլոր պալատականներին փորի վրայ կոխոտեն։

—Ջինկ-պէ՛, ասաց թիկնապահը, և նորից սկսեց բարձրանալ և իջնել սանդուղներից, անցնել նրբանցքներից և սրահներից. պալատականների կէսը նրան հետևեցին, որովհետև նրանք մագի չափ անգամ ցանկութիւն չունէին, որ իրանց լեցուած, տկուած փորի վրայից քայլեն։

Որքան հարցեր տուին նրանք հրաշալի սոխակի մասին, որին, բացի պալատականներից արար-աշխարհ ճանաչում էր։

Վերջապէս, նրանք խոհանոցում մի խեղճ, փոքրիկ աղջկայ պատահեցին որ ասաց.

—Օ՜հ, Աստուած իմ, ես լաւ եմ ճանա-

չում սոխակին։ Որչա՜փ գեղեցիկ է նա երգում։ Ինձ թոյլ տուին, ամեն երեկոյ, իմ հէգ հիւանդ մօր տանել սեղանի աւելցուքը. իմ մայրը բնակւում է հեռուն, ծովափի մօտ, ու երբ ես տուն եմ գնում, հանգչում եմ մի քիչ անտառում և լսում եմ սոխակի դայլայլիկը։ Ցաճախ աչքերս լեցւում են արտասուքով, որովհետև նրա երգը ինձ այնքան հաճոյք է պատճառում, որքան իմ մօր համբոյրը։

—Փոքրիկ խոհարարուհի, ասաց թիկնապահը, ես քեզ պաշտօնական խոհարարուհի կը դարձնեմ, և թոյլատուութիւն կը շնորհեմ դիտել կայսրի ճաշելը, եթէ դու կարողանաս մեզ սոխակի մօտ առաջնորդել, որովհետև նա այսօր երեկոյթի է հրաւիրուած արքունիքում։

Նրանք մեկնեցան դէպի անտառ, ուր սովորաբար երգում էր սոխակը։ Ճանապարհի մէջտեղում, մի կով սկսեց բառաչել.

—Օ՜հ, ահաւասիկ նա, ասաց թիկնապահը։ Ի՜նչ ուժեղ ձայն, մի փոքրիկ թռչնի համար։ Ինձ թւում է, հոգիս վկայ, որ այդ ձայնը ես արդէն լսել եմ։

—Ո՜չ, դրանք կովերն են, որ բառաչում

են, ասաց փոքրիկ խոհարարուհին։ Մենք սոխակից հեռու ենք գտնուում տակաւին։

Ճահիճի դորտերն սկսեցին կռկռալ։

—Ա՜խ Աստուած, այս որքան գեղեցիկ է, ասաց արքունական մատռապետը։ Ես լսում եմ մեծ յափշտակութեամբ։ Այս ձայնը նոյնքան ներդաշնակ է, որքան եկեղեցու փոքրիկ զանգակների զօղանջը։

—Ո՛չ, դրանք դորտերն են, ասաց փոքրիկ խոհարարուհին, բայց կարծում եմ որ մենք նրան շուտով կը լսենք։

Ու ահա և սոխակը, որ սկսում է երգել։

—Նա է, ասաց փոքրիկ աղջիկը։ լսեցէք, լսեցէք։

Ու նա մատով ցոյց էր տալիս մի փոքրիկ, մոխրագոյն թռչուն ճիւղերի մէջ, վերևում։

—Կարելի՞ բան է, բացականչեց թիկնապահը, ես նրան երբէք այդպէս չէի երևակայում։ Ի՞նչ պարզ կերպարանք։ Նա անշուշտ իր գոյնը նետել է, այսքան մեծ անձնաւորութիւններից շրջապատուած տեսնելով իրան։

—Փոքրիկ սոխակ, գոչեց փոքրիկ խոհարարուհին, մեր շնորհաշուք կայսրը փափագում է որ դուք երգէք նրա առաջ։

—Մեծ հաճոյքով, պատասխանեց սոխակը։

Ու սկսեց երգել։

—Սա մի ճշմարիտ նուագարան է, ասաց թիկնապահը։ Ու տեսէք, տեսէք, ինչպէս նա բաց է անում իր փոքրիկ կոկորդը։ Տարօրինակ բան, ի՞նչպէս եղել է, որ մենք մինչև այսօր նրան չենք լսել։ Նա մեծ յաջողութիւն կունենայ արքունիքում։

—Կայսրի առաջ մի անգամ էլ երգե՞մ, հարցրեց սոխակը, կարծելով որ նորին վեհափառութիւնը այնտեղ ներկայ էր։

—Իմ փոքրիկ սիրուն սոխակս, ասաց թիկնապահը, այս երեկոյ, պատիւ ունեմ ձեզ խնջոյքի հրաւիրելու արքունիք, ուր դուք ձեր հիանալի երգով պիտի սքանչացնէք նորին վեհափառութիւնը։

—Ամեն տեղից աւելի, կանանչների մէջտեղ է լաւ հնչում իմ երգը, բայց ես յօժարակամ պիտի գնամ կայսրի մօտ, քանի որ նա ցանկանում է։

Դղեակում արտակարգ պատրաստութիւններ էին տեսնել։ Ճախճապակեայ պատերն ու պատուհանները փոփողում էին բիւրաւոր ոսկեայ լամբարների ճառագայթ-

ների տակ. գեղեցկագոյն զանգակիկնե-
րով զարդարուած չքեղ ծաղիկները նը-
բանցքներն էին պճնում։ Անց ու դարձից,
իրարանցումից՝ օդի մի կրկին հոսանք հաս-
տատուեց, որ բոլոր զանգակիկները ճօճեց-
րեց և միմեանց խօսակցութիւնը լսելու ար-
դելք եղաւ։

Մեծ սրահի մէջտեղում, որտեղ կայսրը
նստել էր, սոխակի համար մի ոսկեայ գա-
ւազան էին զետեղել։ Ամբողջ արքունիքը
ներկայ էր. փոքրիկ խոհարարուհին էլ թոյլ-
տուութիւն էր ստացել դռան բացուածքից
դիտելու, որովհետև նա կրում էր այժմ կայ-
սերական խոհարարուհու պաշտօնական տիտ-
ղոսը։

Ամենքը չքուել, զարդարուել, իրանց
պաշտօնական համազգեստներն էին հագել։
Ամենքի հայեացքը սևեռուել էր փոքրիկ, մոխ-
րագոյն թռչնիկի վրայ, որին կայսրը՝ միշտ
հաւանութեան նշաններ էր անում գլխով։

Ու սոխակը երգում էր այնքան հիա-
նալի կերպով, որ կայսրի աչքերն արտասու-
քով լեցուեցին։ Այո՛, կայսրի այտերից ար-
տասուքը հոսում էր ու սոխակը գեղգե-
ղում էր հետզհետէ աւելի ոգևորուած։ Նրա
ձայնը կայսրի մինչև սրտի խորերն էր թա-

փանցում։ Ու կայսրն այնչափ բաւական էր,
որ ցանկացաւ իր ոսկեայ վզնոցը կախել
նրա վզից։ Բայց սոխակը մերժեց, յայտնե-
լով որ իր վարձատրութիւնը արդէն շատ
մեծ էր եղել։

— Ձեր աչքերում ես արտասուքը
տեսայ, ասաց նա. այդ ինձ համար մեծա-

գոյն դանձ է։ Մի կայսրի արտասուքները
մասնաւորապէս թանգ արժեն։ Ստացած
գիտէ, որ բաւականաչափ վարձատրուած եմ։

Ու այդ ասելով կրկին սկսեց իր քաղցր
գեղգեղանքը։

Ի՞նչ գրաւիչ նազանք, ասաց տիկին-
ներից իւրաքանչիւրը։

Ու սոխակին նմանուելու համար նրանք
իրանց բերանը ջրով լցրին, որպէս զի մէկը

նրանց հետ խօսելու ժամանակ նրանք կկկլացնեն, իրանց ձայնը խաղցնեն։ Սպասաւորներն ու սենեկապետներն էլ չափազանց գոհ մնացին, ինչ որ մեծ բան է, որովհետև այդ մարդիկը աշխարհի ամենադժուարահաճ անձերն են։

Կարճ խօսքով, սոխակի յաջողութիւնը կատարեալ էր։

Այդ օրուանից սկսած՝ նա հարկադրուեց ապրել արքունիքում։ Նրան մի վանդակ յատկացրին և թոյլտուութիւն շնորհեցին, որ օրը երկու, և դիշերը մի անգամ դուրս գայ ու զբօսնէ։ Նրան ընկերանում էին այնուհետև տասներկու ծառայ, որոնց իւրաքանչիւրը նրա ոտքին մետաքսէ մի ժապաւէն ունէր կապած և մեծ հոգս էր կրում, որ ժապաւէնը ձեռքից բաց չը թողնէ։ Այդ տեսակ զբօսանքը, ի հարկէ, շատ էլ ախորժելի չէր։

Ամբողջ քաղաքը, այնուհետև հրաշալի թռչունի մասին միայն խօսեց. խօսակցութեան առարկան նա էր, միայն նա։ Երբ երկու անձ իրար մօտ էին գալիս, մին ասում էր անմիջապէս. «Սո...,» ու խօսքը վերջացնելուց առաջ, միւսը արդէն արտասանում

էր «խակը» ու այդքանը բաւական էր, որ նրանք իրար հասկանային։

Հասարակութեան մէջ սոխակի վայելած յարգը այնչափ մեծ էր, որ տասնըմէկ երշկավաճառ իրանց որդուն անունը Սոխակ դրին, թէպէտև նրանց կոկորդը ոչ մի ներդաշնակ խաղ կարող չէր արտաբերել։

Մի օր կայսրը մի մեծ ծրար ստացաւ, որի վրայ գրուած էր «Սոխակ»։

—Ահաւասիկ մի նոր գիրք, անշուշտ մեր նշանաւոր թռչունի մասին, ասաց նա։

Բայց գրքի փոխարէն նա գտաւ մի փոքրիկ մեքենական առարկայ, տուփի մէջ։ Դա մի արհեստական սոխակ էր, որ պէտք է նմանուէր կենդանի սոխակին։ Նա ադամանդներով, յակինթներով և շափիւղաներով ամբողջապէս ծածկուած էր։

Երբ մեքենան լարեցին, սկսեց ճշմարիտ սոխակի երգած կտորներից մին երգել։ Երգած ժամանակ նա իր պոչն էր շարժում, որի վրայ ոսկին ու արծաթը փայլփլում էին։ Վզի շուրջը մի ժապաւէն էր կրում այս արձանագրութեամբ. «Ճաբոնի կայսրի սոխակը՝ չինական կայսրի սոխակի հետ բաղդատած՝ աղքատիկ է»։

—Հիանալի՜ է, ասացին բոլոր պալատականները։

Ու այն անձը, որ բերել էր արհեստական թռչունը, նորին կայսերական վեհափառութեան գլխաւոր սոխակամատոյցի տիտղոսն ստացաւ։

Նրանց՝ միասին երգել տուէք. գեղեցիկ զուգերգ (դուէտ) կը կազմեն, ասաց կայսրը։

Ու նրանց միասին երգել տուին. բայց զուգերգը չէր էլ յաջողւում բնաւ, որովհետև ճշմարիտ սոխակը երգում էր իր բնական ներշնչման համաձայն, մինչդեռ միւսը հնազանդւում էր մեքենական գլանների շարժման։

—Ցանցանքը սրանը չէ, ասաց արքունական նուագախմբի պետը, արհեստական սոխակին ցոյց տալով, որովհետև նա կատարելապէս չափով է երգում և ասես, թէ իմ եղած դպրոցում է պատրաստուած։

Նրան մենակ երգել տուին։ Նա նոյնքան յաջողութիւն ունեցաւ, որքան իսկական սոխակը։ Նա աւելի հաճոյատեսիլ էր, որովհետև փայլում էր պալատական կանանց

ապարանջանների և մեծ գնդասեղների նման։

Նա՝ մի և նոյն կտորը եռեսուն և երեք անգամ երգեց ու առանց ամենաթեթև յոգնութեան։ Նրա ունկնդիրները ցանկանում էին նորից կրկնել տալ, բայց կայսրը մտածեց թէ օրինական էր հերթը տալ կենդանի սոխակին... Բայց ո՞ւր էր նա։ Ոչ ոք նկատել էր, որ նա պատուհանից թռչել էր վերադառնալու համար իր գալարաղարդ անտառը։

—Այս ի՞նչ բան է, ասաց կայսրը. բոլոր պալատականները զայրոյթից մռլտում էին ու սոխակին «ապերախտ» էին անուանում։

—Բարեբաղդաբար, երկուսից լաւագոյնը այստեղ է, ասացին նրանք. ու մի և նոյն կտորը արհեստական թռչունին եռեսուն և չորրորդ անգամ երգել տալով մը-խիթարուեցին։

Այդ պարտները չը կարողացան սակայն, այդքան կրկնութիւնից յետոյ, եղանակը անգիր իմանալ, որովհետև շատ դժուար էր։

Ու նուագախմբի պետը բառ չը գտաւ

գովելու համար արհեստական թռչունին։ Նա շատ ու շատ էր գերազանցում իսկական սոխակը, ոչ միայն իր արտաքին տեսքով, այլ և ներքին կազմակերպութեամբ։

—Որովհետև, տեսնում էք, ձերդ պայծառափայլութիւններ և դուք մեծ կայսր, ամենից առաջ, իսկական սոխակի երգի չափը չէ կարելի երբէք նախապէս հաշուել. բայց արհեստական թռչնի երգի մէջ ամեն ինչ նախապէս որոշ է ու հաշուած։ Կարելի է բացատրել, բանալ նրան, ցոյց տալ, թէ ո՞րտեղ են գտնուում գլանները, ինչպէս են դառնում, և շարժումները ինչ եղանակով իրար յաջորդում են...

—Մենք էլ նոյն կարծիքին ենք, ասացին ամենքը, ու նուագախմբի պետը՝ թոյլաւութիւն ստացաւ ցոյց տալ թռչունը ժողովրդին՝ յաջորդ կիրակի օրը։ Կայսրը նոյն իսկ հրամայեց, որ սոխակին երգել տան։ Բոլոր ունկնդիրները այնչափ ոգևորուեցին, կարծես թէյով հարբած լինէին, ինչ որ սովորական է նրանց մէջ. ու ամենքը գոչեցին միաժամանակ «ՕՀ», բարձրացնելով իրանց ցուցամատն ու շարժելով իրանց գլուխը։

Բայց աղքատիկ ձկնորսները, որ ճշմարիտ սոխակին լսել էին, ասացին։

—Սիրուն է, եղանակները նման են, բայց մի ինչ որ բան է պակասում։

Իսկական սոխակը քաղաքից և կայսրութիւնից արտաքսուեց։ Արհեստական թռչունը՝ կայսրի անկողնու մօտ մետաքսեայ մի բարձի վրայ պատուոյ տեղ ստացաւ։ Նրան նուիրուած բոլոր ոսկեղէն զարդերն ու գոհարները նրա շուրջը ցուցադրուած էին։ Նա ստացել էր կայսերական մեծ երգիչի տիտղոսը և բաղմում էր կայսրի ձախ կողմը առաջին տեղում։ Կայսրը ամենապատուաւորն էր համարում այդ տեղը, որովհետև սիրտը ձախ կողմն էր գտնուում։ Դուք անշուշտ լաւ գիտէք, որ նոյն իսկ մի կայսրի սիրտը ձախ կողմումն է գտնվում։

Ու նուագախմբի պետը արհեստական թռչնի մասին քսանըհինգ հատորից բաղկացած մի գիրք շարադրեց. այդ գիրքը այնչափ երկար և այնչափ գիտնական ձևով էր կազմուած և չինական այնչափ դժուար բառերով էր խճողուած, որ ամեն մարդ յիմար չը համարուելու համար պարծենում էր թէ նրան կարդացել և հասկացել է։ Մի ամբողջ տա-

ըի այսպէս շարունակուեց։ Կայսրը, արքունիքը և չինական ամբողջ ժողովուրդը արհեստական թռչունի իւրաքանչիւր փոքրիկ «կլու, կլու»-ն բերան գիտէին։ Այս պատճառով էլ նրանց դուր եկաւ եղանակը, որովհետև կարող էին առանձին երգել կամ արհեստական սոխակի երգած ժամանակ ձայնակցել նրան։ Փողոցի երեխաները երգում էին «ցի՛, ցի՛, ցի՛, կլո՛ւ, կլո՛ւ, կլո՛ւ, կլո՛ւ» և կայսրը նրանց ձայնակցում էր։

Բայց մի երեկոյ, երբ մեքենական թռչունը ոգևորութեամբ երգում էր, և կայսրը՝ իր անկողնում, զմայլած մտիկ էր անում, յանկարծ սոխակի մարմնի մէջ լսուեց չաթ, յետոյ բռ-ռ-ռ-ու-ու. բոլոր անիւները արագ արագ պտոյտ տուին ու երաժշտութիւնը դադարեց։

Կայսրը՝ անկողնից վեր թռաւ և անմիջապէս լուր ուղարկեց պալատական բժշկին. բայց բժիշկը ոչինչ կարողացաւ անել։ Այնուհետև կանչեցին մի ժամագործի, որ՝ երկար շատախօսութիւնից և աւելի երկար քննութիւնից յետոյ, յաջողեցաւ, արդարև, բժշկել թռչունին. բայց պատուիրեց, որ նրան քիչ աշխատեցնեն, քիչ երգել տան,

որովհետև նա արդէն մաշուել էր և անկարելի էր նրա նման մի ուրիշը շինել։

Տխրութիւնը մեծ եղաւ։ Արհեստական թռչունին հաղիւ տարին մի անգամ երգել տալիս էին և այն էլ մեծ վախով։ Բայց նուագախմբի պետը իւրաքանչիւր անգամ անհասկանալի բառերով լիքը մի փոքրիկ ճառ արտասանեց, որով նա բացատրում էր թէ սոխակի երգը՝ աւելի քան երբէք անթերի, կատարեալ էր. և ամենքը հաւանութիւն էին տալիս։

Այսպէս անցաւ հինգ տարի, երբ յանկարծ երկիրը խոր տխրութեան մէջ ընկղմուեց։ Չինացիները շատ էին սիրում իրանց կայսրին։ Կայսրը հիւանդացաւ և ասում էին թէ նոյն իսկ մահամերձ է։ Նոր կայսրը ընտրել էին արդէն և ժողովուրդը հաւաքուել էր հրապարակներում։ Թիկնապահին հարցրին, թէ ինչպէս էր ծերունի կայսրի դրութիւնը։

—Փո՛ւհ, պատասխանեց նա գլուխը թափ տալով։

Կայսրը՝ տժգոյն ու սառը, պառկել էր իր մեծ, հիանալի անկողնում։ Ամբողջ արքունիքը նրան մեռած էր կարծում ու պա-

լատականներից իւրաքանչիւրը վազում էր ողջունելու նոր կայսրին։

Ծառաները՝ լուրն ամեն կողմ տարածեցին և սենեկապանուհիները առիթից օգտուելով՝ թեյի մի խնճոյք սարքեցին։ Նրբանցքներում և սրահներում, ամեն տեղ, գորգեր էին փռել բայլերի շշուկը խեղդելու համար։ Ամբողջ դղեակը լուռ էր և տխուր։

Բայց կայսրը մեռած չէր։ Նա՝ ժգոյն ու սառը պառկել էր միշտ թաւշեայ վարագոյրներով զարդարուած մեծ անկողնում։ Պատուհանից՝ լուսնի շողերը ընկնում էին նրա և նրա հովանաւորած թռչունի վրայ։ Հէդ կայսրը հազիւ կարողանում էր շնչել. նա նոյնքան ճնշուած էր, որքան եթէ մէկը՝ նրա կուրծքի վրայ կոխած լինէր։ Նա բացաւ աչքերը և տեսաւ որ Մահը իր ոսկեայ թագը գլխին էր դրել, մի ձեռքով բռնել էր իր սուրը և միւսով՝ իր շքեղ դրօշակը։ Շուրջը, թաւշեայ մեծ վարագոյրների ծալքերում նշմարեց գլուխներ, որոնց մի քանիսը ահռելի էին և մի քանիսը քաղցր ու ժպտուն։ Դրանք կայսրի բարի ու չար

գործերն էին, որոնք եկել էին նրա հոգեվարքի վերջին ժամին ներկայ գտնուելու։

—Ցիշում ես այս բանը, յիշում ես այն բանը, ասացին նրանք կամաց, իրար ետեւից։ Ու այնպիսի բաներ պատմեցին, որ կայսրի ճակատից քրտինքն սկսեց վազել։

—Ես այդ բաների մասին տեղեկութիւն չունեմ, ասաց կայսրը։ Երաժշտութիւն, երաժշտութիւն. շուտով թող բերեն չինական մեծ տամ-տամը, ծնծղան. թող ածեն, որ այլ ևս չը լսեմ այդ բոլորի ասածները։

Ու տարօրինակ դէմքերը շարունակեցին իրանց խօսքերը, որոնց հաւանութիւն էր տալիս Մահը գլխի շարժումներով։

— Երաժշտութիւն, երաժշտութիւն, կրկնեց կայսրը։ Դու, ոսկեայ փոքրիկ թռչուն. երգէ, երգէ շուտով։ Ես քեզ ինչպէս ոսկի ու այնչափ ադամանդ եմ տուել, ես քո վզից կախել եմ նոյն իսկ իմ ոսկեայ թանկագին վզնոցը։ Երգ երգելու ։

Բայց թռչունը մնում էր համր։ Նրան լարող չը կար ու առանց դրան նա ձայն չունէր։

Ու Մահը շարունակում էր իր աչքի

դատարկ խորշերը շուռ տալ դէպի կայսրը։ Ու լուսինը երկարաձգւում էր ճնշող, սարսափելի։

Այն ժամանակ, յանկարծ, պատուհանի մօտ լսուեց մի դիւթիչ երգ. անտառի փոքրիկ սոխակն էր, որ գեղգեղում էր մի ճիւղի վրայ։ Նա լսել էր կայսրի հիւանդութիւնը և եկել էր նրան յոյս ու սփոփանք տալու։ Նրա ձայնի հմայութեան շնորհիւ, խօսող դէմքերը հեռզհեռէ տժգունւում էին, արիւնը հեռզհեռէ աւելի արագ շրջադայում էր կայսրի թոյլ անդամներում և Մահը անգամ լսում էր և մրմնջում.

—Շարունակիր, փոքրիկ սոխակ, շարունակիր։

—Այո, պատասխանեց սոխակը, եթէ միայն դու կը համաձայնուես ինձ տալու կայսրի թագը, ոսկեայ գեղեցիկ սուրն ու շքեղ դրօշակը։

Ու Մահը՝ հեռզհեռէ սոխակին էր յանձնում թագը, սուրն ու դրօշակը մի մի երգի փոխարէն։ Ու սոխակը գեղգեղում էր ու գեղգեղում. նա երգում էր խաղաղ գերեզմանատունը, ուր սպիտակ վարդերն են բուսնում, ուր թմբին իր անուշահոտութիւնն

է տարածում, ուր թարմ խոտը կենդանի մնացողների արտասուքներով է թրջւում։

Ու Մահը՝ յանկարծ փափագ զգաց վերադառնալու իր պարտէզը. և, որպէս մի սառը և սպիտակ մշուշ՝ պատուհանից անհետացաւ։

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ասաց կայսրը։ Շնորհակալ եմ, երկնային փոքրիկ թռչուն. ես քեզ լաւ եմ ճանաչում։ Ես քեզ վռնտեցի իմ քաղաքից և իմ կայսրութիւնից, բայց դու բարի գտնուեցիր իմ անկողնու շուրջը պատող չար դէմքերին հալածելու. դու հեռացրիր Մահը իմ սրտից։ Ինչով կարող եմ քեզ վարձատրել։

—Դու արդէն ինձ վարձատրեցիր, ասաց սոխակը։ Ես քո աչքերից արտասուք խլեցի, առաջին անգամ երբ երգեցի։ Ես այդ երբէք չեմ մոռանայ. մի որ և է երգչի սրտին ադամանդներն են դիպչում, իսկ ինձ բաւական են արտասուքները։ Բաց այժմ դու քնիր, կաղդուրուելու և առողջանալու համար. ես կը շարունակեմ իմ երգը։

Ու մինչդեռ նա երգում էր, կայսրը խորասուզուեց քաղցր քնի մէջ, մի խաղաղ, բարերար քնի մէջ։

Երբ նա զարթնեց, արեգակը փայլում էր պատուհանի միջից։ Նա առողջ էր ու կենսալից։ Նրա ծառաներից ոչ մինը չէր եկել նրա մոտ։ Նրան միշտ մեռած էին կարծում։ Սոխակը միայն հաւատարմօրէն մնացել էր իր տեղում։

—Դու միշտ իմ մոտ կը մնաս, ասաց կայսրը. դու կերգես քո ուզած ժամանակ. ու ես՝ արհեստական թռչունը փշուր փշուր կանեմ քո առաջ։

—Խնայիր նրան, ասաց սոխակը. նա բարիք արեց իր կարողացածի չափ. պահիր միշտ նրան։ Իսկ ես, ոչ կարող եմ բոյն շինել, ոչ էլ բնակուել դղեակում։ Թոյլ տուր ինձ, գալ քեզ մոտ, իմ ուզած ժամանակ։ Երեկոյեան, քեզ զուարթացնելու և խորհրդածել տալու համար ես կը թառեմ քո պատուհանի մոտ, ճիւղի վրայ ու կերգեմ. կերգեմ թէ հարուստներին և թէ նրանց, որ տառապում են. կերգեմ բարին ու չարը, այն ամենը, ինչ քեզ անծանօթ է. որովհետև փոքրիկ թռչունը սլանում է ամեն տեղ, մինչև խրճիթը աղքատիկ ձկնորսի և գիւղացու, որոնք ապրում են քեզնից և քո արքունիքից հեռու, շատ հեռու։ Ես սիրում

եմ քո սիրտը, քո թագից աւելի, որքան էլ որ մի թագից երկնային ու սուրբ հոտ փչէ։ Ես կը գամ և կերգեմ, բայց խոստացիր ինձ միայն մի բան։

—Ամեն ինչ խոստանում եմ, պատասխանեց կայսրը, որ հագել էր իր կայսերական շորերը և սրտին էր սեղմում իր ոսկեայ սուրը։

—Միայն մի բան. ոչ ոքի մի պատմիր թէ դու ունես մի թռչնիկ, որ ամեն ինչ տեղեկացնում է քեզ։ Հաւատա՛ ինձ, ու կը տեսնես, թէ այդպէս աւելի լաւ պիտի լինի։

Ու սոխակը թռաւ։

Մի քոպէ յետոյ պալատականներն ու սպասաւորները ներս մտան, վերջին անգամ տեսնելու վախճանած կայսրին։

...Մինչդեռ նրանք ապշած մնացել էին, կայսրը նրանց պարզապէս ասաց.

—Բարի լոյս։

23 ՄԱՅԻՍ 1929 ԹՎԻՆ

ՎԵՐՋ

Յ Ա Ն Կ

	Անդէրսըն	5
I	Փոքրիկ աղջիկը և լուցկիները .	17
II	Սիսեռի վրայ պառկող իշխանուհին .	24
III	Հրեշտակը	27
VI	Մեծ դուքսի նոր հագուստները. .	34
V	Փոքրիկ կլօսն ու մեծ կլօսը . .	46
VI	Խոշոր ասեղը	71
VII	Ճանապարհորդութեան ընկերը .	80
VIII	Փոքրիկ Իդայի ծաղիկները . .	124
IX	Սոխակը	141

Գիրքն է — 50 կ.
կազմ. — 20 կ.
— 70 կ.

Մամուլի տակ է արդէն

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

գրողների, գրականութիւնների, գիտութիւնների, երկիրների և պատմական գործիչների — համաշխարհային, ռուսական, հայկական ու կովկասեան—պատկերներով, գեղանկար ծածկով, նմանողութեամբ Պաւլենկովի «Энциклопедическій Словарь» գրքի և Ֆրանս. «Dictionaire—Manuel Illustré des Littératures.»։ Հանրագիտական բառարանը, կարևոր օժանդակ ամեն մի գրագէտի համար, բաղկացած կը լինի աւելի քան 1000 էջերից։ Գինն է 4 ր. առանց ճանապարհածախսի։ Հրատարակութիւնից յետոյ 5 ր. առանց ճանապարհածախսի. Պէտք է դիմել հանրամատչելի գրադարանի հրատարակիչ Հ. Առաքելեանին, այս հասցէով. Թիֆլիս, խմբագրութիւն «Մշակի», Հ. Առաքելեան. Тифлисъ, А. Аракеляну. Редакція «Мшакъ».

ՀՀ Ազգային գրադարան
NL0398096

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

1627